ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ Ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ Ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

www.syuniacyerkir.am

...Ե՛ս եմ համայնը, եւ ամենքինն է պարփակված իմ մեջ:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, «ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ», ԲԱՆ ՀԲ, Բ

«Ներսես եւ Արսեն» ՍՊԸ տնօրեն Ներսես Ստեփանյանը տիկնոջ՝ «Շամբ-բիզնես» ՍՊԸ տնօրեն Ամալյա Ստեփանյանի հետ

Լուսանկարը՝ Ն. Դավթյանի

Շամբի ձեռնարկությունների կենարար հեւքը

Դրանցից մեկը՝ պահածոների գործարանը, պատրաստ է ընդունել (եւ այս օրերին ընդունում է) 250տ խնձոր: Մարզի գյուղացիներն առաջին անգամ հնարավորություն ունեն իրացնել խնձորի առատ բերքը… Իսկ Գորիսի հարկայինների սիսիանյան արշավանքները միշտ չէ, որ հիմնավորված են լինում եւ միշտ չէ, որ բխում են օրենքի ու գործի շահերից:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սիսիանի «Շամբ-բիզնես» եւ «Ներսես եւ Արսեն» ՍՊ ընկերությունների գործունեությանն անդրադարձել էինք 2011-ի սեպտեմբերին: Այս անգամվա աշխատանքային այցի ժամանակ նախ հետաքրքրվեցինք, թե ինչ առաջընթաց են ունեցել մրգերի եւ գյուղատնտեսական մշակաբույսերի վերամշակմամբ ու ջրերի արտադրությամբ զբաղվող այդ ձեռնարկությունները վերջին երկու տարվա ընթացքում: «Շամբ-բիզնես» ընկերության տրամադրած տեղեկանքից իմացանք, որ այդտեղ արտադրվում է տարբեր տարողությամբ տարաներով 68 անուն արտադրանք՝ մուրաբաներ, պահածոներ, կոմպոտներ, մարինադներ, խավիար, տարբեր հատապտուղների եւ մրգերի հյութեր: Պահածոների եւ անուշահամ արտադրանքի 95 տոկոսն արտահանվում է արտերկիր, հիմնականում՝ Մոսկվա, որտեղից առաքվում է Ռուսաստանի Դաշնության

Շարունակությունը՝ էջ 9

ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Իմ առջեւ երբեք նպատակ չեմ դրել ամեն գնով որեւէ գործ անել»

Հարցազրույց Մեղրու «ՃՇՇՁ» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյանի հետ

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մեղրու «ՃՇՇՁ» ՍՊ ընկերության ճանապարհաշինարարները սեպտեմբերի 5-ին ավարտին հասցրին Երեւան-Գորիս-Մեղրի ավտոմայրուղու (Մ-2) 359+200կմ հատվածի կամրջի վերակառուցումը: Մինչ այդ, մեկուկես ամիս ծանրաքաշ մեքենաները երթեւեկում էին Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհով: Աշխատանքային այցով լինելով Մեղրիում՝ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին խնդրեցինք ներկայացնել կամրջի հիմնանորոգման վերաբերյալ որոշ մանրամասներ, բայց մեր զրույցը չսահմանափակվեց դրանով, ուրիշ ընթացք ստացավ՝ ներառելով նաեւ ճանապարհաշինարարության ոլորտին առնչվող այլ հիմնախնդիրներ:

– Երկար ժամանակ էր, ինչ տրանսպորտի եւ կապի նախարարությանն ահազանգում էինք, որ Երեւան-Գորիս-Մեղրի միջպետական ճանապարհի երեք կամուրջ վթարային վիճակում են: Իսկ ավտոմայրուղու (Մ-2) 359+200կմ հատվածի կամրջի ձախ հենարանն այլեւս կարող էր վթարների պատճառ դառնալ: Բանը հասել էր այնտեղ, որ երբ ծանրաքաշ մեքենաներն անցնում էին կամրջով, տատանումներից խճի հատիկներ էին թափվում: Համոզված էի, որ Աստծո մի օր այդ հենապատի պատճառով կամրջի հենարանը կնստեր գետնին: Ահազանգից հետո նախարարության մասնագետները եղան տեղում, ուսումնասիրություններ կատարեցին, եկան այն եզրահանգման, որ հույժ անհրաժեշտ է կամրջի հիմնանորոգումը: Դրա նախագծանախահաշվային արժեքը կազմեց 54 մլն դրամ, նախատեսված էր շինորոգման աշխատանքները սկսել

Շարունակությունը՝ էջ 8

Քսան տարի անց. հեկպատերազմյան խճանկար

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախյան գոյամարտը հայ իրականության եւ հայ ժողովրդի հազարամյա պատմության ամենահերոսական էջերից է: 1988-ից սկիզբ առած շարժումը, որ վերաճեց իսկական գոյամարտի, 1994-ին պսակվեց հաղթանակով: Շարժումը մեր ժողովրդին արթնացրեց խորհրդային տարիների երկարամյա թմբիրից, ոտքի հանեց մի ամբողջ ազգ, միավորեց բոլորին եւ աներկբա քայլերով տարավ դեպի միասնական հաղթանակ: Իսկ պատերազմը՝ դժվարին ու արյունալի, մեր հասարակության մեջ ձեւավորեց մի ամբողջ խավ՝ կազմված զոհված ազատամարտիկների ընտանիքներից եւ հաշմանդամներից: Նրանք մարդիկ են, ովքեր ազգի համար օրհասական պահին որոշեցին, որ պետք է գնան ու վճարեն ամենաթանկն իրենց հայրենիքի ազատության համար... Եվ զոհվեցին ու վիրավորվեցին բազմաթիվ քաջարի հայորդիներ, որոնց ընտանիքի անդամներն այսօր էլ, քսան տարի անց, ոչ միայն չեն կարողանում հաղթահարել ցավը, այլեւ ունեն արժանապատիվ առօրյայով ապրելու խնդիր, երբեմն՝ հացի խնդիր:

....Վերջին ամիսներին հանրապետությունում ազատամարտիկների եւ նրանց ընտանիքի անդամների սկսած շարժումը՝ իրենց իրավունքների պաշտպանության համար, ինձ մղեցին հասարակության այդ խավի մտահոգությունների ուսումնասիրմանը:

Մայրաքաղաքում՝ Ազատության հրապարակում եւ կառավարության շենքի առաջ, քանիցս նստացույց արվեց, որի մասնակից ազատամարտիկներն ու նրանց ընտանիքի անդամները բարձրացրին տարատեսակ սոցիալական խնդիրներ եւ նույնիսկ լուծումներ, փոփոխություններ առաջարկեցին, որոնք կարող էին մեղմացնել իրենց սոցիալական ծանր կացությունը: Նստացույցերը եւ հնչած պահանջներն առ այսօր որեւէ էական լուծման կամ գոնե դիտարկման, սակայն, չեն արժանացել կառավարության կողմից:

Հիշեցնեմ, որ այդ խավի նկատմամբ պետական քաղաքականությունը հիմնականում կարգավորվում է «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 1998թ. հոկտեմբերին: Եթե օրենքը դիտարկելու լինեմ սոցիալական ապահովության կամ արտոնությունների սահմանման տեսակետից, ապա պետք է անկեղծորեն խոստովանել, որ առանձնապես գոհանալու առիթ չկա: Զոհված ազատամարտիկների զավակների կրթության՝ մրցույթից դուրս եւ պետպատվերի շրջանակներում իրականացում (արտոնություն, որ զավակների տարիքային տեսակետից արդեն սպառել է իր անհրաժեշտությունը), հաշմանդամ ազատամարտիկներին հատկացվող թոշակ ու անվճար բուժօգնություն. դրանք են ամենաէական արտոնությունները, որոնք միտված են պետական քաղաքականության մակարդակով վարձահատույց լինել

Շարունակությունը՝ էջ 11

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

Սյունիքի մարզպետին պատկանող ընկերությունը «արտոնյալ» է վարկավորվել

ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ

Կառավարությունը Սյունիքի ներկայիս մարզպետ Վահե Հակոբյանին պատկանող «Զանգեզուր մայնինգ» ընկերությանը (Վահե Հակոբյանը ընկերության հիմնադիր սեփականատերն է) լայնածավալ վարկավորել է ռուսական վարկի միջոցներով: 2012թ. գործադիրն ընկերությանը տրամադրել է $20 մլն-ի բյուջետային վարկ՝ 5 տարի մարման ժամկետով, այն դեպքում, երբ «Զանգեզուր մայնինգը» դեռեւս չէր մարել 2009թ. հունիսին ստացված $15 մլն-ի փոխառությունը:

Երկու դեպքում էլ վարկավորումն իրականացվել է ռուսական վարկի միջոցներով, երկու դեպքում էլ վարկը տրամադրվել է Libor+7 տարեկան տոկոսադրույքով: Ուշագրավը, սակայն, այն է, որ երկու վարկերի ապահովման գրավը չի եղել ընկերության սեփականությունը:

Այսպես, 2009թ. վարկի գրավի ապահովման միջոց է ծառայել «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ընկերության երաշխավորությունը՝ վերջինիս արտադրական համալիրի գրավադրմամբ: 2012թ. օգոստոսին տրամադրված վարկն ապահովվել է «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ընկերության՝ Երեւանում 118հա տարածքով, որը գնահատվել է 23,6 մլրդ դրամ:

Կառավարության կողմից Վահե Հակոբյանի ընկերությանը 2012թ. նոր վարկային միջոցների տրամադրումն ամենայն հավանականությամբ պայմանավորված է եղել նրանով, որ ընկերությունը չի կարողացել սպասարկել նախորդ վարկը: Պարզ ասած՝ տեղի է ունեցել 2009թ. տրամադրված փոխառության վերաֆինանսավորում: Սրա մասին վկայում է այն, որ եթե 2010թ. պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը գործադիրն ուղղել է ընկերությունից ստացված 1,1 մլրդ դրամը, ապա 2011-ին ընկերությունն ամենայն հավանականությամբ վարկը չի սպասարկել, քանի որ պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքի վերաբերյալ հրապարակման մեջ այս մասին խոսք չկա:

Մյուս կողմից՝ 2012թ. կառավարությունից $20 մլն-ի վարկային միջոցներ ստանալուց հետո ընկերությունը նույն տարում վճարել է 2 մլրդ դրամ (միջոցները գործադիրն ուղղել է պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը), այն դեպքում, երբ պետք է վճարեր 1,13 մլրդ դրամ: Այս եւ գալիք տարի «Զանգեզուր մայնինգից» ընդհանուր առմամբ գործադիրը ստանալու է 5 մլն դրամ, որը կրկին ուղղելու է պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը:

Թեեւ կառավարությունը «Զանգեզուր մայնինգին» վարկավորելիս նշել էր, որ այն խոշոր ենթակառուցվածքների գործունեություն ապահովող ձեռնարկություն է, ընկերությանը պատկանում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) ընդամենը 12,5% մասնաբաժինը: «Զանգեզուր մայնինգ» ընկերությունը հիմնադրել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանի որդին՝ Վահե Հակոբյանը, Սյունիքի ներկայիս մարզպետը, 2004թ.՝ նույն այն տարում, երբ մասնավորեցվեց ԶՊՄԿ-ն: «Զանգեզուր մայնինգը» մասնագիտացած է լոգիստիկ ծառայությունների մատուցման ոլորտում, այսինքն ԶՊՄԿ-ի արբանյակն է, եւ ընկերության եկամուտները կախված են վերջինիս գործունեությունից:

Ռուսական վարկի միջոցներով «Զանգեզուր մայնինգ» ընկերությանը պետբյուջեի հաշվին վարկավորելու գործընթացը բխում է ընկերության շահերից: Ընկերությունը փաստացի սեփականություն չունի, ինչը գրեթե բացառում է բանկային համակարգից միջոցների ներգրավման հնարավորությունը: Բացի այդ, եթե դոլարային խոշոր բիզնես վարկերի տոկոսադրույքները տատանվում են 10-12%-ի շրջանակում, ապա կառավարությունն ընկերությանը վարկը տրամադրել է տարեկան միջինը 7,5%-ով (անցած չորս տարիներին 6-ամսյա Libor-ը չի գերազանցել 0,5%-ը):

ԱՐՄԵՆԱԿ ՉԱՏԻՆՅԱՆ

9 հոկտեմբերի 2013թ. www.civilnet.am

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ. «Երազանքս է գրել Մեղրու պատմությունը»

Հարցազրույց ԵՊՀ հայ եկեղեցու պատմության եւ եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու եւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Աշոտ Մանուչարյանի հետ

Լուսանկարը՝ Ն. Դավթյանի

Աշոտ Մանուչարյանը Նաիրա Հայրապետյանի (ձախից) եւ դստեր հետ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

– Պարո՛ն Մանուչարյան, այս տարվա հունիսի 27-ին հարցազրույց ունեցանք ճանաչված պատմաբան Գրիգոր Գրիգորյանի հետ եւ որոշ անդրադարձ կատարեցինք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարին, քանի որ ինքը հերթական անգամ Սյունիք էր եկել այդ մատենաշարի լրացուցիչ պրակի վրա աշխատելու նպատակով: Մենք նրան մեղրեցիներին մտահոգող մի հարց ուղղեցինք՝ ինչպե՞ս է պատահել, որ նույնիսկ Արցախի վիմագրություններն են խորհրդային տարիներին մտել առանձին հատորի մեջ, իսկ Մեղրին դուրս է մնացել Սյունիքի շրջաններին առնչվող հատորից եւ հիմա էլ, կարծեք, դուրս է մնում մատենաշարի լրացուցիչ պրակից: Այդ հարցը նաեւ Ձեզ ենք ուղղում՝ նկատի ունենալով, որ աշխատում եք ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում, նկատի ունենալով, որ ծագումով Մեղրու Մանլեւ գյուղից եք ու անտարբեր չեք Մեղրու շրջանի պատմությանն առնչվող հարցերի հանդեպ:

– «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 2-րդ պրակը, իսկապես, նվիրված է Գորիսի, Սիսիանի, Ղափանի շրջաններին (կազմել է Ս.Բարխուդարյանը, Երեւան, 1960): Այն ժամանակ Մեղրի կարելի էր ելումուտ անել սահմանամերձ գոտուն բնորոշ ռեժիմով: Սեդրակ Բարխուդարյանն այն ժամանակ, ըստ էության, հնարավորություն չստացավ աշխատել Մեղրու շրջանում: Հիմա պրոֆեսոր Գրիգորյանի կողմից պատրաստվում է մատենաշարի լրացուցիչ պրակ, որում տեղ կգտնեն սյունիքյան այն վիմագրերը, որոնք ժամանակին դուրս են մնացել Սյունիքի շրջաններին առնչվող հատորից: Մի քանի հարյուր նոր վիմագրեր են հայտնաբերվել, որոնք տեղ կգտնեն լրացուցիչ պրակի մեջ: Դրանում կզետեղվեն նաեւ Մեղրու տարածաշրջանի վիմագրական նյութերը:

– Կհասցնե՞ք Մեղրու վիմագրությունները մտցնել մատենաշարի լրացուցիչ պրակի մեջ, չէ՞ որ, Գրիգոր Գրիգորյանի վկայությամբ, լրացուցիչ պրակի նյութերը գրեթե

Շարունակությունը՝ էջ 16

լուրեր

«Սյունյաց երկիր» թերթի կայքում (8 օգոստոսի 2013թ.), ապա եւ թերթի տպագիր տարբերակում (3 սեպտեմբերի 2013թ.) հրապարակված «Թշվառականը» հոդվածը շուտով քննարկման առարկա կդառնա ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Կապան քաղաքի բնակիչ Գագիկ Ղահրամանյանը, ով հայցվորն է, կարծում է, թե հոդվածի թիրախն ինքն է եւ հոդվածն իր մասին է, թեեւ հոդվածում որեւէ կոնկրետ անուն չի նշվում: Թերթի շուրջ տեղի ունեցող այս իրադարձության մասին ընթերցողին լիարժեք եւ ամբողջական տեղեկատվություն տալու նպատակով խմբագրությունը որոշել է լրագրի հերթական համարներից մեկում վերահրատարակել «Թշվառականը» հոդվածը, ինչպես եւ Գագիկ Ղահրամանյանի հայցի՝ «Հայցի էության նկարագրությունը» եւ «Հայցապահանջը հաստատող ապացույցները եւ հանգամանքները, որոնց վրա հիմնված է հայցը» հատվածները, ինչպես եւ հոդվածի հեղինակ Սամվել Ալեքսանյանի պատասխան խոսքը՝ հղած Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անահիտ Թումանյանին: Եթե դատավորը չթույլատրի այդ հրապարակումները կատարել մինչդատական փուլում, ապա դրանք կհրապարակվեն հետդատական շրջանում:

Սյունիքի մարզի արոտավայրերն իրանցիներին վարձակալության տալու հարցը փակված է՝ նման բան տեղի չի ունենա: Այդ մասին հոկտեմբերի 5-ին Ջերմուկում կայացած ճեպազրույցի ժամանակ հայտարարեց տարածքային կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանը: «Ազատություն» ռադիոկայանի հարցին՝ հնարավո՞ր է արդյոք, որ այդ խնդիրը հետագայում եւս բարձրացվի, փոխնախարարն արձագանքեց. «Բացառում եմ»: Իրանական կողմը Սյունիքի մարզի արոտավայրերը վարձակալելու ցանկություն էր հայտնել դեռ անցած տարի, կար նաեւ նախնական համաձայնություն Սյունիքի մարզի եւ Իրանի Արեւելյան Ատրպատական նահանգի միջեւ: Թեեւ որեւէ վերջնական պայմանագիր չէր կնքվել, մարզի բնակչությունը եւ բնապահպանները բողոքում էին այդ ծրագրի դեմ:

Սեպտեմբերի 20-ին Կապանի N3 միջնակարգ դպրոցում կազմակերպվել էր «Իմ խաղը» մրցույթ: Խաղն անհատական բնույթ էր կրում, նախաձեռնողը «Русский мир» ֆոնդն էր, որը նպաստում է ռուսերենի ճանաչողությանն աշխարհի տարբեր երկրներում: Հայաստանում նախագիծը ղեկավարում է Աիդա Հարությունյանը: Խաղի հիմնական նպատակն էր՝ առաջացնել հետաքրքրություն ռուսաց լեզվի նկատմամբ: Խաղը ոչ թե վերաբերում է ռուսերենին, այլ, պարզապես, հարցերը տրվում էին ռուսերենով, որոնք քաղված էին գիտության տարբեր բնագավառներից: Մրցույթն անց է կացվում Հայաստանի հինգ քաղաքում՝ Երեւանում, Իջեւանում, Արմավիրում, Արտաշատում, Կապանում: Մեզ մոտ նախագծի իրականացմամբ զբաղվում են պատմության ուսուցչուհի Մարինա Ղազարյանը, «Ռոսսիյանե» հայ-ռուսական հասարակական կազմակերպության ղեկավար Լյուդմիլա Աղախանյանը եւ ծրագրի գլխավոր խմբագիր, «Արմադա» թիմի մարզիչ Նատալյա Մանուսաջյանը: Աշակերտները բաժանվել էին տարիքային խմբերի՝ փոքր (11-13) եւ մեծ (14-17): Հաղթողներ ճանաչվեցին մեծերի խմբից՝ Դավիթ Ալեքսանյանը, Դավիթ Աղաբեկյանը, Արամ Մանուկյանը, իսկ փոքրերի խմբից՝ Նելլի Առաքելյանը, Մոնիկա Աթայանը եւ Հրաչ Խաչատրյանը:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրացի ներդնողների հետ՝ ի շահ Կապանի

Հարցազրույց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ

ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ

Կապան քաղաքի միջազգային կապերի եւ քաղաքային իշխանության՝ միջազգային կառույցների ու ծրագրերի հետ համագործակցության, ինչպես նաեւ մարզկենտրոնում գործող օտարերկրացի գործատուների եւ սեփականատերերի գործունեության մասին է զրույցը Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ:

– Պարո՛ն Հայրապետյան, 2002 թվականից ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Գլենդել քաղաքի հետ Կապանը քույր քաղաք է, ի՞նչ փուլում է այդ քաղաքի հետ համագործակցությունը:

– Տեւական լռությունից հետո բոլորովին վերջերս կապ հաստատեցինք Գլենդել քաղաքի իշխանությունների հետ, եւ որոշվեց մեզ ենթակա կառույցներում՝ մասնավորապես Կապանի երկու մանկապարտեզում, վերանորոգման աշխատանք կատարել ու դրանց համար գույք ձեռք բերել: Քանի որ Գլենդելը շատ քույր քաղաքներ ունի, ուստի նախատեսվում է այնտեղ ստեղծել բարեկամության պուրակ. այդ վայրում պիտի կառուցեն բարեկամությունը խորհրդանշող հուշարձան՝ համապատասխան խորհրդանիշներով: Կապանի քաղաքապետարանից եւս պետք է ներկայացվի կառուցվելիք հուշարձանի էսքիզ, որի համար մրցույթ է հայտարարվել մեզ մոտ: Մոտ երկու ամիս լռություն էր տիրում մեր հարաբերություններում, պարզվեց, որ այնտեղ կադրային փոփոխություններ են տեղի ունեցել: Մենք դեռ սպասում ենք համագործակցության ակտիվացման: Պայմանավորվածության համաձայն՝ այս տարվա ընթացքում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին Գլենդելից մոտ 40 հազար դոլար արժողությամբ սարքավորումներ են ուղարկել, ինչպես նաեւ Կապանի N13 ՆՈՒՀ-ին՝ փափուկ խաղալիքներ: Նոյեմբեր ամսին սպասում ենք Գլենդելի պատվիրակությանը, որից հետո, հավանաբար, մեր հարաբերություններն ավելի գործնական փուլ կմտնեն:

– 2008 թվականից Կապանն ունի եւս մեկ քույր քաղաք՝ Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի Բորիսով քաղաքը: Վերջերս Սյունիքում էր Մինսկի մարզի պատվիրակությունը: Քույր քաղաքից կայի՞ն ներկայացուցիչներ պատվիրակության կազմում, եւ արդյո՞ք պատվիրակության հետ առնչություններում անդրադարձ է եղել Բորիսով-Կապան համագործակությանը:

– Մինսկի մարզի պատվիրակության՝ Սյունիք կատարած այցի ընթացքում Բորիսով-Կապան համագործակցությանն անդրադարձ չի եղել: Այդ հանդիպմանը հիմնականում մասնակցել են խոշոր տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ, քանի որ այցի նպատակը տնտեսվարողների միջեւ կապեր հաստատելն էր նախեւառաջ: Ես համակարծիք եմ, որ քաղաքների բարեկամությունը պիտի առարկայացվի, շոշափելի դառնա, այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտների միջեւ պետք է փոխադարձ համագործակցություն լինի նախեւառաջ, ծրագրեր պետք է կազմվեն, որոնց իրագործման արդյունքում քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքում փոփոխություններ կլինեն: Քաղաքապետարաններն այդ առումով ոչինչ չունեն տալու, լավագույն դեպքում կառավարման համակարգի ոլորտում փորձի փոխանակում կարելի է անել, որը, թերեւս, կառավարման տարբեր համակարգերի պարագայում երբեմն կարող է եւ անօգուտ լինել:

– Մեր օրերում, կարծեք, չափազանց շատացել են քույր քաղաքները: Ինչպե՞ս եք վերաբերվում համայնքների համագործակցության այդ ձեւին, իսկապե՞ս դա համագործակցության անհրաժեշտ ձեւ է, թե՞ տուրք է մոդային:

– Վերջերս Չեխիա կատարած այցիս նպատակը Պրահայի տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքին ծանոթանալն էր, զուգահեռներ անցկացնելը մեր ՏԻՄ-երի հետ: Այցը կազմակերպել էին USAID-ն եւ «Քաւնքերփարթը» ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ: Այն, որ Պրահան եւ Կապանը տարբեր կառավարման համակարգեր ունեն, փաստ է, բայց միայն համեմատելով կարելի է ինչ-որ բան փոխել: Մենք մեր իրավասությունների եւ պարտականությունների շրջանակում դեռ շատ անելիքներ ունենք: Որպեսզի ավելի ըմբռնելի լինի ասելիքս, բերեմ մի օրինակ: Պրահայի քաղաքապետարանի աշխատակազմի մի մասն ունի քաղծառայողի կարգավիճակ. այդ աշխատողները նշանակվում են կառավարության կողմից եւ պարտադիր լիազորություններ ունեն ու կատարում են որոշակի պարտականություններ՝ երբեմն առանց համայնքի ղեկավարի համաձայնության: Մեզ այդպիսի փոփոխությունը կփրկեր մի շարք արատավոր երեւույթներից, մասնավորապես սուբյեկտիվ ազդեցություններից: Օրինակ՝ եթե քաղաքի հատակագիծը համայնքի ղեկավարի կողմից հաստատվում է, դրանից հետո քաղաքաշինության բաժինը, եթե մեծ քաղաք է կամ նահանգ, գործառույթներն իրականացնում է առանց քաղաքապետի համաձայնության՝ բխեցնելով քաղաքի հատակագծից: Մի խոսքով՝ մասնակցելով նմանատիպ շատ սեմինարների, ժողովների՝ կարելի է նրանց կառավարման առանձնահատկություններից որոշները դարձնել տեղում կիրառելի: Ներկայումս քույր քաղաքների համագործակցությունը հիմնականում միայն այդքանով կարող է գործնական դառնալ: Միաժամանակ՝ համագործակցության, բարեկամության որոշակի ձեւ է, որը, պարզապես, հնարավորինս պետք է առարկայական դարձնել:

– Վերջին տարում «Քաւնքերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության ծրագրերի շրջանակում Կապանում ինչպիսի՞ աշխատանքներ են կատարվել:

– «Քաւնքերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հետ մեր համագործակցությունը սկսվեց Արամ Խաչատրյանի անվան N1 երաժշտական դպրոցի վերազինման աշխատանքներով (հիմնականում՝ գույքի ձեռքբերում), որոնց ծավալը կազմեց 2մլն 700 հազար դրամ: Առհասարակ միջազգային կազմակերպությունների հետ Կապանի քաղաքապետարանի ակտիվ համագործակցությունը սկսվել է այս տարի, չնայած մինչ այդ նույնպես եղել են առաջարկներ, որոնք, սակայն, կազմակերպության ներդրումային ուղղվածությանը չեն համապատասխանել: Ծրագրի շրջանակում Կապանի մշակույթի պալատի համար ձեռք բերեցինք ձայնային ու լուսային սարքավորումներ՝ 2.5 մլն դրամ արժողությամբ: Թեպետ պետք է նշեմ՝ այդ ծրագրերը համաֆինանսավորմամբ են իրագործվում, բայց ներդրումների առյուծի բաժինը «Քաւնքերփարթ ինթերնեշնլ» կազմակերպությանն է: Փոխադարձ վստահություն ձեռք բերելուց հետո ավելի մեծ ծրագրեր փորձեցինք իրականացնել: Խոսքը վերաբերում է Կապանի քաղաքապետարանի երեք սենյակի վերակառուցմանը՝ «Մեկ պատուհանից» օգտվելու սկզբունքի ներդրման նպատակով, որի համար ծախսվել է 16 մլն 743 հազար դրամ, որից 10 մլն դրամը տրամադրվել է «Քաւնքերփարթի» կողմից, 6 մլն 743 հազարը՝ համայնքի բյուջեից: Ծրագրի շրջանակներում քաղաքապետարանի տարածքում կառուցվել են թեքահարթակներ: Ներկայումս կատարվում են մարզադպրոցի վերանորոգման աշխատանքներ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 21 մլն 684 հազար, որից 10 մլն՝ «Քաւնքերփարթի» կողմից է տրամադրվել (նշենք, որ «Քաւնքերփարթն» ազատված է ԱԱՀ-ից, 10 մլն պետք է դիտարկել 12 մլն): Մի ծրագիր էլ ունենք, որը մինչեւ տարեվերջ պիտի իրականացնենք: Նախատեսվում է տպագրել նշանավոր նկարիչ Ռոբերտ Կամոյանի ստեղծագործությունների գիրքը, ինչպես նաեւ ունենալ գրքի էլեկտրոնային տարբերակը, որը կիրականացվի միայն «Քաւնքերփարթի» ֆինանսավորմամբ (մոտ 6մլն դրամ): Տրամադրված գումարի շրջանակներում կտպագրենք նաեւ քաղաքի տեսարժան վայրերի պատկերներով գրքույկներ: Մեկ այլ ծրագրով նախատեսում ենք քաղաքապետարանի ենթակայությամբ ունենալ ժամանակակից էլեկտրոնային գրադարան, որը լոկալ ցանցով միացված կլինի այլ էլեկտրոնային գրադարանների, ինչպես նաեւ հնարավորություն կտա քննություն հանձնել Ամերիկյան համալսարանի «Թոյֆլ» ծրագրով տեղում ուղիղ միացմամբ: 2014թ. հունվարի 1-ից քաղաքապետարանում ծրագրի շրջանակներում կներդրվի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն եւ «Մեկ պատուհանի» սկզբունք, որի արդյունքում հարության հետ կապն ավելի մատչելի կդառնա: Ընդհանուր առմամբ, կազմակերպությունը գոհ է մեր համագործակցությունից, քանի որ այն աշխատանքները, որոնք պիտի կատարվեն վեց ամսում կամ մեկ տարում, մենք իրականացնում ենք ավելի կարճ ժամանակահատվածում:

– «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման եւ բարեգործական միջազգային կազմակերպության հետ համագործակցությունը տեւական պատմություն ունի: Ի՞նչ նոր գործեր են կատարվել Կապանում այդ կազմակերպության միջոցներով անցած մեկ տարում:

– «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը նախկինում Կապանում շատ ակտիվ է եղել՝ իրականացնելով տարբեր աշխատանքներ, սակայն ներկայումս նրանց շահառուները Կապան քաղաքից դուրս են կամ էլ քաղաքի ծայրամասային թաղամասերում: Այս մեկ տարվա ընթացքում մոտ 1մլն 282 հազար դրամի գույք ենք ձեռք բերել քաղաքի ՆՈՒՀ-երի համար: Իրագործվելիք մեկ ծրագիր եւս ունենք. նախատեսվում է Ջորք թաղամասում խաղահրապարակ կառուցել, որի շինանյութը քաղաքապետարանի կողմից պետք է տրամադրվի, իսկ խաղասարքերը՝ «Վորլդ Վիժն»:

– Ինչպիսի՞ դրսեւորումներ ունի «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի հետ համագործակցությունը Կապանում:

– «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի հիմնական գործունեությունը ժողովրդավարության զարգացմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանն աջակցելն է: Հիմնադրամի միջոցներով, փոխհամաձայնեցման դեպքում, նախատեսվում է իրագործել համաֆինանսավորվող մի քանի ծրագիր: Ներկայումս, որպես առաջին քայլ, 40 կնոջ ապահովել ենք ժամանակավոր աշխատանքով, ովքեր տնային պայմաններում կարում են կտորե պայուսակներ, որոնք պետք է փոխարինեն պոլիէթիլենային տոպրակներին: Նախատեսվում է նաեւ տեղադրել պլաստիկ շշերի հավաքման համար առանձին աղբարկղեր, որոնցում հավաքված պլաստիկ շշերը կոմունալ տնտեսությունում տեղադրված մամլիչի միջոցով կսեղմվեն եւ կօգտագործվեն որպես երկրորդային հումք: Կոմու-

Շարունակությունը՝ էջ 4

Լուրեր

Գրադարանավարի օրվա եւ ուսուցչի տոնի կապակցությամբ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հոկտեմբերի 4-ին հյուրընկալեց ոլորտի մի շարք ներկայացուցիչների: Նա նշեց, որ գրադարանավարի եւ մանկավարժի գործը պատվաբեր է, ինչ-որ տեղ՝ բարդ եւ շատ կարեւոր՝ դաստիարակելու, կրթելու եւ գեղագիտական ճաշակ ձեւավորելու համար: Բարեխիղճ աշխատանքի համար շնորհակալագրեր եւ ծաղիկներ ստացան ակումբագրադարանային միավորման չորս ավագ գրադարանավար, հանրակրթական, երաժշտական դպրոցների չորս, նախակրթարանի երկու մանկավարժներ:

«Արամ Խաչատրյանը մեր փոքրության առասպելի մեծ հերքումը եղավ, մեծերի հետ չափվելու խորհուրդը եղավ փոքրաթիվ մեր ժողովրդի: Դարձավ մեր վկայականը...»: Համո Սահյանի այս գնահատանքի խոսքով սկսվեց Կապանի արվեստի քոլեջում մեծ կոմպոզիտորի ծննդյան 110-ամյակին նվիրված համերգ-դասախոսությունը՝ մասնակցությամբ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների եւ ուսանողների: Կոնսերվատորիայի երաժշտական պատմության ամբիոնի դասախոս, դոցենտ, արվեստագիտության թեկնածու Նարինե Ավետիսյանը ներկայացրեց Արամ Խաչատրյանի կյանքն ու ստեղծագործական ուղին, այն միջավայրը, որտեղ ձեւավորվել է նրա երաժշտական տաղանդը: Այնուհետեւ կոնսերվատորիայի տարբեր կուրսերի ուսանողներ հանդես եկան Ա.Խաչատրյանի ստեղծագործության վաղ շրջանի կամերային գործերի կատարմամբ: Միջոցառման ավարտին Կապանի արվեստի քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանը երախտագիտություն հայտնեց մայրաքաղաքից ժամանած երաժիշտներին՝ հանդիսականին գեղագիտական հաճույք պատճառելու եւ կոնսերվատորիայի ռեկտոր Շահեն Շահինյանին՝ միջոցառման կայացմանը նպաստելու համար:

Հանրապետությունում 2004 թվականից հոկտեմբերի 7-ը նշվում է որպես «Գրադարանավարի օր»: Ավանդական դարձած «Հանդիպման վայրը՝ գրադարան» խորագրով ծրագիրն այս տարի հանրապետությունում նշվեց հոկտեմբերի 5-ին: Ծրագրի նպատակն էր ընդգծել գրքի, գիտելիքի, գրադարանի դերը, ընթերցանությունն արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում: Սյունիքի մարզային գրադարանում գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումները մեկնարկեցին գրքի ցուցահանդեսով: Գրադարանի բաժինները կազմակերպել էին մի շարք միջոցառումներ՝ թատերական ներկայացում, գրական-երաժշտական, ասմունքի երեկոներ, «կլոր սեղան» եւ այլն:

Լորիկ Մինասյանը ճանաչված գեղանկարիչ է, հանրապետության նկարիչների միության անդամ 1992 թվականից: Կապան քաղաքի զինանշանի հեղինակն է, ունի դիզայներական հեղինակային աշխատանք: Մասնակցել է բազմաթիվ միջազգային սիմպոզիումների, ցուցահանդեսների: Նրա աշխատանքները տեղ են գտել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իրանի եւ այլ երկրներում գտնվող հավաքածուներում: Դպրոցականները եւս հեռակա կարգով կծանոթանան նրա հետ: Արվեստագետի «Խուստուփի փեշին» գեղանկարը տեղ է գտել հայ գրականության ինն երորդ դասարանի դասագրքում (էջ 140):

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

Աշխատանքի տոնավաճառ Սյունիքում

Գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ Սյունիքում: Մամուլի տվյալներով այդ ցուցանիշով Սյունիքը երկրորդն է Շիրակի մարզից հետո: Հոկտեմբերի 1-ի տվյալներով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Սյունիքի կենտրոնում գրանցված է 5412 աշխատանք փնտրող, որից 4304-ն ունի գործազուրկի կարգավիճակ: Ուստի խրախուսելի են այն բոլոր միջոցառումները, որոնք միտված են գործազրկության մակարդակն իջեցնելուն:

Զբաղվածության պետական ծրագրերի շրջանակում հոկտեմբերի 11-ին Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց աշխատանքի տոնավաճառ, որ կազմակերպել էր ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ: Տոնավաճառին մասնակցում էին Սյունիքի մարզի գործարարներ, աշխատանք փնտրող անձինք, բուհերի եւ քոլեջների ավարտական կուրսերի ուսանողներ, ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտներ: 40-ից ավելի գործատու ներկայացրել էր մոտ 260 աշխատատեղ, որից 214-ը՝ առկա, 46-ը՝կանխատեսվող: Կապանում նախորդ անգամ նման տոնավաճառ կազմակերպվել էր 2009 թվականին: Ներկայացվել էր 135 թափուր աշխատատեղ: Տոնավաճառին հաջորդող երեք ամսվա ընթացքում այդ աշխատատեղերը լրացվել էին Կապանի մարզային զբաղվածության կենտրոնի միջոցով:

Բացելով տոնավաճառը՝ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչէ Գրիգորյանը նշեց, որ նման միջոցառումը հնարավորություն է ընձեռում գործատուին եւ գործազուրկին անմիջական հանդիպել, ու նպատակ ունի մեղմելու սոցիալական լարվածությունը: «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Արտակ Մանգասարյանը կոչ արեց ներկաներին լինել առավել ակտիվ, հետաքրքրվել թափուր աշխատատեղերով: Նա նաեւ հայտնեց, որ տոնավաճառին ներկայացված է նաեւ գործակալության տաղավարը, որտեղ կարելի էր ծանոթանալ բնակչության զբաղվածության ուղղությամբ իրականացվող պետական ծրագրերին: «Դանդի փրիշս մեթալս-Կապան» ՓԲ ընկերության տնօրեն Հրաչ Զաբրյանը տեղեկացրեց, որ իրենց ընկերությունը ներկայացրել է 25 թափուր աշխատատեղ: **«Պիտի խնդրեմ, որ այն մարդիկ, ովքեր աշխատասեր են ու նվիրված, հարգում են երկրի եւ ձեռնարկության օրենքները, թող մոտենան եւ իրենց դիմումները ներկայացնեն, պատրաստվում ենք ձեր խնդրանքներն ու առաջարկությունները հաշվի առնելու»,** – իր ելույթում մասնավորապես ասաց նա:

Գործակալության Կապանի մարզային կենտրոնի տնօրեն Ռուբեն Պողոսյանը շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզպետարանին՝ տոնավաճառի կայացմանը նպաստելու համար:

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը» աշխատանք փնտրողին առաջարկում էր քիթ-կոկորդ-ականջաբանի, ակնաբույժի, էնդոկրինոլոգի, հոգեբույժի, անեսթեզիոլոգի, վիրաբույժի մասնագիտությունները: «Կապանի բժշկական կենտրոնը» կարիք ուներ ավելի նեղ մասնագետների (նորածնային եւ մանկական ռեանիմատոլոգ, ֆթիզիատոր, վարակաբան, նեոնատոլոգ եւ այլն):

Նարինե Բեժանյանը դստեր՝ Լիլիթի համար աշխատանք էր փնտրում: Վերջինս նոր էր տնտեսագետի մասնագիտություն ստացել, եւ աշխատանքի փորձի բացակայությունը լրացուցիչ դժվարություններ էր հարուցել զբաղվածություն ձեռք բերելու խնդրում: Գործատու Նարինե Խլոպուզյանը «Կամուրջ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության Կապանի մասնաճյուղի համար կառավարիչ էր փնտրում, ով պիտի ունենա բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական ոլորտում երկու տարվա աշխատանքային ստաժ: Մասնաճյուղն ունի հինգ աշխատակից, բայց ահա ղեկավար չունի: Ամենաշատ աշխատատեղ (26) առաջարկում էր «Գյուղարտ» ՓԲ ընկերությունը: Գործատուներ կային Մեղրուց, Սիսիանից, Գորիսից: Զառա Բաղդասարյանը (Սիսիան) «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ իրենք ներկայացնում են «Սիս Ալպ» ՍՊ ընկերությունը, որ հիմնադրվել է 2007 թվականին, մասնագիտացել է կաթնամթերքի եւ պանրի արտադրության մեջ: Առաջարկում էին մեխանիկի, տեխնոլոգի, պանրագործ վարպետի, լաբորանտի աշխատանքները: Նա տեղեկացրեց, որ հետաքրքրվողներ կային, հատկապես լաբորանտի մասնագիտությունն էր հետաքրքրում, բայց նրանց մեծամասնությունը Կապանից էր, եւ մի փոքր հիասթափվում էին՝ իմանալով, որ ընկերությունը Սիսիանում է:

Մեր դիտարկումն այն է, որ նման տոնավաճառներ պիտի կազմակերպել մարզի քաղաքային համայնքներում, քանզի հազիվ թե կապանաբնակը գնա Մեղրիում կամ Սիսիանում աշխատելու:

«Սյունյաց երկիրը» Արտակ Մանգասարյանից հետաքրքրվեց, թե նրան բավարարո՞ւմ է տոնավաճառի մասնակից գործատուների եւ նրանց կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերի թիվը, ինչին ի պատասխան նա ասաց, որ մարզերում նվազագույնը պահանջվում է, որ տոնավաճառին մասնակցի 25 գործատու, իսկ նրանց կողմից առաջարկվող մասնագիտությունների թիվը հասնի հարյուրի, այնպես որ երկու դեպքում էլ ինքը գոհ է: Նաեւ հավելեց, որ աշխատանքի տոնավաճառները զբաղվածության պետական ծրագրով նախատեսված միջոցառումներ են, տարեկան նախանշված է պետբյուջեի ֆինանսավորումով անցկացնել 11 տոնավաճառ եւ ահա տասնմեկերորդն անցկացվում է Սյունիքում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեծահասակների կրթական կենտրոն Սիսիանում

«DVV international» կազմակերպության կողմից 2012 թվականին մեծահասակների կրթությանը միտված ծրագրեր իրականացնելու մրցույթ էր հայտարարվել Արարատի, Վայոց ձորի եւ Սյունիքի քաղաքների համար: Ներկայացված մեծ թվով ծրագրերի շարքում լավագույնը ճանաչվեց եւ հաղթեց Սիսիանի ներկայացրած ծրագիրը:

Մեծահասակների կրթության ծրագիրն իրականացնելու համար քաղաքապետարանը «DVV international» կազմակերպությանը 20 տարի ժամանակով տարածք է տրամադրել Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի առաջին հարկում: Սիսիանի մեծահասակների կրթական նորաբաց կենտրոնը կապահովի տասը նոր աշխատատեղ: Կենտրոնը, որտեղ անվճար վերապատրաստումներ անցնելու հնարավորություն կունենա ցանկացած քաղաքացի, Հայաստանի հարավային շրջանում միակն է: Նախաձեռնությունը Հայաստանում 12 տարի գործունեություն ծավալող «DVV international» գերմանական կազմակերպությանն է: Նմանատիպ կենտրոն DVV-ն հիմնել է Իջեւանում, նաեւ օժանդակում է Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնին:

«Մենք շատ մեծ հույսեր ենք կապում Սիսիանի կենտրոնի հետ, – ասում է «DVV international» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Լուսինե Խառատյանը: **– Հույս ունենք, որ այն ինչ-որ կերպ կփոխի քաղաքի ընդհանուր վիճակն աշխատանքային շուկայի, մարդկանց ընդհանուր տրամադրության, զբաղմունքի, զբաղվածության առումով»:**

Շարունակությունը՝ էջ 16

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրացի ներդնողների հետ՝ ի շահ Կապանի

Հարցազրույց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ

ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ

Սկիզբը՝ էջ 3

նալ տնտեսությունում արդեն նախապատրաստական աշխատանքներն ավարտին են մոտենում, որից հետո փորձնական կաշխատենք, եթե կարողանանք հումքի անհրաժեշտ ծավալ ապահովել: Շատ կարեւոր է նաեւ կենցաղային աղբատեղիների հարցի լուծումը, որի նպատակով, ծրագրի շրջանակում թվով տասը աղբատեղի կվերափոխվի:

– Կապանում գործում են միջազգային այլ կազմակերպություններ եւս՝ «Օրհուս» բնապահպանական կազմակերպություն, ԵԱՀԿ գրասենյակ, «Ռոստելեկոմ», «Քրոնիմետ»: Ի՞նչ կասեք այդ կազմակերպությունների հետ ունեցած հարաբերությունների եւ, առհասարակ, մարզկենտրոնում նրանց դերակատարության մասին:

– ԵԱՀԿ կապանյան գրասենյակին ներկայացրել ենք առաջարկներ, ծրագրեր, որոնց իրագործման համար դեռեւս ֆինանսական խնդիրներ կան: Բայց մի շատ կարեւոր ծրագիր ունենք, որը կփորձենք իրականացնել: Ըստ դրա՝ պետք է կազմակերպենք տնտեսվարողների ֆորում ոչ միայն Կապանի, այլեւ տարածաշրջանային տնտեսվարող սուբյեկտների մասնակցությամբ: Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը նույնպես հավանություն տվեց այդ ծրագրին՝ առաջարկելով ավելի խոշոր ձեռնարկություններ ներգրավել, բայց ավելի խոշորները մեր տարածաշրջանում միայն «Դանդի Փրիշս Մեթալս-Կապան» եւ «ԶՊՄԿ» ՓԲ ընկերություններն են: Մինչդեռ, մեր նպատակը միջին եւ փոքր բիզնեսի զարգացումն է: Իհարկե, եթե հաջողվի համատեղել, բնական է, որ ավելի լավ արդյունքի կհասնենք: Ֆորումն անցկացնելու համար հստակ ժամկետ չկա, դեռեւս փորձում ենք լուծել ֆինանսական խնդիրներ: «Օրհուս» բնապահպանական կազմակերպության հետ համատեղ վերահսկում ենք բնապահպանական հնարավոր աղետները եւ դրանց լուծման համար ուղիներ փնտրում: «Ռոստելեկոմ» ընկերությանը վարձակալությամբ տրամադրել ենք մոտ 600 հեռասյուն, եւ շնորհիվ նրա՝ քաղաքի Վ.Սարգսյան զբոսայգում ու մի քանի պուրակներում, սրճարաններում գործում է անվճար ինտերնետ կապ: Հետագայում լուրջ ծրագրեր ունենք «Ռոստելեկոմի» հետ իրագործելու, մասնավորապես նախատեսվում է քաղաքապետարանում առանձին դասասենյակ կահավորել՝ նորագույն տեխնիկայով հագեցած, եւ համակարգչային դասընթացներ կազմակերպել, որի համար նախատեսվում է ծախսել 23մլն դրամ, որից 3մլն՝ համայնքի բյուջեից, 20մլն՝ «Ռոստելեկոմի»: «Քրոնիմետ» գերմանական ընկերությունը, որը «ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր բաժնետեր է, բավականին մեծ ներդրումներ է կատարում քաղաքի զարգացման գործում: Մասնավորապես՝ այս տարվա ընթացքում 42 մլն 359 հազար դրամ տրամադրվել է Շինարարների թաղամասի դպրոցի եւ շենքերի բակերի հիմնանորոգմանը, 269 մլն դրամ՝ Շինարարների թաղամասի փողոցների ասֆալտապատմանը եւ բարեկարգմանը, մոտ 20 մլն՝ «Կապան» բարեգործական հիմնադրամին:

– Կապանի տարածքում գործում են նաեւ օտարերկրացի գործատուներ, սեփականատերեր: Դրանցից են հատկապես «Դանդի Փրիշս Մեթալս-Կապան» կանադական ընկերությունը (Կապանի լեռնահանքային կոմբինատի սեփականատերն է), «Կապան-էնեղժի» ՓԲ ընկերությունը: Ինչպե՞ս եք գնահատում համագործակցությունը նրանց հետ եւ նրանց գործունեությունն առհասարակ:

– Մեր տարածաշրջանում տնտեսվարող սուբյեկտների հետ մեր հարաբերությունները փորձում ենք պահել լավ հիմքերի վրա՝ անկախ դրսի, թե ներսի կապիտալ լինելուց: Բայց «Դանդի Փրիշս Մեթալս Կապանի» դերակատարությունը մեր քաղաքում անգերազանցելի է, քանի որ այն քաղաքում առաջին հերթին սոցիալական խնդիր է լուծում՝ բազում կապանցիների ապահովելով աշխատանքով: Տարեսկզբին ընկերության տնօրեն Հրաչ Զաբրյանի հետ ունեցանք պայմանավորվածություն, համաձայն որի՝ մինչեւ 100մլն դրամի ներդրում պիտի կատարվի քաղաքում: Մենք ծրագրում ենք աշխատանքները եւ մասնակցում դրանց կատարման վերահսկմանը, իսկ վճարումը կատարվում է ընկերության կողմից: Աշխատանքները հիմնականում կատարվում են ՆՈՒՀ-երում: Բնապահպանական խնդիրների հետ կապված մենք այցելեցինք ընկերություն եւ Շահումյանի հանքավայր: Իհարկե, այնտեղ կային խնդիրներ, որոնց մի մասն արդեն լուծվել է, մյուս մասի լուծումն էլ ընթացքի մեջ է, իսկ ինչ վերաբերում է ֆաբրիկայի աշխատանքների ժամանակավոր դադարին, ապա այն պայմանավորված էր հանքաքարի բացակայությամբ, որը ներքին խնդիր է եւ, իմ համոզմամբ, հաղթահարվում է: Բնապահպանության նախարարության ստուգումները կատարվել են օրենքի սահմանում, ժամկետը չի խախտվել, արդյունքները դեռեւս հրապարակված չեն: Մենք շահագրգռված ենք, որ այդ ընկերության գործունեությունը լինի կայուն, երկարատեւ թե՛ որպես աշխատատեղեր ապահովող կազմակերպություն, թե՛ որպես քաղաքապետարանին աջակցող գործընկեր: «Կապան-էնեղժի» ՓԲԸ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցել Կապանի տոնին, մինչ այդ որեւէ հարցով չենք դիմել:

– Մեզ հետաքրքրում է նաեւ, թե, Ձեր ունեցած տեղեկությունների համաձայն, որքա՞ն ներդրում է կատարվել Կապանում անցած մեկ տարում:

– Ցավոք, նման տեղեկություն ես չունեմ, բայց Կապանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ծրագրերի առումով կարող եմ ասել, որ մոտ 494 մլն 359 հազար դրամի ներդրում է կատարվել քաղաքում:

– Բացի նշվածներից՝ ի՞նչ նոր մտադրություններ եւ ծրագրեր ունեք միջազգային համագործակցության եւ արտաքին կապերի ուղղությամբ:

– Կապանի քաղաքապետարանն ունի ծրագրերի ու արտաքին կապերի բաժին, որը զբաղվում է միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Կան ծրագրեր, որոնք կյանքի կկոչենք, ինչպես նաեւ պիտի փորձենք այդ կազմակերպությունների հետ նոր պայմանավորվածություններ ձեռք բերել:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

²ðî²èàòàôÂÚàôÜ

Կառավարությունն «ԱՏ-մետալս»-ին հովանավորելով բացահայտում է իր հակաժողովրդական-հակապետական էությունը

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ
Հայաստանի Կանաչների միության նախագահ

ՀՀ կառավարության եւ իշխանական մյուս ոլորտների կողմից «ԱՏ-մետալս» ընկերությանը հովանավորելու խնդիրը համեմատաբար ակնհայտ դարձնելու համար, նախ, հակիրճ ներկայացնեմ, թե հանքավայրի շահագործման թույլտվություն ստանալու համար ինչ ընթացակարգ է սահմանված:

Այսպես, հանքավայրի ուսումնասիրության թույլտվություն ստացած ընկերությունը ճշտում է հանքանյութի քանակը եւ որակը (ծավալը, դրա մեջ պարունակվող օգտակար տարրերի կոնցենտրացիաները) եւ ներկայացնում ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալություն, որն ընդերքաբանական փորձաքննություն իրականացնելուց հետո հաստատում է պաշարները, իհարկե, եթե այն համապատասխանում է ընդունված չափանիշներին: Հաստատված պաշարները ներկայացնում են հանրապետական երկրաբանական ֆոնդ՝ գրանցման համար: Պաշարների հաստատումից ու գրանցումից հետո այդ ընկերությունը դիմում է էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն՝ հանքավայրի շահագործման թույլտվություն ստանալու համար: Ընկերությունն այդ իրավունքը ստանալու դեպքում կազմում է նախագիծ (հանքավայրի շահագործման, հանքաքարի վերամշակման գործարանի եւ պոչամբարի) եւ ներկայացնում արտակարգ իրավիճակների նախարարություն՝ տեխնիկական եւ տեխնոլոգիական փորձաքննության, իսկ բնապահպանության նախարարություն՝ բնապահպանական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Ընթացքում կազմակերպվում են նախագծի հասարակական լսումներ: Արդյունքում տրվում է դրական կամ բացասական եզրակացություն: Բնապահպանության նախարարության կողմից տրված դրական եզրակացության դեպքում էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը տալիս է հանքավայրի շահագործման թույլտվություն, իսկ կառավարությունը փոխում է հանքավայրի, ինչպես նաեւ հանքանյութի վերամշակման գործարանի եւ պոչամբարի կառուցման համար անհրաժեշտ հողերի նպատակային նշանակությունը: Սա օրենքով սահմանված կարգն է:

Հանքշահագործման թույլտվություն ստանալու ընթացակարգում ընկերությունները հիմնականում փորձում են շրջանցել սահմանված կարգի առանձին դրույթներ, բայց կա մի դեպք, երբ ընդհանրապես անտեսվում է օրենքը: Օրինակ, Քարասարի եւ Պրիխրեբտովոյե ոսկու հանքերեւակումներում որոնողագնահատողական աշխատանքներ կատարող «ԱՏ-մետալս» ընկերությունը շուրջ 4 ամիս է, ինչ Սյունիքի մարզի Տաշտուն գյուղի տարածքում հանքաքարի վերամշակման գործարան է կառուցում այն դեպքում, երբ որոնողագնահատողական աշխատանքները դեռեւս ավարտված չեն, պաշարները հաստատված ու գրանցված չեն, նախագիծը գոյություն չունի… Սակայն արդեն ավերվել ու ոչնչացվել են Տաշտուն գյուղին պատկան գյուղատնտեսական նշանակության հողերը, աղբակալվել է Տաշտուն լեռնային գետը, վեր են խոյանում ապօրինի շինությունները:

Ստորեւ կներկայացվի, թե «ԱՏ-մետալսն» ինչ ճանապարհով է փորձում ձեռք բերել հանքավայրի շահագործման թույլտվությունը, եւ ովքեր են նրա երեւացող հովանավորները:

Ապօրինությունների շարքը սկսվում է նրանից, որ 2012թ. «ԱՏ-մետալսը» Սյունիքի մարզի Տաշտուն գյուղում հասարակական լսում է կազմակերպել, որի արձանագրության մեջ գրված է. **«Սույն թվականի դեկտեմբերի 14-ին Տաշտուն գյուղի մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ հասարակական լսում՝ նվիրված «Ատ-մետալս» ՍՊԸ-ի պատվերով կատարված Քարասարի Պրիխրեբտովոյե (Մեղրասար) նախագծի բնապահպանական մասի վերաբերյալ… Որոշեցին՝ հավանություն տալ «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ի պատվերով կատարված «Մեղրասարի» բաց հանքի շահագործման եւ ֆաբրիկայի նախագծերին»:**

Հակառակ արձանագրության մեջ գրվածի, վստահորեն կարելի է ասել, որ այդ օրը նախագիծ չի քննարկվել, հավանաբար միայն բանավոր հավաստումներ են եղել կամ ինչ-որ նյութեր ներկայացրել են որպես նախագիծ, քանի որ առ այսօր «ԱՏ-մետալս» ընկերությունը համապատասխան մարմիններին նախագիծ չի ներկայացրել: Ընկերությունը կկարողանա նախագիծ կազմել միայն այն բանից հետո, երբ քննարկվող հանքերեւակման պաշարները կհաստատվեն ու կգրանցվեն, եւ այն հանքավայրի կարգավիճակ կստանա: *Հետեւաբար, 2012թ. դեկտեմբերի 14-ին Տաշտուն գյուղում կազմակերպված լսումը սովորական կեղծիք է, իսկ դրա արձանագրությունը՝ առոչինչ:*

Այս լսում կոչված կեղծիքից 4 ամիս անց, «ՀՀ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը» (հետայսուս՝ Հանձնաժողով) դրական եզրակացություն է տվել Տաշտուն գյուղի գյուղատնտեսական նշանակության հողերից 2,155 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելուն՝ հանքաքարի մշակման գործարանի կառուցման համար (Եզրակացություն թիվ 34, 29.04.2013թ.):

Սա բացահայտ օրինախախտում է: Հանձնաժողովը դրական եզրակացությունը տվել է այն ժամանակ, երբ Քարասար եւ Պրիխրեբտովոյե հանքերեւակումները դեռեւս հանքավայրի կարգավիճակ չեն ունեցել եւ պարզ չէ, թե դրանք հետագայում կդառնա՞ն շահագործելի հանքավայր, թե՞ ոչ: Հանձնաժողովի անդամները կարծես չգիտեն, որ հանքաքարի մշակման գործարանի կառուցման համար հողերի կարգավիճակի փոփոխումը կատարվում է հանքավայրի շահագործման թույլտվությունից հետո, այլ ոչ թե հանքերեւակման ուսումնասիրության փուլում: Նաեւ՝ հավանաբար այս Հանձնաժողովի անդամները չեն էլ պատկերացնում, թե Տաշտուն գյուղի տարածքում՝ Մեղրու բնակավայրերի «տանիքում», հանքաքարի վերամշակման գործարանի, այսինքն՝ պոչանք արտադրող գործարանի կառուցումն ինչ կործանարար հետեւանքներ կունենա այդ տարածաշրջանի համար: Առավել մտահոգիչ է, որ այդ եզրակացության տակ ստորագրողներից են պետական կառավարման համակարգում երկարամյա փորձ ունեցող, բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս.Պապյանը, քաղաքաշինության նախարարի տեղակալ Ռ.Ալավերդյանը եւ այլք: Իսկ նույն հանձնաժողովի նախագահ Վ.Տերտերյանն էլ, ով նաեւ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալն է, հողերի կատեգորիայի փոփոխման դրական եզրակացության տակ ստորագրելով այն ուղարկել է Սյունիքի մարզպետին. «Խնդրում եմ Ձեզ այն սահմանված կարգով փոխանցել Տաշտունի համայնքի ղեկավարին եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տեղեկություն՝ համայնքի ավագանու «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշումը հաստատվելու եւ իրավունքի պետական գրանցում ստանալու դեպքում» (07.05.2013թ., թիվ 03/16/2346-13):

Այս հիմնազուրկ փաստաթղթերի հետ ծանոթանալուց հետո է միայն հասկանալի դառնում, թե Տաշտունի գյուղապետն ապօրինի շինարարության վայրում (29.06.2013թ.) ինչու էր համարձակորեն հայտարարում, թե իր մոտ իբր կան Տաշտունի վարչական տարածքում հանքաքարի վերամշակման գործարան կառուցելը հիմնավորող փաստաթղթեր, սակայն ինքը դրանք ցույց կտա միայն այն դեպքում, եթե ունենա տարածքային կառավարման նախարարի կարգադրությունը (հետագայում պարզ դարձավ, որ նա այդպիսի փաստաթղթեր չի ունեցել):

Հավանաբար Տաշտուն գյուղում տեղի ունեցած լսումի ապօրինի որոշումը եւ «ՀՀ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» հակաիրավական դրական եզրակացությունն են հիմք հանդիսացել կառավարության թիվ 514-Ա որոշման (23.05.2013թ.) համար:

Այս որոշման մեջ ասվում է. **«ՀՀ կառավարության սահմանված կարգով ընտրված «ԱՏ-մետալս» ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում՝ 2013թ. մայիսի 30-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ ներմուծվող 300 միլիոն դրամը գերազանցող արժեքով ապրանքների՝ համաձայն հավելվածի, մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը հետաձգել մինչեւ 2016թ. մայիսի 30-ը»:** Որոշման հավելվածում նշված ապրանքներն են՝ հոսքագծի փոխարկիչ, ժապավենային փոխարկիչ, պոմպ, էլեկտրալիզոր, ղեկավարման վահանակ, վառարան, տիտանից խառնիչ, կոմպրեսորային գեներատոր, այտային ջարդիչ, աղաց եւ այլն: Որոշումից չի հասկացվում, թե հարկային արտոնությամբ ներմուծվող ապրանքները որ ոլորտում ու օբյեկտներում են օգտագործվելու: Այս հարցը հասկանալի է դարձնում «105 աշխատատեղ՝ 270 հազ. դրամ միջին աշխատավարձով. գործադիրն աջակցում է ներդրումային ծրագրին» հոդվածը («Հայաստանի Հանրապետություն», 24.05.2013թ.): Այդտեղ գրված է. **«Ըստ էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանի՝ «ԱՏ-մետալս» ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել Սյունիքի մարզի Մեղրասար հանքավայրի ուսումնասիրություն, հանքաքարի վերամշակում՝ ոսկու եւ արծաթի ստացման համար: Ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում կկառուցվի բազմամետաղների վերամշակման արտադրամաս, որի համար նախատեսված ընդհանուր ներդրումները կկազմեն շուրջ 3 մլն ԱՄՆ դոլար… Ընկերությունը նախատեսում է հետագայում վերամշակման արդյունքում առաջացած պոչերը կիրառել շինարարության, ապակու ձուլման եւ այլ բնագավառներում: Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՏ-մետալս» ընկերության կողմից կառուցվող արտադրական համալիրը թույլ կտա 2013թ. թողարկել շուրջ 1,4 մլրդ դրամի արտադրանք՝ հաջորդ տարիներին այն հասցնելով մինչեւ 2,2 մլրդ դրամի»:**

Էկոնոմիկայի նախարարի խոսքը շատ հարցեր է հանգուցալուծում: Միայն նրա ասածից է հասկացվում, որ ՀՀ կառավարության տված հարկային արտոնությունը վերաբերում է «Մեղրասարին», իմա՝ «Պրիխրեբտովոյե» եւ «Քարասար» հանքերեւակումներին: Զարմանք է հարուցում, որ էկոնոմիկայի նախարարը հանքերեւակումը ներկայացնում է որպես հանքավայր, ինչն անթույլատրելի է այդքան բարձր պաշտոն զբաղեցնողի համար: Փաստորեն, հասարակությանը կեղծ տեղեկություն է մատուցվում:

Հայտնի է, որ «ԱՏ-մետալսը» Քարասարի եւ Պրիխրեբտովոյե հանքերեւակումներում որոնողագնահատողական աշխատանքներ կատարելու թույլտվություն է ստացել (2007-2012թթ.), որի ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2014 թվականը: 2013-2014թթ. աշխատանքային ծրագրում ասվում է. **«Սույն ծրագրի կազմման նպատակն է գնահատել Մեղրու հանքային շրջանի Քարասարի եւ Պրիխրեբտովոյե ոսկու երեւակումները, դրանց հնարավոր արդյունաբերական նշանակության պարզաբանման եւ հետագա երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման եւ ամփոփման համար: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ամփոփել տեղամասի վերաբերյալ բոլոր ֆոնդային նյութերը, ինչպես նաեւ… ընկերության կողմից 2007-2012թթ. ընթացքում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալները»:**

Ինչպես տեսնում ենք, ընկերության կողմից 2013թ. ներկայացված փաստաթղթում գրված է, որ նոր պիտի գնահատվեն այդ երեւակումները եւ պարզվի դրանց հնարավոր արդյունաբերական նշանակությունը, երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարվեն, ֆոնդային նյութերն ամփոփվեն: Նույնիսկ ամփոփված չեն 2007-2012թթ. կատարած աշխատանքները: Այսինքն՝ դեռեւս հսկայածավալ աշխատանքներ կան կատարելու: Եվ այդ վիճակում դրանք հանքավայր ներկայացնելը կամ անտեղյակություն է, կամ՝ խաբեություն:

Ինչ վերաբերում է առաջացած պոչանքը շինարարության կամ ապակու արտադրության մեջ օգտագործելուն, ապա նախ պետք է ապացուցվի, որ դա թույլատրելի է՝ վտանգավոր չէ, այսինքն՝ պոչանքի մեջ գտնվող վտանգավոր նյութերը չեն գերազանցում սահմանային թույլատրելի քանակները: Եթե պոչանքը շինարարության մեջ այդքան հեշտ օգտագործելի լիներ, ապա այսօր հարյուրավոր ավազահանքեր չէին շահագործվի, քանզի ՀՀ տարածքում հարյուրավոր միլիոն տոննաների հասնող պոչանք կա: Մետաղական նոր հանքավայրի գովազդ անողը նախ պետք է տեղյակ լինի, թե պոչամբարները (ռեկուլտիվացված եւ շահագործվող) ինչ վիճակում են եւ ինչ ծավալների վնաս են հասցնում Հայաստանի Հանրապետության հողին, ջրին, օդին, բուսական ու կենդանական աշխարհին:

Պոչանքից ջրային համակարգին հասցրած վնասի առումով շատ հակիրճ դիտարկենք նույն տարածաշրջանի Ողջի գետը: Այս գետի եւ նրա Դարազամ, Փխրուտ, Գեղի, Գեղանուշ, Արծվանիկ վտակների հուներում, իսկ Նորաշենիկի ափում՝ պոչամբարներ են տեղադրված: Արդեն փակված, ռեկուլտիվացված Դարազամի պոչամբարի վրա տասնամյակներ շարունակ բանջարաբոստանային կուլտուրաներ ու մրգատու ծառեր են աճեցվում՝ փաստորեն պոչամբարը դարձել է սննդամթերք արտադրող ջրովի տարածք, իսկ Փխրուտի եւ Ողջու պոչամբարներն օգտագործվում են որպես արոտավայր («ռեկուլտիվացված»՝ մի կերպ հողով ծածկված, բզկտված պոչամբարների վրա արածեցումները, հունձքը, գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցումն արդեն հասկանալի են դարձնում, թե ՀՀ պաշտոնյաներն ինչու են պնդում, որ հանքարդյունաբերությունը երկրագործությանը-գյուղատնտեսությանը եւ մարդու առողջությանը վտանգ չի սպառնում):

Ողջի գետի հունում տեղադրված պոչամբարի վերին եզրը ծառայում է որպես պատնեշ՝ Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանին տեխնիկական ջուր մատակարարող ջրամբարի համար: Այս տարվա հունիսի 25-ին այդ ջրամբարը վթարվեց: Պոչամբարի տակով՝ Ողջի գետի հոսքն իր մեջ վերցնող բետոնե խողովակի տարողունակությունը բարեբախտաբար այս անգամ բավարարեց նաեւ վթարային ջրի համար, եւ պոչամբարը չհեղեղվեց (միայն անտերության պայմաններում է հնարավոր պոչամբարի մարմինը ծառայեցնել որպես ջրամբարի պատվար, այն էլ մեծ թեքության վրա, փաստորեն պոչամբարին ջուր է մատակարարվում, որը կարող է աղետի պատճառ դառնալ: Նույն անտերությունն է, որ բացարձակորեն անթույլատրելի տեղում կառուցել են Գեղիի պոչամբարը, որը հունիսի 25-ին վթարվեց, սակայն պետական համապատասխան ծառայությունները «չնկատեցին» կատարվածը): Փխրուտի եւ Ողջու պոչամբարներն ակոսված են տեղումների ջրերի առուներով, խոր առուներ ու փլվածքներ են առաջացել նաեւ բարբարոսաբար խողովակաշար անցկացնելու հետեւանքով: Նույն օրինախախտ վիճակում են նաեւ շահագործվող Արծվանիկի, Գեղանուշի եւ Գեղիի պոչամբարները: Դրանց հատակները նույն-

Շարունակությունը՝ էջ 6

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

²ðî²èàòàôÂÚàôÜ

Կառավարությունն «ԱՏ-մետալս»-ին հովանավորելով բացահայտում է իր հակաժողովրդական-հակապետական էությունը

Սկիզբը՝ էջ 5

պես մեկուսացված չեն, շրջապատն ապականված է պոչանքով, իսկ, օրինակ, Արծվանիկ գյուղի նախիրն արածում է պոչամբարի ափերին եւ խմում ծանր մետաղներ պարունակող պոչամբարի ջուրը: Այս պոչամբարի զբաղեցրած տարածքի 700 հեկտարն Արծվանիկ գյուղի հողերն են, որոնք Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանին տրվել են նաեւ բացառիկ հանրային շահի անվան տակ:

Ողջի լեռնային գետը, որի ավազանում հաշվվում է 842 գետ ու գետակ՝ տարեկան 302 մլն խմ (302 մլրդ լիտր) ջրի հոսքով, իրականում Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռում չպետք է տեղ գտնի, քանի որ արդեն դարձել է խմելու եւ ոռոգման համար ոչ պիտանի՝ մեռյալ գետ: Այս գետը շարունակաբար բազմապիսի բարիք է պարգեւել բուսակենդանական աշխարհին, սակայն վերջին տասնամյակներին, պոչանքով աղտոտվելու պատճառով, դարձել է չարիքի աղբյուր՝ շատերն այդ ջրով ոռոգում են կատարում: Լեռնային գետի 302 միլիարդ լիտր ջրի գինը թող որոշի էկոնոմիկայի նախարարությունը եւ հաշվարկի, թե Հայաստանի Հանրապետությունը միայն այս գետի ջրի հաշվով տարեկան ինչ կորուստներ է կրում... Նաեւ՝ պոչամբարները լուրջ սպառնալիք են ընդերքի ջրերի աղտոտման-թունավորման առումով:

...Եթե չկասեցվեն Մեղրու տարածաշրջանում տրված հանքշահագործման թույլտվությունները, ապա մի քանի տարվա ընթացքում Մեղրի գետը նույնպես կդառնա պոչանքով եւ հանքարդյունաբերական մյուս թափոններով թունավորված, ձկնատեսակները մշտապես կորցրած մի կոյուղի, այսինքն՝ կարժանանա Ողջի գետի ճակատագրին: Նաեւ պետք է նկատի ունենալ, որ Ողջի եւ Մեղրի գետերը հոսում են մեծ թեքություններով, եւ այդ գետերում վարարումները հաճախ են լինում, օրինակ 1965թ. վարարման ժամանակ Ողջի գետի ջրի ծախսը վայրկյանում կազմել է 322 խմ, երբ միջին տարեկանում՝ 9,6 խմ է... Հայտնի է, որ վարարումների ժամանակ գետերը հաճախ «հիշում» են իրենց բուն հուները: Դժվար չէ հաշվարկել, թե ինչ քանակությամբ պոչանք կսփռվի շրջակա միջավայր, եթե Ողջի գետի ավազանում խոշորածավալ վարարումներ լինեն:

Այստեղ ցանկանում եմ հարց տալ լեռնաշղթայի հենց կատարին, ջրագոյացման ու ջրամատակարարման համակարգերում բազմամետաղային նոր հանքավայրի շահագործումը եւ Տաշտունի տարածքում հանքաքարի վերամշակման գործարանի կառուցումը գովազդող էկոնոմիկայի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծրագրում արդյո՞ք կա թեկուզ մի գետ, որի ջրերն անաղարտ են մնալու եւ չպիտի թունավորվեն պոչանքներով:

Տաշտուն գյուղի տարածքում ապօրինաբար հանքավերամշակման արտադրություն կառուցելու խնդրով՝ ՀՀ ոստիկանություն, դատախազություն, բնապահպանության նախարարություն, վարչապետին եւ նախագահին են դիմել Մեղրի քաղաքի ավագանին եւ մի շարք հասարակական կազմակերպություններ:

Բերեմ այդ դիմումներից մեկը: ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանին ուղղված՝ Հայաստանի կանաչների միության դիմումում (15.07.2013թ.) ասվում է. **«Այս տարվա հունիսի 28-ին եւ 29-ին ականատես եղա այն փաստին, որ «ԱՏ-մետալս» ընկերությունը Սյունիքի մարզի Տաշտուն գյուղի վարչական տարածքում հանքավերամշակման արտադրամաս է կառուցում, ընթացքում առաջացած հողային զանգվածը լցնելով Տաշտուն լեռնային գետի հունի անմիջական հարեւանությամբ. այդ ժամանակ արդեն հողը լցվում էր նաեւ Տաշտուն գետը: Շինարարություն իրականացնողները հրաժարվեցին փաստաթղթեր ներկայացնելուց, պատճառաբանելով, թե դրանք գտնվում են «ԱՏ-մետալս» ընկերության երեւանյան գրասենյակում: Հուլիսի 1-ին գնացի նշված գրասենյակ, որի պատասխանատու անձ Հայկ Մեժլումյանն ասաց, որ շինարարության թույլտվության փաստաթղթերը գտնվում են Տաշտուն գյուղում: Այդ նույն օրը՝ հուլիսի 1-ին, ՀՀ բնապահպանության նախարարությունից տեղեկացա, որ ընկերությունն այս հարցին առնչվող որեւէ փաստաթուղթ դեռեւս չէր ներկայացրել փորձաքննության: Նախարարությունից նույնպիսի պատասխան ստացա նաեւ այսօր՝ հուլիսի 15-ին: Պարզվում է, որ «ԱՏ մետալս» ընկերությունը ոչ միայն շինարարական աշխատանքներ սկսելու թույլտվություն չունի, այլեւ համապատասխան նախագիծը դեռեւս չի ներկայացրել բնապահպանության նախարարություն՝ փորձաքննություն իրականացնելու համար: Վստահ ենք, որ Ձեր միջամտությամբ կկասեցվի «ԱՏ-մետալս» ընկերության կողմից իրականացվող նշված ապօրինի գործունեությունը, իրավախախտները պատասխանատվության կենթարկվեն եւ «ԱՏ-մետալս» ընկերության միջոցներով ավերված տարածքները կբերվեն նախնական տեսքի»:**

Այս դիմումի հետ կապված առայժմ ստացվել է երեք տեղեկացում: ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետ Դ.Սարգսյանը Սյունիքի մարզի դատախազ Ն. Հակոբյանին գրում է (թիվ 16-358-13, 19.07.2013թ.). **«Քննարկման նպատակով ուղարկվում է Հայաստանի կանաչների միության կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 15.07.2013թ. դիմումը «ԱՏ-մետալս» ընկերության կողմից Սյունիքի մարզի Տաշտուն գյուղում ապօրինի շինարարական աշխատանքներ կատարելու վերաբերյալ...»:** Իսկ Սյունիքի մարզի ավագ դատախազ Ս.Համբարձումյանը Սյունիքի մարզի քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կ.Գաբրիելյանին գրում է (թիվ 16-246-13, 31.07.2013թ.). **«Ուղարկում եմ Հայաստանի կանաչների միության դիմումը՝ «ԱՏ-մետալս» ՍՊ ընկերության կողմից Սյունիքի մարզի Տաշտուն գյուղում ապօրինի շինարարական աշխատանքներ կատարելու վերաբերյալ նախապատրաստված նյութերին կցելու եւ համատեղ ընթացք տալու»:** Երրորդ տեղեկացումը հետեւյալն է՝ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրու բաժնի պետ Հ.Խաչատրյանը Հայաստանի կանաչների միության նախագահին գրում է. **«Ձեր 30.06.2013թ. դիմումին հայտնում ենք, որ ոստիկանության Մեղրու բաժնում «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ի կողմից Տաշտուն համայնքի վարչական տարածքում առանց համապատասխան փաստաթղթերի շինարարություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր եւ 29.07.2013թ. նյութերն ուղարկվել են Սյունիքի մարզի քննչական բաժին հետագա ընթացքը որոշելու համար»** (թիվ 79-3/1-1067, 26.07.2013թ.):

Տաշտունում ապօրինաբար շինարարություն կատարելու հետ կապված՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը Համահայկական բնապահպանական ճակատի անդամ L. Գալստյանին գրում է (թիվ 5/12.1/9271, 25.07.2013թ.). **«Սյունիքի մարզի Տաշտուն համայնքի վարչական տարածքում «ԱՏ-մետալս» ընկերության կողմից հանքաքարի վերամշակման գործարանի կառուցման... ապօրինի շինարարության դեպքը հայտնաբերվել էր բնապահպան ակտիվիստներից ստացված ահազանգի հետեւանքով, բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից տեղում կատարված ուսումնասիրության արդյունքներով դադարեցվել էր միայն գործարանի կառուցման գործընթացը: Ինչ վերաբերում է նշված աշխատանքների հետեւանքով շրջակա միջավայրին պատճառած վնասին, ապա դրանք հաշվարկվելու են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ընկերությանը կներկայացվի վնասի հատուցման պահանջ: Գործի հանգամանալից քննությունից հետո օրենքով նախատեսված կարգով ՀՀ բնապահպանության նախարարությունը կդիմի իրավապահ մարմիններին»:**

ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական գլխավոր տեսուչը նույն անձին՝ L.Գալստյանին, տեղեկացրել է. **«ՀՀ Սյունիքի մարզի Տաշտուն համայնքի տարածքում «ԱՏ-մետալս» ընկերության կողմից առանց քաղաքաշինական եւ իրավական փաստաթղթերի ձեւակերպման, փաստորեն ինքնակամ, իրականացվում են բետոնապատման եւ հողային աշխատանքներ: Մեր կողմից 2013թ. հուլիսի 12-ին Տաշտուն համայնքի ղեկավարին ուղարկված թիվ 25/25.2/4345-13 գրությամբ առաջարկվել է կասեցնել ինքնակամ իրականացվող շինարարությունը եւ միջոցներ ձեռնարկել հետեւանքների վերացման ուղղությամբ»:**

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Առաքելյանը Մեղրու ավագանու բնապահպանական հանձնաժողովի նախագահին գրում է (թիվ 79-8/2-1238, 23.08.2013թ.). **«Հայտնում եմ Ձեզ, որ Տաշտուն համայնքի վարչական տարածքում «ԱՏ-մետալս» ՍՊ ընկերության կողմից ապօրինի հողօգտագործման եւ ինքնակամ շինարարության դեպքի առիթով նախապատրաստվում են նյութեր, 01.08.2013թ. ոստիկանության Մեղրու բաժնին տրվել է հանձնարարություն՝ շինարարությունն անհապաղ դադարեցնելու համար, որից հետո կրկին հանձնարարություն է տրվել ամենօրյա հսկողություն իրականացնելու՝ շինարարության հնարավոր վերսկսումն անհապաղ հայտնաբերելու եւ կանխելու»:**

Այն, որ ապօրինությունների դեմ պայքարողների դիմումներին պետական տարբեր մարմինների պատասխաններում հավաստվում է, որ ստուգել ու հաստատել են ապօրինի հողօգտագործման ու ինքնակամ շինարարության փաստը, որ շինարարությունն իրականացվում է առանց քաղաքաշինական եւ իրավական փաստաթղթերի ձեւակերպման, դադարեցրել են շինարարական աշխատանքները, ընկերությանը շրջակա միջավայրին հասցրած վնասի հատուցման պահանջ են ներկայացնելու ու նրա դեմ դատական հայց են նախապատրաստում, խնդրի արդար լուծման՝ տարածքները նախնական տեսքի բերելու, մեղավորներին պատժելու հույս էր առաջացել: Նաեւ վստահություն կար, որ ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով վերը բերված ապօրինությունների աղաղակող փաստերը, առոչինչ կճանաչի «ԱՏ-մետալս»-ին հարկային արտոնություն տվող իր թիվ 514-Ա որոշումը:

Սակայն պարզվեց, որ ՀՀ կառավարությունն անհողդողդ է իր ապօրինի որոշումը պաշտպանելու եւ իր իսկ ենթակայության տակ գտնվող գերատեսչությունների կարծիքն անտեսելու գործում: Օգոստոսի 15-ի թիվ 864-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը վերահաստատել է ամիսներ առաջ «ԱՏ-մետալսին» հարկային արտոնություն տվող իր 514-Ա որոշումը: Այս անգամ էլ այդ ընկերությանը թույատրել է արտոնյալ պայմաններում ՀՀ ներմուծել ամբարձիչ, թրթուրավոր բուլդոզեր, թրթուրավոր էքսկավատոր, կշեռքներ...

Սիա ՀՀ կառավարության իրական դեմքը. արհամարհանք ժողովրդի ու պետության նկատմամբ, սակայն հետեւողականություն՝ ժողովրդի ունեցվածքը փոշիացնելու եւ Հայաստանի Հանրապետության տարածքը կայուն թույներով վարակելու գործում:

Չնայած սկզբնական շրջանում հուսադրող պատասխանների, քննարկվող խնդրում օրենքի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորեց նաեւ դատահիրավական համակարգը:

«ԱՏ-մետալսի» գործողությունների դեմ հասարակական կազմակերպությունների բողոքներին պատասխանել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժինը (27.08.2013թ., No 79-8/2-1246): Ավագ քննիչ Ա.Առաքելյանի ստորագրությամբ պատասխանում գրված է. **«...Սյունիքի մարզի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որոնցով պարզվել է, որ «ԱՏ-մետալս» ՍՊ ընկերությունը հայ-ռուսական համատեղ ձեռնարկություն է, որն իրականացնում է ներդրումային ծրագիր... 2013թ. ընթացքում ընկերության կողմից կատարվել է 3,5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրում... Դեռեւս 2012թ. նոյեմբերի 29-ին «ԱՏ-մետալս» ՍՊ ընկերությունը դիմել է Տաշտունի համայնքի ղեկավար Հ.Գաբրիելյանին՝ ընկերության կողմից բազմամետաղների վերամշակման փորձարարական գործարան կառուցելու նպատակով տարածք հատկացնելու համար: Դրանից հետո համայնքի բնակչության շրջանում կատարվել են լսումներ եւ գործարան կառուցելու համար նախատեսվել է տրամադրել 2,155 հա հողատարածք, որի նպատակային նշանակությունը «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 2013թ. ապրիլի 23-ի դրական եզրակացության հիման վրա փոխվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի...Մինչեւ «ԱՏ-մետալս» ընկերության կողմից բազմամետաղների վերամշակման փորձարարական գործարան կառուցելու համար օրենքով սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի ձեւակերպումը եւ թույլտվության ստացումը՝ ընկերության ղեկավարությունը 2013թ. ապրիլի 30-ին դիմել է Տաշտունի համայնքի ղեկավարին՝ խնդրելով թույլատրել նշված հողամասի վրա կատարել նախապատրաստական աշխատանքներ գործարանի կառուցման համար՝ մինչեւ օրենքով սահմանված կարգով թույլտվություն ստանալը, որից հետո ընկերությունը... սկսել է ինքնակամ շինարարություն իրականացնել: Համայնքի ղեկավար Հ.Գաբրիելյանը... ինքնակամ կառույց իրականացնող անձանց նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ դիտավորությամբ չի կիրառել: Այսինքն՝ Հ.Գաբրիելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 315-2-րդ հոդվածով նախատեսված ոչ մեծ ծանրության հանցագործություն... 2013թ. օգոստոսի 26-ին Տաշտուն համայնքը նշված հողամասն օտարելու համար իրականացրել է աճուրդ-վաճառք, որի արդյունքում հողամասը ձեռք բերելու համար հայտ ներկայացրած ընկերություններից հաղթել է «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ն... Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 74 հոդվածի՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե իրադրության փոփոխման հետեւանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Նկատի ունենալով, երբ «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել Տաշտուն համայնքի... հողամասը եւ կառուցապատման համար ստացել ճարտարապետահատակագծային առաջադրանք, իսկ ներկա պահին դադարեցվել է ինքնակամ շինարարությունը, ղեկավարվելով օրենսգրքի 37 հոդվածի 2-րդ մասով... ՈՐՈՇԵՑԻ՝ 1. Սյունիքի մարզի Տաշտուն համայնքի ղեկավար Հ.Գաբրիելյանի կողմից իրավական ակտերով իր վրա դրված՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը, շինության ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով դիտավորությամբ միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաեւ հողամասն ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող անձանց նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ դիտավորությամբ չկիրառելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով**

²ðî²èàòàôÂÚàôÜ

քրեական գործի հարուցումը մերժել՝ իրադրության փոփոխման հիմքով նրա կատարած արարքը հանրության համար վտանգավոր լինելուց դադարելու պատճառաբանությամբ»:

Այս պատասխանին համաձայնել է Սյունիքի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Համբարձումյանը:

Ներկայացնեմ ծայրից ծայր սարքովի այս փաստաթղթի բովանդակության հետ իմ անհամաձայնություններից մի քանիսը:

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչի ներկայացմամբ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ «ԱՏ-մետալսը» օրինապահ ընկերություն է եւ հենց սկզբից խոսում է ընկերության կողմից կատարված ներդրումների մասին, հավանաբար լավ իմանալով, որ բնակչությունը, պետականորեն իրականացվող միակողմանի քարոզչության հետեւանքով, դեռեւս տեղյակ չէ եւ չի գիտակցում, որ ներդրումները, գլխավորապես հանքարդյունաբերության ոլորտում կատարվող ներդրումները, որ հիմնականում ընդերքը քանդող-ջարդող-աղացող, փոշի դարձնող թանկարժեք տեխնիկա գնելն է, շահեկան են միայն ներդրում կատարողների եւ այդ ներդրման համար ճանապարհ հարթող պետական պաշտոնյաների համար: Ինչպես տեսանք թե՛ կառավարության որոշման մեջ, թե՛ էկոնոմիկայի նախարարի խոսքում «ներդրում» բառի առատություն է: Եվ դա պատահական չէ: Պետական պաշտոնյաների բառապաշարում առանձնահատուկ տեղ զբաղեցնող «ներդրումները», կարծում եմ, ոչ թե ճաշակի հարց է, այլ միջազգային վարկատու եւ ազդեցիկ այլ կազմակերպություններին իրենց հավատարմությունը վերահաստատելու միջոց: Հայտնի է, որ ավելի քան 20 տարի առաջ ՀՀ իշխանավորները համաձայնեցին տնտեսությունը վարել «Վաշինգտոնյան կոնսենսուսի» շոկային թերապիայի 10 պատվիրաններին համապատասխան, որոնցից մեկը հետեւյալն է՝ «Պետք է ընդունվի օտարերկրյա ներդրմանը խթանող քաղաքականություն»:

2. Ավագ քննիչը եւ որոշմանը համաձայնող դատախազության պաշտոնյան մեծ պատասխանատվություն են վերցնում իրենց վրա, ասելով, թե դեռեւս 2012թ. ընկերությունը գործարան կառուցելու համար տարածք ստանալու նպատակով դիմել է Տաշտունի համայնքի ղեկավարին, ինչով փորձ է արվում տպավորություն ստեղծել, որ «ԱՏ-մետալսի» կողմից կատարված ապօրինի հողօգտագործումն ու շինարարությունն իբր օրինական են: Կարելի է ենթադրել, որ նրանք կամ պատկերացում չունեն տվյալ բնագավառին վերաբերող օրենքների մասին կամ պատվեր են կատարում, քանի որ, ըստ գոյություն ունեցող ընթացակարգի, ընկերությունը նախ պետք է կազմեր գործարանի կառուցման նախագիծը, համապատասխան գերատեսչություններից դրական եզրակացություն ստանար, որից հետո միայն հողամասի հարցով դիմեր համայնքապետին: Մեկ անգամ եւս ստիպված եմ կրկնել, որ առ այսօր այդ գործարանի կառուցման նախագիծը դեռեւս գոյություն չունի:

3. Ինչ վերաբերում է համայնքի բնակչության շրջանում տեղի ունեցած լսումներին եւ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացությանը, ապա արդեն ասվել է, որ երկուսն էլ ապօրինի են, քանի որ դրանց իրականացման ժամանակ բացակայել է հիմնական փաստաթուղթը՝ նախագիծը, որը պետք է դառնար թե՛ լսումի քննարկման առարկան, թե՛ հողի նշանակությունը փոխելու հիմնավորումը:

4. «ԱՏ-մետալսն» ապօրինաբար գործարան է կառուցում, սակայն իրավապահ մարմինները չեն ցանկանում այդ ընկերության դեմ քրեական գործ հարուցել: Խնդիրը մեղմելու նպատակով որոշման մեջ ասվում է, որ ընկերությունը մինչ այդ դիմել է համայնքի ղեկավարին եւ ապա՝ խնդրելով թույլատրել... Իսկ այդ «թույլատրելն» էլ պետք է հասկացվի՝ ավերել ու ոչնչացնել Տաշտունի հողերը, առայժմ հողով ու շինարարական աղբով, իսկ հետո՝ պոչանքով աղտոտել-թունավորել նաեւ Տաշտուն լեռնային գետը: Եթե ընկերությունն, ինչ-ինչ պատճառներով, չի ցանկանում հարգել օրենքը եւ գործում է ըստ իր ցանկության, ապա իրավապահ մարմինները պարտավոր են իմանալ, որ Տաշտուն գյուղի տարածքում հանքաքարի վերամշակման գործարան կառուցելու հարցը պետք է լուծվի 10-12 գերատեսչությունների համաձայնությամբ, այլ ոչ թե համայնքապետին դիմելով ու խնդրելով:

5. Այն պնդումը, որ Տաշտունի համայնքապետը կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, քանի որ ինքնակամ կառույց իրականացնող անձանց նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ դիտավորությամբ չի կիրառել, կարելի է ասել, որ սա ուղղակի զավեշտ է: Հենց որոշումից հասկացվում է, որ ընկերությունը եւ համայնքի ղեկավարը փոխհամաձայնությամբ են այդ ապօրինի գործը կատարել: Հասարակական կազմակերպությունները դիմել են իրավապահ մարմիններին, որպեսզի օրենքի իշխանությունը հաստատվի, եւ մեղավորները պատժվեն, իսկ որոշման մեջ առաջարկվում է, որ փոքր հանցանք կատարողը պատժի ՀՀ կառավարության կողմից ակնհայտորեն հովանավորվող մեծ հանցանք կատարողին՝ «ԱՏ-մետալսին», այն էլ այն դեպքում, երբ նրանք արդեն բարեկամ-գործընկերներ են, եւ հողատարածքը կառուցապատման տակ դնելիս նրանց միջեւ հակասություն, վեճ, բռնություն ցույց տվող որեւէ փաստ գոյություն չունի: Հակառակը, համայնքի ղեկավարն այս տարվա հունիսի 29-ին, ապօրինի շինարարության վայրում, ակտիվորեն պաշտպանում էր ընկերությանը:

6. Ինչ վերաբերում է հողամասի աճուրդ-վաճառքին, ապա այն կատարվել է փակ դռների հետեւում, երբ հայտարարության մեջ նշված չէր, որ այն փակ է լինելու («Հայաստանի Հանրապետություն», 27.07.2013թ.): Այդ աճուրդ կոչվածին մասնակցել են երեք հոգի, որոնցից մեկը՝ Տաշտունի համայնքապետը: Որոշման մեջ գրված է, որ հողամասը ձեռք բերելու համար հայտ ներկայացրած ընկերություններից հաղթել է «ԱՏ-մետալսը»: Սրանից կարելի է եզրակացնել, որ աճուրդին՝ որպես գնորդ մասնակցել է երկու ընկերություն («ԱՏ-մետալսը» եւ հանքարդյունաբերությամբ զբաղվող մեկ այլ ընկերություն), քանի որ ըստ հայտարարության՝ հողամասը ծառայելու է արդյունաբերական օբյեկտի՝ ֆաբրիկայի կառուցման համար: Եթե վստահենք գրվածին, ապա ստացվում է, որ մեկ այլ հանքավայրի տեր նույնպես ցանկացել է Տաշտունի վարչական տարածքում հանքաքարի վերամշակման գործարան կառուցել, այսինքն՝ Տաշտուն գյուղի մոտակայքում շահագործվելու է նաեւ մեկ ուրիշ հանքավայր: Եվ դա հավանական է, քանի որ 2005թ. դեկտեմբերի 7-ին «Հեմատիտ» ընկերությանը տրվել էր Տաշտունի «Ձրկապի տեղամասի» ոսկու հանքերեւակման ուսումնասիրության լիցենզիա (Մեղրու տարածաշրջանի բնակիչները պետք է իմանան, որ «Սթորթրանս» ՓԲԸ-ն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2013-2016թթ. Տաշտունի բազմամետաղային հանքերեւակումում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու թույլտվություն է ստացել): Նաեւ ամենագլխավորը՝ հողատարածքն արդեն ավերված է, շենքերը կառուցվում են, նախագիծը բացակայում է, եւ այս պայմաններում աճուրդ-վաճառք է հայտարարվում: Դժբախտաբար, ավագ քննիչը եւ դատախազության պաշտոնյան այս աղաղակող ապօրինությունները նույնպես չեն նկատում, հակառակը՝ որոշման մեջ գրված է. «Նկատի ունենալով, որ «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել Տաշտուն համայնքի հողամասը...»:

7. Որոշում կազմողն ու դրան համաձայնողը խնդիրը հանգուցալուծում են այն կեղծ հիմնավորմամբ, որ արդեն դադարեցվել է ինքնակամ շինարարությունը, եւ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, որ իրադրության փոփոխման հետեւանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Փաստաթղթից հասկացվում է, որ մեղքի թողություն ստացած անձն էլ գյուղապետն է եւ վերջ, այլ մեղավոր չկա: Որոշման մեջ, փաստերը շրջանցելով, չի ասվում, որ, օրինակ, հուլիսին բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից դադարեցվել են հանքաքարի վերամշակման գործարանի կառուցման աշխատանքները, իսկ օգոստոսի 1-ին շինարարությունն անհապաղ դադարեցնելու հանձնարարություն է տրվել նաեւ ոստիկանության Մեղրու բաժնին, սակայն «ԱՏ-մետալսը» շարունակել է ապօրինի շինարարությունը եւ այն դադարեցրել է միայն օգոստոսի 24-ին: Նաեւ՝ հիմնազուրկ է այն պնդումը, թե իբր կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Ակնառու է, որ Տաշտունի տարածքում կառուցվող հանքաքարի վերամշակման գործարանի հավանական շահագործումը կդառնա մեծ սպառնալիք ներքեւի նիշերում գտնվող խմելու ջրի աղբյուրներին, պոչանքով կաղտոտի-կթունավորի նաեւ Մեղրի գետը եւ դրա հովիտը կկորցնի իր գյուղատնտեսական նշանակությունը: Այստեղ չեմ խոսի մարդկանց առողջությանը սպառնացող վտանգների մասին, քանզի դա բոլորին է հայտնի:

Ակնհայտ է, որ Տաշտունի տարածքում հանքաքարի վերամշակման գործարանի կառուցումը Մեղրու տարածաշրջանի դեմ կատարվելիք հանցագործության սկզբնամասն է, որի իրական՝ մարդակուլ կերպարանքը տեսանելի կդառնա նշված օբյեկտների շահագործելուց միայն տարիներ անց, եթե իհարկե, ոսկի եւ մյուս մետաղներ կորզելու մոլուցքով տառապողների, հայ ժողովրդի հարստությունները կողոպտողների ցանկությունները չզսպվեն:

Սյունիքի մարզի քննչական բաժնի կազմած փաստաթղթում, անտեսելով առկա փաստերը, ամեն կարգի ջանք թափելով փորձել են «ԱՏ-մետալսին» անմեղ ներկայացնել: Իսկ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը» կարդալիս դժվարանում ես հավատալ, որ դրա գրողը եւ գրածի հետ համաձայնողն իրավաբանության ոլորտում են աշխատում: Մնում է ենթադրել, որ որոշումը ճնշման տակ է ձեւակերպվել, իսկ ճնշումն էլ կատարվել է մի մարդու կողմից կամ նրա անունից, ով վստահ է, որ ինքն ավելի բարձր է, քան Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը...

Ընդհանրապես տպավորություն է ստեղծվում, որ պետական պաշտոնյաներին Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես Մեղրու տարածաշրջանը հետաքրքրում է միայն ընդերքում եղած մետաղների առումով, այն էլ ոչ թե պետական կարիքների, այլ առանձին ընտանիքներին հարստացնելու համար: Դժվար է հավատալ, որ պետական պաշտոնյաները չեն գիտակցում, որ այդ տարածաշրջանում մետաղական հանքերի համատարած շահագործման հետեւանքով, ինչպես դա երեւում է տրված արտոնագրերի ցանկից, այդտեղ վերանալու է երկրագործությունը, եւ այն դառնալու է անմարդաբնակ:

Հայաստանի Հանրապետությունում գերշահույթ ստանալու գլխավոր գրավականը հարկային արտոնություններն են: Վերն արդեն ասվել է այդ արտոնություններից մեկի մասին: Բերեմ հանքշահագործողներին պարգեւած արտոնություններից եւս մի քանիսը:

Երկրորդ արտոնությունն այն է, որ հանքշահագործողները (ըստ պաշտոնական տվյալների, մեր երկրում շահագործվում է մոտ 500 հանքավայր, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական) ՀՀ տնտեսությանը՝ հողին, ջրային համակարգին, բուսական ու կենդանական աշխարհին, պատմամշակութային օբյեկտներին հասցվելիք վնասը հաշվարկում են, սակայն պետական գանձարան ոչինչ չեն մուծում (ինձ հայտնի չէ, թե դա որ օրենքով է սահմանված): Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքը պատկանում է հանքշահագործողներին, երբ սահմանադրությամբ այն ժողովրդի-պետության սեփականությունն է:

Երրորդ արտոնություն՝ հանքշահագործողներն արտոնված են հանքարդյունաբերության հետեւանքով առաջացած մակաշերտը, լեռնային զանգվածը, «դատարկ» ապարները եւ պոչանքը Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրելու դիմաց հարկեր չվճարել (տես՝ Բնապահպանական վճարների դրույքաչափի մասին օրենքը): Որպեսզի խուսափեն պետական հարկեր վճարելուց, օրենքներում լեռնային զանգվածը եւ «դատարկ» ապարները քողարկել են «լցակույտեր» անվան տակ, իսկ պոչամբարները (պոչանքը) օրենքներում չեն երեւացել մինչ 2011 թվականը, երբ համարձակվեցին նոր օրենքում պոչամբարներն անվանել «տեխնածին հանքավայրեր» եւ անվճար «նվիրել» Հայաստանի Հանրապետությանը, լավ իմանալով, որ պոչամբարների պահպանումը՝ շրջակա միջավայրից մեկուսացված պահելը հազարամյակներ շարունակ ծախսեր է պահանջելու: Հանքարդյունաբերության թափոնների (մակաշերտ, լեռնային զանգված, «դատարկ» ապարներ, պոչանք) հարկման դեպքում, պետական բյուջեն մի քանի անգամ կմեծանա: Հարկեր չվճարելու այսօրվա պայմաններում ստացվում է, որ ՀՀ տարածքը հանքշահագործողների սեփականությունն է:

Չորրորդ արտոնություն՝ հանքարդյունաբերությունից առաջացած գերշահույթը բաժին է հասնում հանքշահագործողներին, երբ, ըստ ՀՀ սահմանադրության, ընդերքի հարստությունը ժողովրդի սեփականությունն է, հետեւաբար գերշահույթի հիմնական մասը պետք է հասնի ժողովրդին-պետությանը:

Հինգերորդ արտոնություն՝ հանքերեւակումների եւ հանքավայրերի ուսումնասիրության թույլտվությունը տրվում է առանց նախկինում կատարված երկրաբանական ուսումնասիրությունների համար ծախսված գումարների փոխհատուցման: Խորհրդային իշխանության տարիներին հայտնաբերված հանքերեւակումների եւ հանքավայրերի վրա շատ մեծ գումարներ են ծախսվել, օրինակ, Սյունիքի մարզի Շահումյանի ոսկու հանքավայրի ուսումնասիրության վրա ծախսվել է 160 մլն ռուբլի, իսկ ծախսված այդ միջոցները հատկացվել են պետական բյուջեից, այսինքն՝ ժողովրդի ունեցվածքից, հետեւաբար երկրաբանական տեղեկատվությունը պետք է դիտարկվի որպես երկրաբանության ոլորտի արտադրանք եւ որպես ժողովրդի սեփականություն՝ դառնա վճարովի: Ընկերություններն իրենց կողմից շահագործվող հանքավայրի ուսումնասիրության վրա նախկինում պետության ծախսած գումարը պետք է մուծեն պետական գանձարան: Նախկինում կատարված ծախսերի դիմաց չվճարելն է, որ շատ ընկերություններ հանքերեւակումների մի քանի թույլտվություններ են վերցնում:

Կան նաեւ այլ արտոնություններ, սակայն միայն թվարկվածները եւ իշխանական համակարգում տիրող կոռուպցիան ու պետության շահերի անտեսումն արդեն բավարար են, որ մոտակա տարիներին Հայաստանի Հանրապետությունը զրկվի իր ընդերքի հարստություններից, իսկ տարածքը դառնա ապրելու համար ոչ պիտանի:

Ստեղծվել է անելանելի իրավիճակ. մի կողմից նոր օրենքներ ընդունելով եւ օրենքների մեջ փոփոխություններ կատարելով հասել են այն բանին, որ ժողովրդի-պետության բացառիկ սեփականությանը՝ ընդերքի հարստություններին հեշտությամբ տիրանում են առանձին ընտանիքներ, եւ օրը ցերեկով կատարվող այս հանցագործության դեմ պայքարողներն առաջին հերթին հանդիպում են օրենսդրական խոչընդոտների, մյուս կողմից, երբ ցույց են տրվում դեռեւս ժողովրդի-պետության շահերը պաշտպանող օրենսդրական դրույթներին հակասող ծրագրեր, այս անգամ էլ խնդիրը հիմնականում լուծվում է ճիշտ այնպես, ինչպես օրինակ, «ԱՏ-մետալսի» պարագայում:

Ոստիկանության եւ դատախազության ծառայողները գուցե սթափվեն ու գիտակցեն, որ նաեւ իրենց գործունեության հետեւանքով է, որ Հայաստանի Հանրապետությունը կարճ ժամանակահատվածում դարձավ դրախտ՝ օրենքից վեր կանգնած արտոնյալների, սակայն մղձավանջ՝ հայ մարդու համար, ինչպես նաեւ հայ մարդկանց զգալի զանգված արդեն լքել է իր երկիրը:

Այս պայմաններում, բարեբախտաբար, կա մի հուսադրող լույս, դա այն է, որ հայ մարդկանց մեծամասնությունն արդեն հասկանում է, որ տիրող անարդարությունն ու աշխատատեղեր չստեղծելն արվում է նաեւ այն նպատակով, որ Հայաստանի Հանրապետությունում հնարավորինս քիչ հայ մնա: Այս գիտակցումն է, որ իրավունքների ոտնահարման եւ ապրուստի միջոցների ծանր պայմաններում, նրանց կառչած է պահում իրենց բնօրրանին: Ստեղծված իրավիճակում ծայր աստիճան կարեւոր է ժողովրդի ակտիվ վերաբերմունքն իր ապագայի նկատմամբ: Միայն հասարակության ակտիվ միջամտությամբ հնարավոր կլինի կանխել մասնավորապես Մեղրու տարածաշրջանի ամայացումը:

14.09.2013թ.,

armgreen@ipia.sci.am
armgreen@rambler.ru

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ● 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 27 (300)

ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Իմ առջեւ երբեք նպատակ չեմ դրել ամեն գնով որեւէ գործ անել»

Հարցազրույց Մեղրու «ՃՇՇՁ» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյանի հետ

Սկիզբը՝ էջ 1

օգոստոսի 1-ին, բայց օգտագործելով նպաստավոր եղանակը, կամրջի հիմնանորոգումը սկսեցինք հուլիսի 15-ին՝ նախապես կուտակած լինելով անհրաժեշտ շինանյութեր, հիմնականում աշխատեցինք սեփական ուժերով, ընկերության տեխնիկայով, աշխատանքների մեջ ընդգրկվել էր 30 ճանապարհաշինարար: Հիմնովին քանդեցինք կամուրջը, ամրացրինք կամրջի թռիչքային մասի տակի գետի հունը, որոշակի ուղղություն տվեցինք կամրջի երթեւեկելի մասին, մայթը նեղացրինք 1.5մ, ինչի շնորհիվ կամրջի երթեւեկելի մասը նույնքան լայնացավ: Աշխատանքային խումբը, ուսումնասիրելով արվածը, առանձնապես թերություն չարձանագրեց:

Կամրջի հիմնանորոգման ժամանակ մի խնդրի բախվեցինք: Քիչ ներքեւ գտնվում էր միաթռիչք, փոքրականամար կամուրջը՝ կառուցված 18-րդ դարում: Խնդիրն այն էր, որ հիմնական կամուրջը հիմնանորոգելիս այն չտուժեր: Մեր ճանապարհաշինարարները շատ զգույշ գտնվեցին, այդ կամուրջն այժմ կա իր նախաստեղծ վիճակով:

– Փաստորեն ծանրաքաշ մեքենաները մեկուկես ամիս երթեւեկում էին Մեղրի-Կապան այլընտրանքային ճանապարհով, ինչը, ասես, փորձաքննություն էր վերջինիս համար, իրականում այլընտրանքային այդ ճանապարհը շահագործումից ի վեր նման ինտենսիվությամբ չէր գործել:

– Իրավ է, Մեղրի-Ծավ-Կապան ճանապարհում երբեւէ մեքենաների այդպիսի հոսք չէր նկատվել: Մեր ընկերության կառուցած հատվածում (այլընտրանքային այդ մայրուղին կառուցել է ճանապարհաշինարարական չորս կազմակերպություն, ծանոթ. խմբ.) բացասական երեւույթներ չնկատվեցին: «Դորոժնիկ» ՍՊ ընկերության կառուցած հատվածում նստվածքներ են եղել, որոնք մեր ուժերով վերացվեցին, Ճակատեն գյուղի մոտ սողանքային երեւույթներ են արձանագրվել: Այնուամենայնիվ, լավ է, որ այս ամենը խաղաղ ժամանակներում եղավ եւ մեզ էլ հուշեց, թե նման դեպքում ինչ կարելի է անել:

Բացի կամրջի հիմնանորոգումից՝ ընկերության շինարարները զբաղված են միջպետական, հանրապետական եւ մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ պահպանմամբ՝ ճանապարհներից աղբի հեռացում, կողնակների հարթեցում: Նաեւ պաշտպանության նախարարության պատվերն ենք կատարում, որ նախատեսված է այս եւ 2014 թվականին: Անում ենք հնարավորը, որ տարածաշրջանի ճանապարհները երկար կյանք ունենան: Մատների արանքով չենք նայում գործին: Ճիշտ է, կառավարությունը միջոցներ է հատկացնում, ասենք, ճանապարհների ձմեռային պահպանության համար, բայց դրանով ընդամենը մեքենան պիտի գնա, հերթապահի եւ հետ գա: Շատ բան, թող ինքնագովություն չլինի, անում ենք անձնական նախաձեռնության եւ ձեռներեցության շնորհիվ, մեր օգուտների հաշվին:



Միջնադարյան կամուրջը՝ նորակառույցի հարեւանությամբ

– Ձմեռը յոթ սարի հետեւում չէ, եւ օրախնդիր են դառնում ճանապարհների ձմեռային սպասարկումը եւ պահպանումը:

– Այդ նպատակով պետբյուջեից հատկացվող գումարը մնացել է նույնը: Գոհացնողն այն է, որ ձմեռային պահպանության համար անհրաժեշտ տեխնիկան կազմ ու պատրաստ է, ընկերությունը ձեռք է բերել 270տ աղ, ավազն ըստ պահանջի կուտակված է:

– Վերջերս հանրապետության նախագահի՝ Ռուսաստան կատարած այցից հետո Հյուսիս-հարավ ճանապարհի մասին խոսակցությունները սաստկացել են, թե իբր Ռուսաստանի Դաշնությունը ձգտում է, որ ինքն էլ մասնակցի այդ ճանապարհի կառուցմանը: Հիշում եմ, որ մեր թերթում տպագրվեց («Սյունյաց երկիր», 12 նոյեմբերի 2012թ.) տեղեկատվություն այն մասին, որ 2012-ի նոյեմբերի 9-ին Մեղրի էին ժամանել չինական «Սի-սի-սի-սի» ընկերության ներկայացուցիչները՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մի շարք հարցեր քննարկելու, մասնավորապես, ճանապարհի կառուցման տարբերակները: Ի՞նչ եղավ հետո…

– Առայժմ այս խնդրում ոչ մի հստակություն չկա: Ոչ մեկն այս պահին չի կարող ասել, թե այդ ճանապարհը որտեղով է անցնելու: Քննարկվել են զանազան տարբերակներ, բայց օպտիմալ տարբերակը դեռ որոշված չէ: Հուրախություն մեզ՝ թվում էր, թե այդ ծրագիրը պիտի սառեցվեր, բայց հարավից սկսել են աշխատանքը, գործընթացը շարունակական բնույթ է կրում, եւ հավաստի աղբյուրների տեղեկացմամբ՝ 2014թ. ծրագիրը կսկսվի Մեղրուց, այսինքն՝ նախագծանախահաշվային աշխատանքներն արդեն 2014թ. կսկսվեն: Ինձ թվում է, որ ձգտելու են օգտագործել գործող ճանապարհը: Որտեղ նախագծով նախատեսվածը չեն կարողանալու իրականացնել, շրջանցելու են: Իրոք, նախաձեռնություն է հանդես բերել չինական ընկերությունը, որը համաձայնություն է տվել կատարելու նախագծանախահաշվային աշխատանքներ, ինչպես նաեւ մասնակցել մայրուղու շինարարությանը: Թե ովքեր կլինեն իրականում կառուցողները, տեղյակ չեմ, ոչինչ չեմ կարող ասել:

– Կան ճանապարհաշինարարական կազմակերպություններ, որոնք, հաղթելով հայտարարված մրցույթներում, ճանապարհների շինարարություն են իրականացնում տարբեր մարզերում: Իսկ Դուք, կարծեք, կենտրոնացել եք Մեղրու վրա՝ ունենալով այդ հնարավորությունը. և՛ աշխատուժ, և՛ տեխնիկա:

– Իմ հաստատ դիրքորոշումն է՝ տարածքից դուրս նման մրցույթների չմասնակցել: Մանավանդ, եթե իմ անհրաժեշտությունը չկա: Եղել են նման առաջարկներ, բայց ես գիտեմ շնորհալի շինարարների, ովքեր ապրելով տվյալ տարածաշրջանում, կարող են այդ գործն անել: Ես կատեգորիկ դեմ եմ դրան: Քանի որ չեմ կարծում, որ այդ գործն ավելի լավ կանեմ, քան տեղացի շինարարը: Քանզի վերջինիս համար ավելի դյուրին կլինի իր «տանն» աշխատելը. ինքն է ղեկավարելու շինարարությունը եւ հետագայում իրականացնելու այդ ճանապարհի սպասարկումը: Հենց այնպես գնամ՝ ի՞նչ անեմ: Իմ առջեւ երբեք նպատակ չեմ դրել ամեն գնով մի գործ անել:

– Այս անգամ Մեղրիում մի նորության ականատես եղանք, փողոցները գծանշված էին, ցույց էին տրված անցումները: Ո՞ւմ նախաձեռնությունն է:

– Նախ եղավ հանրապետության ոստիկանապետի հրամանը, որ բոլոր ճանապարհների վրա, այդ թվում եւ համայնքային, կատարել գծանշումներ: Դա նաեւ Մեղրու քաղաքապետարանի խնդրանքն ու պատվերն էր, եւ նրա միջոցներով կատարեցինք Մեղրու գլխավոր փողոցի, նաեւ միջպետական ճանապարհի հետ առնչվող կրթօջախների գծանշումները: Նաեւ Մեղրու կենտրոնական հրապարակում գծանշումներ արեցինք, նշեցինք ավտոկանգառի տեղերը: Մենք էլ հաճույք ստացանք, երբ քաղաքի դեմքը որոշակիորեն փոխվեց: Մի հետաքրքիր նորամուծություն էլ մտցրինք քաղաքում: Ճամփեզրից 1մ հեռավորության վրա միակողմանի կետգիծ անցկացրինք, ինչը մայթի տպավորություն է թողնում: Եթե նոր ուստարվա սկզբից մոտ մեկ ամիս կրթահամալիրների մոտ ոստիկաններ էին սովորաբար հերթապահում, ապա այդ գծանշումներից հետո դրա անհրաժեշտությունը վերացավ: Ահագին լավ զգացինք, որ հարցն այդ ձեւով լուծվեց:

– Մի բան էլ է տարածված ժողովրդի մեջ, ինչը մասնագիտական բացատրության է կարոտ: Բանն այն է, որ միջպետական ճանապարհի վատ վիճակը մարդիկ կապում են իրանական ծանրաքաշ մեքենաների երթեւեկի հետ, թե իբր այդ մեքենաները մեր ճանապարհների չափանիշներին չեն համապատասխանում: Իսկապես մեր ճանապարհները չե՞ն նախատեսված այդ մեքենաների համար: Եթե չեմ սխալվում, 1992թ. Արաքս գետի վրա նախ կառուցվեց ժամանակավոր կամուրջ, եւ 20 տարուց ավելի է՝ այդ մեքենաները երթեւեկում են Երեւան-Մեղրի արդեն միջպետական ճանապարհով, եւ, ոմանց կարծիքով, անիծում, թող կոպիտ չհնչի, ճանապարհի ասֆալտի հերը:

– Հիշում եմ, որ 1998թ. մեր մաքսակետում կշեռք էր դրված, որով կշռում էին այդ ծանրաքաշ մեքենաները: Մեքենայի մեկ սռնու վրա բեռնվածությունը չպետք է գերազանցեր 10 տոննան, այսինքը՝ չորս սռնանի մեքենան իրավունք չուներ 40 տոննայից ավելի բեռ տեղափոխել: Այդպիսի նորմատիվ կար, հիմա ամեն ինչ կարգավորվել է: Այլ բան է, որ իրանական «ավտոգնացքները», եւ մեր լեռնային ճանապարհների շառավիղները տեխնիկապես իրար չեն համապատասխանում: Նշված շառավիղները մեր ճանապարհներին տատանվում են 13-15 մետրի սահմաններում, ինչը համապատասխանում է, ըստ տեխնիկատնտեսական ցուցանիշների՝ հինգերորդ կարգի ճանապարհներին: Բացի այն, որ շառավիղը չի բավարարում, շրջադարձերին մեքենաների ավտոդողերի շփումն ուժեղանում է ճանապարհի

ÎÜÎºêàôÂÚàôÜ

Շամբի ձեռնարկությունների կենարար հեւքը

Դրանցից մեկը՝ պահածոների գործարանը, պատրաստ է ընդունել (եւ այս օրերին ընդունում է) 250տ խնձոր: Մարզի գյուղացիներն առաջին անգամ հնարավորություն ունեն իրացնել խնձորի առատ բերքը… Իսկ Գորիսի հարկայինների սիսիանյան արշավանքները միշտ չէ, որ հիմնավորված են լինում եւ միշտ չէ, որ բխում են օրենքի ու գործի շահերից:

Սկիզբը՝ էջ 1

այլ քաղաքներ: Գործարար կապեր են ստեղծվել Բելգիայի, Ուկրաինայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, որտեղ առաքվում են ե՛ւ պահածոները, ե՛ւ շշալցված ջուր: «Շամբ-բիզնեսում» հյութերի արտադրությունը համեմատաբար ուշ է սկսվել (անցյալ տարվա վերջին): Այժմ պահեստավորված է տասից ավելի տարբեր տեսակի հյութ:

«Պահանջարկը ճշտումներ է մտցնում արտադրության մեջ, հյութերն ու կոմպոտները Ռուսաստանում մեծ պահանջարկ ունեն, զանգում եւ պատվիրում են: Նախապես հյութերը թողարկվում էին համեմատաբար մեծ տարաներով՝ մեկ լիտր եւ ավելի, որն այնքան էլ իրեն չարդարացրեց: Փորձը ցույց է տալիս, որ մանավանդ հյութերը պիտի լինեն ավելի փոքր տարողությունների մեջ», – պարզաբանում են մեզ եւ հավելում, որ ներքին շուկան գերհագեցած է վերամշակող ձեռնարկությունների եւ հանքային ջրեր արտադրող ընկերությունների արտադրանքով, դրանցից ոմանք գործում են տակավին խորհրդային տարիներից եւ ունեն արտադրանքի իրացման կայուն շուկա:

Ինչեւէ, աստիճանաբար ընդլայնվում է արտադրանքի առաքման աշխարհագրությունը, թարմացվում տեսականին: Եթե «Շամբ-բիզնեսը» հիմնադրման տարում ընդամենը 20 տոննա արտադրանք է տվել, ապա 2012-ին չորս-հինգ հարյուր տոննա: **«Եթե այս ամռան երկու ամսվա նման աշխատենք ողջ տարվա ընթացքում, ապա ձեռնարկությունները շահույթ կունենան»,** – կանխում են իմ «արդյո՞ք շահույթով եք աշխատում» հարցը, նաեւ ավելացնում, որ առնվազն 400 տոննա լիմոնադ եւ շշալցված ջուր պիտի արտադրեն, որ խոսք լինի շահույթի մասին:

Գրավիչն այն է, որ արտադրության մեջ ընդգրկված է մոտ 120 մարդ, 70-ը՝ «Շամբ-բիզնեսում», 50-ը՝ «Արսեն եւ Ներսես» ՍՊ ընկերությունում: Երկու ձեռնարկությունից այդ գյուղաբնակ մարդիկ, որոնցից շատերը դժվարանում էին նույնիսկ լույսի վարձը վճարել, ընդհանուր առմամբ ամսական 10-12 մլն դրամ աշխատավարձ են ստանում: Միջին ամսական աշխատավարձը կազմում է 100 հազար դրամ: Զովացուցիչ, մանավանդ «Դարբաս» պիտակով լիմոնադի եւ շշալցված ջրերի պահանջարկը տարեցտարի ավելանում

է, արտադրության այս տեմպերի դեպքում, հնարավոր է, անցնեն երկհերթ աշխատանքի: Սրանք սփոփիչ հանգամանքներ են:

Մտահոգողն այն է, որ գյուղաբնակի մեջ դժվարությամբ է ձեւավորվում արտադրությունում աշխատողի հոգեբանությունը: **«Մեզ մոտ կարգին վաստակում են, բայց շատերի ուշքն ու միտքն իր անասունն է ու բոստանը, թեեւ ձեռնարկությունում ստացած վաստակը մի քանի անգամ գերազանցում է անհատական տնտեսությունից ստացածը,** – ասում է «Ներսես եւ Արսեն» ՍՊ ընկերության տնօրեն Ներսես Ստեփանյանը, – **բացի այդ ժողովրդի հետ աշխատելը դժվարացել է, Արարատյան դաշտում մարդն իր հողի վրա օրնիբուն բանում է եւ վարձահատույց լինում իր թափած քրտինքի դիմաց: Գիտե՞ք ինչ, մեր ժողովուրդն ահավոր ծուլացել է: Բանը հասել է այնտեղ, որ գյուղացին իր այգու կեռասն ալարում է քաղել եւ հանձնել գործարան, ասելով՝ ձրի եմ տալիս, եկեք, դուք քաղեք: Այս ենթաշրջանը կեռասի հայրենիք է, բայց այս պտղից առավելագույնը մեկ տոննա ենք մթերում»:**

Ընկերությունը պահածոներ ու մուրաբաներ պատրաստելու համար անհրաժեշտ հումքը մթերում է Արարատյան դաշտից, Կապանից, Գորիսից, Սիսիանից եւ շրջակա գյուղերից: Բայց մտածում են սեփական արտադրություն ստեղծելու մասին: Հինգ հա հողատարածություն են գնել, ծիրանի եւ դեղձի այգի հիմնել, այս տարվա բերքահավաքին 500-600 կգ դեղձ են հավաքել: Այգիներ հիմնելու գործընթացը շարունակվում է, ընդ որում, նախատեսվում է ստանալ թթի, սեւ սալորի, կեռասի, հաղարջի, սերկեւիլի եւ այլ պտուղների բերք: Գյուղատնտեսական մշակաբույսերից աճեցնում են տաքդեղ, պոմիդոր, վարունգ, բադրիջան: Բայց վերջինիս բերքը չգոհացրեց, որովհետեւ Սիսիանի բնակլիմայական պայմաններն այդ մշակաբույսի բարձր բերք ստանալու հնարավորություն չեն ընձեռում: Բամիայի սպասված բերքը եւս չստացվեց: **«Փորձի պակասն էր երեւի պատճառը, պիտի ուշ տնկեինք: Հողի ջերմաստիճանը պիտի հասնի 12-15 աստիճանի, որ սերմը ծլի»,** – ենթադրում է մեր զրուցակիցը: Իսկ ընդհանրապես անցած տարի 90 տոննա պոմիդոր են հավաքել, 15 տոննա տաքդեղ, երկու տոննա սոխ, 6-7 հարյուր կգ սխտոր:

Ձեռնարկության մասին մեր նախորդ հրապարակումը («Սյունյաց երկիր», 15 սեպտեմբերի, 2011թ.) վերնագրել էինք «Շամբի պահածոների գործարանն ուղի է հարթում»: Բայց տնօրենի հետ այս անգամվա զրույցից պարզ դարձավ, որ այդ ուղին բնավ էլ առանց խոչ ու խութերի չի եղել: Առավել շատ խնդիրներ ծագել են հարկային ծառայությունների հետ հարաբերություններում: **«Սկզբում փորձ չունեինք, հաշվապահություն վարել չգիտեինք: Բնական է, բացթողումներ կային, բայց առավել ուժգին էր հարկային մարմինների հակազդեցությունը: Բազմակի հարձակումների ենթարկվեցինք, այսօրվա դրությամբ էլ մեզ լարվածության մեջ են պահում: Անցած տարվա ամռանը երկու գործարանում ֆինանսական գործունեության ստուգում են անցկացրել, դրանից հետո վերջին այս կես տարվա ընթացքում հինգ անգամ մեզ մոտ ստուգման են եկել: Մի խումբը գնում, մյուսն է գալիս: Առհասարակ Սիսիանում աշխատելը հերոսություն է: Եկել, ակտ են կազմել, թե իբր առանց ապրանքագրի արտադրանք ենք արտահանում, մինչդեռ երբ մեր տուն տասը շիշ ջուր եմ տանում, խնդրում եմ ապրանքագրի մեջ դա մտցնել»,** – պատմում է Ներսես Ստեփանյանը:

«Սյունյաց երկրին» հետաքրքրում էր նաեւ, թե զբաղվածության հիմնախնդիր (ինչի կարեւորությունը դժվար է գերագնահատել) լուծելուց զատ զույգ ընկերությունը սոցիալական ինչ ծրագրեր է իրականացնում ենթաշրջանի գյուղերում: Դարբաս գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու մասին մեր թերթը գրել է, բացի այդ գյուղում կառուցվել է թանգարան, վերանորոգվել է Արզումանի կամուրջը, ճամփորդների (եւ ոչ միայն) հանգստանալու համար տաղավար է կառուցվել, Շամբ եւ Դարբաս գյուղերն այլեւս ապահովված են փողոցային լուսավորությամբ: Դարբասում նորոգվել է մանկապարտեզի շենքը, գյուղի նախակրթարան 13 մանուկ է հաճախում (ցավալիորեն ցածր թիվ): Իսկ առավել ուշագրավն այն է, որ ընկերությունների կողմից Սյունիքի մարզի մանկապարտեզներին սնունդ է հատկացվում:

Արտադրության ղեկավարին չէր կարող չմտահոգել համայնքի, նաեւ Չորերի ենթաշրջանի գյուղերի մյուս հիմնախնդիրները: Ճանապարհը մինչեւ Շամբի խաչմերուկ հիմնանորոգվել է, բայց բարեկարգ ճանապարհը պիտի հասնի մինչեւ Լեռնաշեն, այդ մի քանի գյուղերի գազիֆիկացումը դեռեւս մնում է խնդրահարույց: Բայց ահա Շամբի դպրոցի նոր շենքն է կառուցվում՝ սոցներդրումների հիմնադրամի միջոցներով: Համո Սահյանի տուն-թանգարանն են նորոգում:

Ցանկացանք իմանալ, թե ինչ են նախատեսում արտադրության ծավալներն ընդլայնելու ուղղությամբ, զարգացման ինչ հեռանկարներ ունեն «Շամբ-բիզնեսն» ու «Ներսես եւ Արսենը»: Տեղեկացրին, որ ծրագրված է սառնարանային տնտեսություն եւ պահեստ հիմնել, ինչը հնարավորություն կընձեռի արտադրության ռիթմը չընդհատել ձմռան ամիսներին: Իսկ «Ներսես եւ Արսեն» ընկերությունում նախատեսում են նոր արտադրամաս հիմնադրել, որտեղ ոգելից խմիչք պիտի արտադրեն, առայժմ որոշված չէ՝ կոնյա՞կ, գինի՞, թե՞ գարեջուր:

Ի դեպ, «Շամբ-բիզնես» ՍՊԸ-ն ի սկզբանե ղեկավարում է Ամալյա Ստեփանյանը, ով Ստեփանյան ընտանիքի մայրն է: **«Մեծ սիրով եմ ստանձնել ընկերության ղեկավարությունը, քանի որ որդիներիս՝ Արմենի, Արամի աշխատանքի արգասիքն է այս գործարանը: Քանի որ տեխնոլոգ չունեինք, այդ մասնագետի գործառույթն էլ էի ստանձնել: Բայց այս տարվանից հմուտ տեխնոլոգ ունենք՝ Արսեն Հարությունյան, եւ գործս զգալիորեն թեթեւացել է,** – ասում է տիկին Ամալյան, – **ժամանակն ամեն ինչ իր տեղն է դնելու, մարդիկ կամաց-կամաց հարմարվելու են արտադրությունում աշխատելուն»:**

Երբ արդեն հրաժեշտ էինք տալիս մեր զրուցակիցներին, պահածոների գործարանի առաջին հարկում տեսանք առաքման պատրաստ անուշահամ արտադրանքի մեծ խմբաքանակ: Աչք էր շոյում պիտակավորումը, եւ ուշադրություն գրավում պահածոների կափարիչների վրա մակագրությունը՝ զգացեք արեւի համը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«հագուստի» հետ, ինչի պատճառով վերջինս մաշվում է: Սա է ամենը:

– Ինչպես մեր կյանքի ամեն ոլորտում, սկսած լրագրությունից վերջացրած գյուղատնտեսությամբ, սիրողականությունը կարծես գրոհում է մեզ վրա: Որքան էլ անցանկալի լինի, դա ցայտուն դրսեւորվում է շինարարության ոլորտում: Եթե այլ ոլորտներում երեւույթն ինչ-որ տեղ ներվում է, ապա շինարարության ոլորտում, երբ ինչ-որ բան հավակնում ես կառուցել դարերի համար, ներելու տեղ չի մնում:

– Շատ ցավոտ խնդիր եք բարձրացնում: Նորից կրկնեմ վերը ասածս միտքը, որ կտրուկ դեմ եմ «ներմուծված» շինարարին: Եթե մրցույթը շահում են էժան գներով նախագծանախահաշվային փաստաթղթեր ներկայացնելով եւ ձեռք են բերում կառույցի շինարարությունն իրականացնելու իրավունք, ինչու՞ են շինարարությունը սկսելու ժամանակ իմ օգնությանը դիմում, ես դա չեմ հասկանում: Այսօր մեր պետությունը վատ վիճակում է, որքան որակով եւ էժան իրականացվի շինարարությունը, պետությանը ձեռք է տալիս: Բայց կարողացեք անել այն եւ ոչ թե եկեք իմ դուռը՝ թե օգնեք: Հանուն այն բանի, որ մի գործ ունենա՞ն: Սրանից է ծնվում սիրողական մակարդակով շինարարություն անելը:

– Պարոն Գասպարյան, անուրանալի է ձեր ավանդը Մեղրու տարածաշրջանի ճանապարհները սպասարկելու եւ շահագործելու գործում, բայց մի նկատառում ուզում ենք հայտնել: Մեղրի-Քաջարան ճանապարհը կարծես թե «ծերացել» է: Ասես մոտեցել է այն օրը, երբ ընթացիկ նորոգումներից ձեռք պիտի քաշել: Պիտի ձեռնարկել միջպետական այդ ճանապարհի՝ ձեզ վստահված հատվածի հիմանորոգում, թեեւ պատկերացնում ենք, թե դա ինչ միջոցներ կպահանջի:

– Տեղին է ձեր բարձրացրած հարցը: Մեր օրացուցային գրաֆիկում նշում ենք, որ 1997 թվականից սկսվել է Մեղրի-Քաջարան ճանապարհի (մյուս ճանապարհահատվածների մասին չեմ ուզում խոսել) հիմնանորոգումը: Դա շատ հրատապ խնդիր է: Ըստ տեխնիկատնտեսական ցուցանիշների հինգերորդ կարգի ճանապարհ է, որ ձգվում է բարձր լեռներով, ունի փոքր շառավղեր: Ծովի մակարդակից 600-ից մինչեւ 2500 մետր բարձրություն ունեցող այդ ճանապարհին ոչ մի ընթացիկ նորոգում այլեւս չի փրկելու: Ուստի հիմնանորոգումն ավելի քան հրատապ է:

– Դեպի Մեղրու գյուղական համայնքներ տանող ճանապարհները բարվոք վիճակում են՝ բացառությամբ Նռնաձոր տանող ճանապարհի: Առաջվա համեմատ գյուղ հասնելը մատչելի է: Խնդրահարույց է մնում նախկին երկաթգծի տեղով անցնող ճանապարհահատվածի նորոգումը, որն այժմ դժվարանցանելի է: Դրանում համոզվեցինք այս տարվա ապրիլին՝ աշխատանքային այցով լինելով Նռնաձորում:

– Երկու տարի է, ինչ Նռնաձորի ճանապարհը հանվել է օրակարգից, մենք էլ ձգտում ենք ձեր նշած ճանապարհահատվածը գոնե ընթացիկ նորոգումներով դարձնել երթեւեկելի: Անընդհատ ահազանգում ենք, բայց խնդիրը չի լուծվում: Ճանապարհի այդ հատվածը դիտվել է տեխնիկական առումով շատ վատ, բայց նորոգման մասին՝ ոչ մի խոսք:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

Արժանի գրոյ յիշատակի

Խդրանց, Չորեքդռնի խաչի նավ

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Ðáñë՝
¶³·ÇÏ (êÉ³íÇÏ)
ê³ñ·ëÛ³ÝÇ
ÑÇß³ï³ÏÇÝ

Փայլասարի հանդիպակաց լեռնալանջի ծալքերում ծվարած փոքրիկ գյուղ է Խդրանցը: Այսունիքի մարզի ամենափոքր համայնքներից մեկը: Կապանից դեպի հյուսիս-արեւելք 12կմ հեռավորության վրա է գտնվում գյուղը: Բնակչության զգալի մասը փարեց է: Գյուղում չկան դպրոց եւ մանկապարտեզ. դպրոցահասակ երեխաները տարիներ շարունակ հաճախում են հարեւան Ագարակ գյուղի դպրոցը: Խորհրդային ժամանակներում երկու գյուղը մեկ ընդհանուր կոլտնտեսություն էր: Ներկայում Խդրանցն առանձին համայնք է, որը գրեթե չունի զարգացման հեռանկար: Գյուղապետարանի շենքում տեղակայված են գրադարանը, ակումբը, բուժկետը:

Պատմության ընթացքում մի քանի անգամ փոփոխվել է Խդրանցի բնակատեղին: Ոչ ոք չի կարող ասել, թե երբ է հիմնվել գյուղը, բայց գյուղի տարածքում գտնվող կիսավեր մատուռները վկայում են, որ այն դարերի պատմություն ունի: Ավանդության համաձայն՝ գյուղը հիմնել են երկու եղբայր: Տեղի այլազգիները գյուղն անվանել են Սիրքաթաս, իսկ Խդրանց անունը, ասում են, ասոցացվել է հունարեն ծաղկածորի հետ: Ըստ Ումառյանի «Սյունիքի դիցարանի»՝ Խդրանց անունը կապվում է եգիպտական Խոտոր աստվածուհու անվան հետ (սկզբում՝ Խոտորանց, այնուհետեւ՝ Խդրանց): Գյուղի առաջին բնակատեղին եղել է 2կմ արեւելք գտնվող Չորեքդռնի վանքի շրջակայքում: «Չորեքդռնի-վանք Կապանի շրջանում, Խդրանց գյուղի մոտ: Ուներ երեք եկեղեցի, որից երկուսը փլված է, մեկը՝ կանգուն: Դռան քիվի վրա կար հունարեն արձանագրություն, շրջակայքում՝ զանազան հուշարձաններ, որոնք չեն ուսումնասիրվել» (Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, IV հատոր): Վանքը չորս մուտք է ունեցել, դրա համար էլ կոչվում է Չորեքդռնի: Ժամանակին այն ոչ միայն կրթական, հոգեւոր, մշակութային կենտրոն է եղել, այլեւ ունեցել է ռազմական, ստրատեգիական նշանակություն՝ շնորհիվ ճիշտ ընտրված դիրքի: Տեղանքը բարձրադիր է, գեղատեսիլ բնության գրկում, լեռնային գյուղի ամենաբարձր գագաթն է: Այդտեղից չորս քաղցրահամ աղբյուր է բխում: Այս երեւույթն ասես առեղծված լինի, որովհետեւ՝ այդտեղից վերեւ աղբյուրները սնուցող լեռներ չկան: Աղբյուրներից մեկը վանքից մոտ 100մ հեռավորության վրա գտնվող բացատում է: Գյուղացիներն այն անվանում են Խաչի նավ, քանզի ջուրը թափվում է տապանի ձեւ ունեցող ավազան: Տարիների ընթացքում ավազանի ստորին մասը քայքայվել է, կորցրել նախնական ձեւը, բայց վերին հատվածի սրբատաշ քարերը, խաչքարերը պահպանվել են: Աղբյուրը երբեւէ չի ցամաքել դարերի ընթացքում: Ջուրն անզուգական համ ունի: Ամռանն ավելի է սառչում, ձմռանը տաքանում է: Գյուղացիների համար ինչպես սրբավայրն է զորավոր, այնպես էլ աղբյուրի ջուրը: Ամենադժվարամարս ուտելիքի վրայից էլ խմես այդ ջրից՝ կերածդ դյուրությամբ կմարսես: Հնում հարեւան գյուղերից գալիս, ջուր էին տանում աղբյուրից եւ շաղ տալիս իրենց արտերին, որ բարեբեր լինեն արտերը, չոչնչանան երաշտից, մորեխներից, հիվանդություններից: Աղբյուրի վաղեմությունը, ակունքի առեղծվածը, ջրի բուժիչ օգտակարությունը հանելուկ են անգամ մերօրյա մարդու համար: Մի վեհ անդորր է թագավորում սրբավայրի շրջակայքում: Հանգստավետ լռությունը եւ կուսական բնությունը տանում են այցելուին մի աշխարհ, որտեղ միաձուլվում են աշխարհիկ եւ հոգեւոր գեղեցկությունը՝ որպես տիեզերական սքանչացում՝ մոռացնելով աշխարհի ունայնությունն ու մեղքը:

Հետագայում, երբ գյուղի բնակչությունը տեղափոխվեց այժմյան բնակատեղի, Չորեքդռնին աստիճանաբար կորցրեց կրթական, հոգեւոր-մշակութային նշանակությունը եւ ի վերջո վերածվեց պատմական հուշարձանի ու հինավուրց սրբավայրի, որտեղ մարդիկ մոմ են վառում, զոհ մատուցում Աստծուն եւ ապավինում Սուրբ խաչի զորությանը:

1892թ. գյուղացիների միջոցներով գյուղում կառուցվեց նոր եկեղեցի, որին կից գործում էր նաեւ ծխական դպրոցը: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվեց կոլտնտեսության պահեստի: Հայաստանի անկախացումից հետո գյուղացիները մաքրել են եկեղեցին, մոմ են վառում ու աղոթք անում, բայց մոտ մեկ դար այնտեղ ժամերգություն եւ պատարագ չի հնչել:

Ինչպես հայկական շատ բնակավայրեր, Խդրանցն էլ դարերի ընթացքում բազմաթիվ անգամ ենթարկվել է պարսիկների, թուրքերի, մոնղոլ-թաթարների ասպատակություններին, ավերվել ու թալանվել, բայց մարդիկ կառչել են իրենց քարին, հողին ու ջրին, խոր արմատներ են արձակել հողի մեջ ու կրկին վերընձյուղվել:

Տեր Հակոբ քահանա



Հարություն Հովհաննիսյան

Գագիկ Սարգսյան

Գառնիկ Գրիգորյան

1831թ. գյուղում մնացել էր ընդամենը 27 բնակիչ, իսկ 1897թ. բնակչության թիվը հասել էր 391-ի: Հայրենական մեծ պատերազմից առաջ գյուղում կար 75 ընտանիք: Գյուղից 42 տղամարդ է մասնակցել պատերազմին: Գյուղ մտնող ճանապարհի աջ կողմում մի համեստ հուշարձան կա՝ նվիրված Մեծ հայրենականում զոհված 28 խդրանցցիների հիշատակին:

Այսօր գյուղն ունի 68 բնակիչ, 28 գյուղացիական տնտեսություն: Պարզ, ազնիվ, աշխատասեր մարդիկ են խդրանցցիները՝ նման բակունցյան հերոսներին: Թեեւ քաղաքի սովորույթներն ու կենցաղը վաղուց թափանցել են գյուղ, սակայն հինը, ավանդականը չի ավերվել: Մարդկանց մեջ պահպանվել են հյուրընկալությունը, դյուրահավատությունն ու մաքրությունը: Դյուրին ու հաճելի է նրանց հետ շփվելն ու զրուցելը: Ժողովրդական բանն ու բառը, հավատալիքները, սովորույթները՝ այն ամենը, ինչն ազգային տեսակի գրավականն է, անթեղված է հայ գյուղում, իսկ այդ գանձերը վեր հանել եւ պահպանել է պետք. դրանք կարող են կրթել եւ դաստիարակել մի ամբողջ սերունդ ավելի լավ, քան ժամանակակից իրականությունը, հարաբերությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները: Այդ փոքրիկ, արտաքուստ արտասովոր ոչինչ չունեցող գյուղը ժամանակին շատերին է գրավել: Տարեց բնակիչ Գառնիկ Գրիգորյանը պատմում է, որ գյուղում եղել է վիպասան Ռաֆֆին, այցելել քահանա տեր Հակոբին, ով շատ զարգացած մարդ էր, երկար զրուցել է նրա հետ հենց քահանայի տանը: Գյուղում եղել են նաեւ Դրոն, բազմաթիվ անգամ՝ Նժդեհը, որի զինակիցներից մեկը՝ Սամսոնը, հենց Խդրանցից էր, իսկ Նժդեհի վաշտապետ Հարությունը, ով շատ խիզախ մարդ էր, նույնպես Խդրանցից էր: Հետագայում Սամսոնն աքսորվել է Ստալինի օրոք ու չի վերադարձել, իսկ Հարությունն ապրել է մինչեւ խոր ծերություն: Իմ հարցին, թե նրան ինչպե՞ս է հաջողվել փրկվել աքսորից, համագյուղացի Գառնիկ Գրիգորյանն ասում է՝ Հարությունը ղոչաղ մարդ էր, նրան հեշտ չէր աքսորելը: Իսկ ավելի կոնկրետ՝ նրան փրկել է չեկայի Աշոտը:

Երբ տարեց գյուղացիներից մեկին հարցնում եմ, թե հե՞շտ են ընդունել կոլեկտիվացումը, պատասխանում է. **«Մեր ծնողները միամիտ մարդիկ էին, մտածում էին, որ մեր երկրի համար լավ կլինի. հավասարությունն արդար բան է: Բռնություն չի եղել. ով ինչ կարող էր, կամավոր սկզբունքով տալիս էր կոլխոզին: Գյուղում հարուստներ չկային, բայց վատ էլ չէին ապրում, ամենակարեւորը՝ հավատ կար ժողովրդի մեջ Աստծու նկատմամբ, ղեկավարության նկատմամբ, միմյանց նկատմամբ: Քանի գնաց, էդ հավատը պակասեց. պատճառը՝ ուսումն է. ուսումը պիտի մարդու հավատն ամրացնի, ոգեշնչի, բայց հիմա էդպես չի: Նժդեհի մարդիկ մի օր եկան մեր գյուղ, որ քահանային պատժեն, ինչ է թե օղի էր խմում: Քահանան ասաց, «ճիշտ է, ես բաժակաճառ եմ ասում, խրատ եմ կարդում, ոգեշնչում եմ ժողովրդին, հիմա մեր ունեցածն օղի է, օղիով եմ բաժակաճառ ասում: Թշնամին որ հարձակվում է, կռվից առաջ կարեւոր չէ, թե թասի մեջ ինչ է, կարեւորը ժողովրդի կողքին լինելն է, հայրենասիրության ոգին վառ պահելը»: Ներեցին, ասին՝ ճիշտ ես ասում. տե՛ր Հակոբ, էդպես էլ շարունակիր:**

Բա՜ ...ուսումն էդպես պետք է լինի՝ ժողովրդի կարիքներին, պահանջներին համապատասխան»:

Իմ հարցին, թե խորհրդային կարգերի հաստատումից հետո շա՞տ բան փոխվեց գյուղի բարքերի, ավանդույթների մեջ, զրուցակիցս պատասխանեց. **«Փոխվեց, բա չփոխվե՞ց. եկեղեցին որ փակվեց, էդ շատ մեծ կորուստ էր: Լռեցին պատարագն ու ժամերգությունը: Չորեքդռնին ամայացավ: Նախկինում ուխտի էին գնում էնտեղ, անգամ ուրիշ գյուղից գալիս, մատաղ էին անում, շատ հիվանդներ են էնտեղ բուժվել, մեր խաչը շատ զորավոր է, բայց Ստալինի ժամանակներում վախենում էին բացահայտ գնալ սրբավայր: Վախը շատ վատ ուղեկից է մարդուն: Վախը չի թողնի, որ ժողովուրդն իշխանավորին հարգի, սիրի, վստահի: Անգամ Նժդեհի ժամանակ, որ այդքան**

Շարունակությունը՝ էջ 13

êàòÆ²È² Î²Ü

Քսան տարի անց. հեպպատերազմյան խճանկար

ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սկիզբը՝ էջ 1

հայրենիքի համար իրենց կյանքն ու առողջությունը չխնայած մարդկանց ու նրանց ընտանիքի անդամներին:

Տեղայնացնելով խնդիրը՝ ներկայացնեմ, որ Սյունիքի մարզն էլ անմասն չի մնացել Արցախյան հերոսական գոյամարտից, ինչի մասին են վկայում վիճակագրությունն ու թվային տեղեկությունները. տարբեր կարգ ունեցող զինհաշմանդամներ՝ 692, զոհված ազատամարտիկներ՝ 460, խաղաղ պայմաններում զոհվածներ՝ 169: Այդ մարդկանց կամ արդեն նրանց ընտանիքի անդամների սոցիալական եւ, ինչու ոչ, նաեւ հոգեբանական վիճակի ուսումնասիրության համար էլ այցելեցի բազմաթիվ ընտանիքներ, ինչպես եւ Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանին ու մարզպետարանի սոցիալական հարցերի բաժնի պետ Արամ Շահնազարյանին: Երկու այրն էլ համակարծիք էին, որ ոլորտում կան լուրջ խնդիրներ ու բարեփոխումների անհրաժեշտություն: Լեոնիդ Գրիգորյանի դիտարկմամբ՝ ազատամարտիկների նկատմամբ տարվող սոցիալական քաղաքականությունը, ամեն ինչից զատ, ունի նաեւ անաչառության խնդիր: Նա պնդում է, որ ազատամարտիկների ընտանիքները պետք է օգտվեն հստակ հարկային արտոնություններից: **«Ինչպե՞ս կարող են զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամը կամ հաշմանդամ ազատամարտիկը վճարել հողի հարկ կամ ջրի վարձավճար, եթե դրա դիմաց նրանք արդեն վճարել են իրենց կյանքով կամ առողջությամբ: Նրանք զոհվեցին այս հողի համար, տվեցին իրենց ամենաթանկը, իսկ այսօր նրանց ընտանիքի անդամը վճարում է հողի հարկ»,** – ցավով նկատում է Լեոնիդ Գրիգորյանը: Զինկոմը դժգոհում է նաեւ, որ պատերազմի մասնակից 18 տարեկան ժամկետային զինծառայողները լիովին մոռացված են, մինչդեռ հաղթանակի գործում առյուծի բաժինը հենց նրանց է պատկանում:

Արամ Շահնազարյանը քիչ ավելի լավատես թվաց, չնայած համաձայնեց անհերքելի իրողությանը, որ այսօր այդ խավը գտնվում է սոցիալական ոչ բարվոք վիճակում: Նա, այնուամենայնիվ, պետական քաղաքականությունն այդ ոլորտում բավարար է համարում՝ հաշվի առնելով երկրի հնարավորությունները: Նրա դիտարկմամբ առավել մտահոգիչ են առողջապահության հետ կապված խնդիրները, ծայրահեղ ծանր վիճակում են գտնվում հատկապես առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկները, իսկ հաշմանդամ ազատամարտիկների հոգեվիճակն ու նրանց ընտանիքների սոցիալական վիճակն իսկապես ծայրահեղ ծանր է: Արամ Շահնազարյանը պարզաբանում է, որ մարզպետարանն իր լիազորությունների շրջանակում փորձում է օժանդակել այդ մարդկանց՝ տրամադրվում են պրոտեզաօրթոպեդիկ պարագաներ բոլոր հաշմանդամ ազատամարտիկներին, տարեկան առնվազն մեկ անգամ փոքր ֆինանսական օգնություն է տրվում զոհված եւ հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին, մարզպետարանի սոցիալական հարցերով հանձնաժողովը քննարկում եւ որեւէ կերպ լուծումներ է փնտրում ընթացիկ օգնության խնդրանքների համար:

Արմեն Հայրապետյան (Միկրոբ)

Արմեն Համբարձումյան

Արմեն եւ Ռուբեն Ավանեսյաններ

Խնդրո առարկայի վերաբերյալ առավել ամբողջական ու օբյեկտիվ պատկերացում կազմելու համար հանդիպեցի մի շարք ազատամարտիկների եւ նրանց ընտանիքի անդամների հետ:

Առաջին կարգի հաշմանդամ, ազատամարտիկ Արմեն Համբարձումյանն այսօր աշխարհին նայում է իր սենյակի նեղ պատուհանից: Չի կարողանում քայլել, դուրս գալ եւ շրջել այն քաղաքում, երկրում, որի խաղաղության համար զոհաբերել է իր առողջությունը եւ բոլորի պես ապրելու կարողությունը: Զորակոչվել է 1992 թվականին՝ 22 տարեկանում: Նույն տարում էլ վիրավորվել է գլխից, որի հետեւանքով մարմնի աջ հատվածի հաշմություն ստացել: Վիրահատվել է ինը անգամ, բայց այսօր գտնվում է առողջական ծանր վիճակում: Ոտքի վրա մեծ չափի բաց վերք ունի, որից լիովին անշարժացել է վերջույթը: Ռազմական հոսպիտալ զանգահարելիս՝ նրան դժկամությամբ են պատասխանում, թեեւ գիտեն, որ ազատամարտիկ է եւ պետք է անվճար բուժօգնություն ստանա: Լավագույն դեպքում ասում են՝ մեքենա նստիր ու արի: Այդ վիճակում նա սովորական մեքենայով, մինչդեռ, չի կարող տեղաշարժվել, շտապ օգնության մեքենա է պետք՝ մայրաքաղաք հասնելու համար, պետք է տեւական բուժում, որից հետո գուցե կարողանա հենվել ոտքին: Փոքր դրամական օգնություններ որոշ պետական այրերի կողմից ցուցաբերվել են նրան, բայց հիմա, երբ ծայրահեղ ծանր վիճակում է, չկան միջոցներ լիարժեք հետազոտության եւ բուժման համար: Ինձ, որքան էլ զարմանալի է, ավելի մեծ ցավ պատճառեց նրա հոգեկան վիճակը. ծայրահեղ հուսալքություն եւ հիասթափություն: Բայց հարցիս՝ արդյոք չի՞ ափսոսում, որ մասնակցել է պատերազմին, վիրավորվել եւ այսօր էլ այսչափ անուշադրության է մատնված, պատասխանեց՝ ոչ, գնացել եմ հոգու կանչով եւ երբեք չեմ ափսոսացել դրա համար….

Չի ափսոսում նաեւ Վաղինակ Հայրապետյանը, ում ընտանիքը երկու զոհ ունեցավ այս պատերազմում: Հերոսաբար զոհվեց նախ նրա մի որդին՝ Արմեն Հայրապետյանը (Միկրոբը), ապա եւ երկրորդը՝ Մարտիրոս Հայրապետյանը: Հերոսի մահով ընկած այդ երիտասարդների հայրը ցավով է պատմում, թե ինչպես մի օր սպառնացին իրեն դատի տալ՝ ջրի վարձավճարը չմուծելու համար: Եվ ինչպե՞ս են դատելու մի մարդու, ում երկու որդին զոհվել են մեր հող ու ջրի համար, մի՞թե հնարավոր է այդ ամենի համար ավելի թանկ վճարել, քան վճարել են նրա որդիները: Մարդիկ մոռացել են եւ առօրյա հոգսերի ծանրության տակ կորցրել մեծ նվիրաբերման դիմաց չնչին ուշադրությամբ անգամ փոխհատուցելու իրենց պարտքը: Այսպես եղավ նաեւ Գառնիկ Ավանեսյանի պարագայում, ում երկու որդին նույնպես զոհվել են պատերազմում: Եվ երբ նրա կինը մահամերձ վիճակում էր՝ զանգահարեց շտապ օգնություն, ներկայացավ, որ ծեր կին է, երկու որդին զոհվել են, ոչ ոք չունի հիվանդանոց տեղափոխելու համար, բուժծառայության աշխատակիցն ասաց, թե չի կարող մեքենա ուղարկել ու ոչնչով օգնել չի կարող: Ինձ հաջողվեց զրուցել Գառնիկ Ավանեսյանի թոռնուհու՝ որդիներից մեկի դստեր՝ Սոնայի հետ, ով մյուս քրոջ հետ այժմ ապրում է Երեւանում: Երկուսն էլ ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատություն: Պետությունից այլեւս ոչ մի օգնություն չեն ստանում, քանի որ նրանց 23 տարին լրացել է եւ գործող օրենքի համաձայն զրկվել են թոշակից: Ինչպես զրույցի ընթացքում բացահայտվեց՝ նրանք կորցրել են նաեւ իրենց մորը, ով մահացել է 2000 թվականին: Նրանց մեծացրել են տատիկն ու պապիկը, կրթության տվել, իսկ այսօր Սոնան գործազուրկ է ու քրոջ համեստ աշխատավարձով է ապրում Երեւանում: Կցանկանար վերադառնալ Կապան, բայց այստեղ եւս աշխատանք գտնելու հույս չունի, եւ, չնայած ծանր սոցիալական կացությանը, գոնե Երեւանում աշխատանք գտնելու հավանականությունը մեծ է: Նա չգանգատվեց ոչնչից, շարունակ ասում էր, որ չնայած պետությունը ոչինչ չի անում, ակնկալիք էլ չունի, բայց ավելի մեծ ցավ է ապրում, երբ տեսնում է, որ մարդիկ լիովին մոռացել են ազատամարտիկներին: Իր խոսքով՝ ժամանակ առաջ գոնե ակնածանք կար, մարդիկ հիշում էին առիթից առիթ, իսկ այժմ ոչ ոքի դա չի էլ հետաքրքրում: Կապանի եղբայրական գերեզմանը գտնվում է անխնամ վիճակում, կան մարդիկ, ովքեր ի վիճակի չեն այցելելու այնտեղ եւ բարեկարգելու իրենց հարազատի գերեզմանը, իսկ տեղական իշխանությունների, նաեւ հասարակական կազմակերպությունների համար այդ սրբավայրը դուրս է պատշաճ ուշադրությունից…

Նրանց, եւ ոչ միայն նրանց, լսելուց հետո չեմ կարող չբարձրաձայնել մտահոգությունս:

Դիտարկումներս ինձ հանգեցրին ակնհայտ ճշմարտության, որ Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքները, հաշմանդամ ազատամարտիկները, հիրավի, գտնվում են սոցիալական ծանր վիճակում: Օրենքով հասանելիք թոշակները չնչին են եւ անբավարար տարրական կարիքները հոգալու համար: Հաշմանդամ ազատամարտիկները բախվում են առողջապահական լուրջ խնդիրների: Պետպատվերով տրամադրվող դեղամիջոցները երբեմն ոչ պետքական են, երբեմն՝ դա էլ չկա, ամբուլատոր բուժումները երկարաձգվում են, մոտեցումը շատ անգամ, իրենց իսկ խոսքով, անբարեխիղճ է: Համակարգի աշխատողները ցուցաբերում են որոշակի ակնկալիքներ՝ չնայած բուժսպասարկման ոլորտն անվճար է նրանց համար: Հաշմանդամ ազատամարտիկներից շատերը դժգոհում են նաեւ հաշմանդամության կարգի նշանակման համակարգի խախուտ վիճակից եւ այնտեղ իշխող կամայականությունից. մինչդեռ կան մարդիկ, ովքեր իբր ազատամարտիկ են, ունեն կարգ, բայց չգիտեն, թե որտեղ եւ ինչի համար է եղել պատերազմ, իսկ իսկական հաշմանդամները խնդիրներ են ունենում կարգ ստանալու, անգամ ազատամարտիկի վկայական ստանալու համար: Կամ՝ մի՞թե հանրապետության առողջարաններում, պետպատվերի միջոցով, հնարավոր չէ տարեկան գոնե մեկ անգամ կազմակերպել հաշմանդամ ազատամարտիկների հանգիստը, նրանց ընդգրկել վերականգնողական կուրսերում…

Գործող օրենսդրությունը, կարծում եմ, եւս հիմնովին վերանայման կարիք ունի՝ թոշակների, արտոնությունների տեսակետից: Չեմ կարող չկիսել Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանի կարծիքն առ այն, որ այդ ընտանիքները պետք է գոնե ազատվեն հողի հարկից ու խմելու ջրի վարձավճարից, քանի որ նրանք իրենց կյանքով արդեն իսկ վճարել են դրանց դիմաց:

Հիշատակեմ եւս մեկ նկատառում. մեր երկրում բազմաթիվ ու տարատեսակ ՀԿ-ներ ու կազմակերպություններ կան, որոնք, իբր, ներկայացնում են ազատամարտիկների շահերը, բարձրացնում նրանց խնդիրները: Ըստ իս՝ նման կազմակերպությունները պետք է միավորվեն, որ կարողանան ավելի շոշափելի աշխատանք կատարել: Կարծում եմ նաեւ, որ ազատամարտիկները նույնպես պետք է միավորվեն մեկ կազմակերպության մեջ՝ մեկ գաղափարի ներքո: Շքանշանների ու պետական պարգեւների շնորհման ընթացակարգ. դա թեեւ ազգային արժեհամակարգին առնչվող հարց է, բայց շատ խոցելի է: Այդ հարցում խտրությունը, այլեւայլ սկզբունքներով առաջնորդվելն անկարելի է: Այդ հարցը, դրան առնչվող ընթացակարգը, պետք է լիովին բարոյական հարթություն տեղափոխել, այլապես պետական պարգեւները հակառակ նշանակություն կունենան, եթե արդեն չեն ունենում:

Զոհված ազատամարտիկների ընտանիքների, մեր կողքին ապրող ազատամարտիկների ամենամեծ ցավը, ինչպես տեսնում եք, մոռացության ու անտարբերության մշուշն է, որով պատված են այդ մարդիկ: Իրենց առկա խնդիրներին ականջալուր դարձնելու պարզ ցանկությունն էլ ստիպել է նրանց՝ դիմելու նստացույցերի եւ ելույթների: Իսկ հաղթանակած բանակի զինվորի համար նստացույցը, բողոքավորի դերում հայտնվելը, հավատացեք, այնքան էլ պատվաբեր չէ, եթե ոչ նվաստացուցիչ…

….Չմոռանանք այդ մարդկանց ու նրանց սխրանքները, որպեսզի կերտվի հայրենիքի վաղվա զինվորը: ■

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

55 տարի առաջ Քաջարանը ստացավ շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ

Ֆրունզե Պետրոսյանի ընտանիքի անդամներն ու մերձավորները նրա հուշարձանի մոտ

Քաջարանը քաղաքի կարգավիճակ ստացել է 1958թ: Գտնվում է Սյունիքի մարզում, Ողջի գետի ափին, Զանգեզուրի լեռնաշղթայի արեւելյան ճյուղավորման վրա, մարզկենտրոնից 25կմ արեւմուտք: Քաղաքի տարածքում են եղել պատմական հիշատակություն ունեցող հետեւյալ բնակավայրերը՝ Քաջարանց (Կաճաճուտ), Վերին Հանդ (Բանիս), Ողջի, Արալըը (Արալեզ) գյուղերը, Զեւա, Բաղակու քար, Աչաղու բերդերն ու ամրոցները: Անհիշելի ժամանակներից Քաջարանի բնակավայր լինելու մասին են վկայում Գանձասար լեռան վրա մինչեւ 1950-ական թվականները պահպանված հեթանոսական մատուռը, քաղաքի տարածքում հայտնաբերված հանքախորշերը, ձուլարանների հետքերը, հանքանյութի թափվածքները: Կարելի է հետեւություն անել, որ Քաջարանի տարածքում պղինձ են ձուլել դեռեւս բրոնզե դարում: Քաղաքի տարածքը մաս է կազմել պատմական Սյունիք նահանգի Ձորք գավառի: Քաջարանի ձեւավորումը՝ որպես քաղաք, կապված է հանքավայրի շահագործման եւ կոմբինատի ստեղծման հետ: 1958-ին Քաջարան եւ Ողջի ավանների միացումով առաջացել է Քաջարան քաղաքը՝ 11 հազար բնակչով, որի գլխավոր հատակագիծը մշակվել է 1965թ (ճարտարապետներ՝ Ա. Հարությունյան, Հ. Դավթյան):

…Սեպտեմբերի 26-ին Քաջարանում տոն էր. քաղաքը նշում էր ծննդյան 55-ամյակը: Երբ թերթում ես պատմության էջերը, հասկանում ես, որ շատ բան է փոխվել ժամանակի ընթացքում. փոխվել են փողոցները, փոխվել են եւ մարդիկ: Քաղաքն օրեցօր բարգավաճում ու էլ ավելի է գեղեցկանում…

Կեսօրին քաղաքի կենտրոնական հրապարակը լի էր մարդկանցով: Հանրապետության տարբեր մարզերից եւ մայրաքաղաք Երեւանից հյուրընկալվել էին բարձրաստիճան հյուրեր՝ այդ թվում նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը ողջունեց եւ իր շնորհակալական խոսքն ուղղեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի աշխատողներին՝ շնորհելով շնորհակալագրեր եւ մեդալներ: Իրենց գործունեությամբ աչքի ընկած մի խումբ անձինք պարգեւատրվեցին: «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի բաժնի վարիչ Հրաչյա Թադեւոսյանը պարգեւատրվեց Մխիթար Հերացու մեդալով, «Ռիվս» գիտաարտադրական միավորման գործադիր տնօրեն Միխայիլ Առուստամյանը (ՌԴ)՝ Անանիա Շիրակացու մեդալով: Երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրով պարգեւատրվեցին «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ Սարո Հայրապետյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հանքաքարի ջարդման-տեղափոխման արտադրամասի էլեկտրագազաեռակցող Զախար Միրզոյանը:

Արցախյան գոյամարտում ակտիվ էր Քաջարան քաղաքի մասնակցությունը: Հենց այդ առիթով էլ հիմնադրված հուշամեդալը Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը հանձնեց նախագահ Սերժ Սարգսյանին, ով 1989-93թթ ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության գիրը հրապարակեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Քաջարանի նորաբաց բժշկական կենտրոնը

Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ նաեւ բելառուսական քույր քաղաք Ժոդինոյից ժամանած պատվիրակությունը: Շնորհավորանքով եւ, ինչու չէ, նաեւ երախտիքի խոսքով ներկայացավ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

Քաջարանի տոնը կրկնապատկվեց, քանի որ հենց այդ նույն օրը քաղաքում բացվեց միջազգային ստանդարտներին համապատասխանող եւ ժամանակակից սարքավորումներով համալրված բժշկական կենտրոն: Քաջարանի վերակառուցված եւ ամբողջովին վերազինված բժշկական կենտրոնը արդիականացվել է Հայաստանի Հանրապետության նախագահի՝ մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» միջոցներով: Այդ նպատակով ներդրվել է ավելի քան 1 մլրդ 200 մլն դրամ: Ըստ ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանի՝ այսուհետ տարածաշրջանի բնակիչները հնարավորություն կունենան անհրաժեշտ բժշկական ծառայությունները ստանալ իրենց բնակավայրերին մոտ: Արդիականացված բժշկական կենտրոնում կմատուցվեն լայն սպեկտրի ախտորոշիչ եւ բուժական ծառայություններ: Կենտրոնը հագեցվել է բժշկական մի շարք սարքավորումներով, որոնք առաջինն են Սյունիքի մարզում: Մասնավորապես, ի թիվս այլ սարքավորումների, կենտրոնը հագեցվել է Siemens ֆիրմայի ամենավերջին սերնդի թվային ռենտգեն եւ Philips ֆիրմայի ուլտրաձայնային հետազոտության գերժամանակակից սարքերով: Վերջինս զարգացած երկրներում լայնորեն եւ մեծ արդյունավետությամբ կիրառվում է հատկապես հղիության վերահսկման ընթացքում: Իսկ տեսաէնդոսկոպը եւ իմունաֆերմենտային վերլուծիչը որակապես կբարելավեն հիվանդությունների վաղ ախտորոշման գործընթացը: Տրամադրվել է նաեւ լապարասկոպիկ վիրաբուժական հավաքածու, ինչը կնվազեցնի հետվիրահատական բարդությունների հաճախականությունը եւ հիվանդանոցում գտնվելու ժամանակը:

Տոնական արարողությունից հետո տեղի ունեցավ Ֆրունզե Պետրոսյանի արձանի բացման արարողությունը, որին ներկա էին նաեւ ազգանվեր մարդու հարազատները՝ կինը, երեխաները եւ այլք: Արձանի հեղինակն է գեղանկարիչ Գեւորգ Մշեցի Ջավրուշյանը:

Վերջում՝ քաղաքի կենտրոնական հրապարակում կազմակերպվեց հյուրասիրություն:

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Ðà´ºÈÚ²Ü

Շվանիձորի դպրոցը փոնեց հիմնադրման 130-ամյակը

19-րդ դարի երրորդ քառորդում, ավելի ստույգ՝ 1881թ., Շվանիձորում պատմավիպասան Ռաֆֆու օժանդակությամբ եւ Ագուլիսի դպրոցի շրջանավարտ Մաթեւոս Շահինյանցի նախաձեռնությամբ սկսվեց դպրոցի շենքի կառուցումը գյուղի բարձրադիր մի փեղանքում: Կառուցումն ավարտվեց 1883-ին, եւ սկզբնավորվեց գյուղի դեռահասների կրթության եւ դաստիարակության գործը: Ի սկզբանե դպրոցն ունեցել է երկու դասարան, այնուհետեւ դարձել է ութամյա:

Անահիտ Երեմյանը, դպրոցի տնօրեն Անահիտ Զաքարյանը, գյուղապետ Հովհաննես Օհանյանը, Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը

Դպրոցի վետերաններից երկուսը

Սեպտեմբերի 23-ին Շվանիձորում՝ մեծով ու փոքրով, իշխանավորով ու հողի մշակով, նախկին շրջանավարտներով, հրավիրված հյուրերով տոնեցին համայնքի կրթօջախի հիմնադրման 130-ամյակը: Մինչ հանդիսությունը սկսվելը բացվել էր հուշերի կծիկը: Շնորհավորում էին միմյանց հոբելյանի առթիվ, հուշեր պատմում, ծանոթանում դպրոցի պատմությունն արտացոլող ցուցադրանքին: Կրթօջախի դահլիճում արդեն օրվա խորհուրդը հավուր պատշաճի արժեւորեց եւ ներկաներին ողջունեց Շվանիձորի գյուղապետ Հովհաննես Օհանյանը: Այնուհետեւ դպրոցի անցած ուղուն ընդգրկուն ակնարկով անդրադարձավ կրթօջախի տնօրեն Անահիտ Զաքարյանը: Նախ արժանին մատուցեց կրթօջախը ղեկավարած տնօրեններին՝ առաջինը հիշատակելով գորիսեցի Մուշեղ Խաչատրյանին: 1925-35թթ. մանկավարժական կոլեկտիվը ղեկավարել է Սարգիս Ոսկանյանը, ով զոհվել է Մեծ հայրենականում: Ի դեպ, Շվանիձորից 92 հայորդի մնաց ռազմի դաշտում՝ չտեսնելով հայրենի գյուղի վրա բացվող խաղաղ առավոտները…

1941-43թթ. դպրոցի տնօրենն էր Ափյանը: Այնուհետեւ դպրոցի ղեկավարման ղեկին են եղել Հենրիկ Մայիլյանը, Ծերուն Դավթյանը, Մամիկոն Հարությունյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Արսեն Վանյանը, Ցոլակ Կիրակոսյանը, Սերժիկ Պողոսյանը, Գրիշա Ալեքսանյանը, Պողոս Արզումանյանը, Սամվել Առաքելյանը: Պատերազմի տարիներին կրթօջախ է հաճախել 225 դպրոցական:

Կրթօջախի ներկայիս շենքը (երկհարկանի, մարզադահլիճով) կառուցվել է 1975թ.: Մինչեւ 2008-ի փետրվարը չէր նորոգվել: Այդ թվականին պետբյուջեի միջոցներով երկու փուլով դպրոցի շենքը հիմնանորոգվել է եւ այժմ աչք է շոյում իր մաքրությամբ եւ կահավորանքով:

Նշելով, որ կրթօջախն ապահովված է տեղացի կադրերով, դրսից հրավիրված կադրեր չկան, բանախոսը լավագույն ուսուցիչների թվում նախ հիշատակեց զինղեկ Կարո Ոսկանյանին, ում յոթ սանն ընտրել է զինվորականի մասնագիտությունը, իսկ ֆիզկուլտուրայի ուսուցիչ Մարգար Ավետիսյանի շրջանավարտներից երեքն ավարտել է Երեւանի Ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: Համայնքապետ Հովհաննես Օհանյանը կենսաբանություն է դասավանդում դպրոցում, մշտապես սատար կանգնում ու աջակցում մանկավարժական կոլեկտիվին: Պատմության ուսուցիչ Ալեն Ավետիսյանը մի շարք միջոցառումների եւ ձեւավորումների հեղինակ է: Մաթեմատիկայի ուսուցիչ Տիգրան Հարությունյանի սաներն իրենց լավագույն կողմերով են դրսեւորում բուհական ընդունելության քննությունների ժամանակ:

Արժանավորների շարքում նշվեցին դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, այժմ՝ դասվար Մարինե Առաքելյանի, անգլերենի ուսուցչուհի Եպրաքսիա Պարոնյանի, փոխտնօրեն, հայոց լեզվի ուսուցչուհի Սաթենիկ Ստեփանյանի, երիտասարդ ուսուցչուհիներ, հայոց լեզվի եւ գրականության մասնագետներ Մելինե Ստեփանյանի եւ Մարիամ Մարտիրոսյանի, ռուսաց լեզվի ուսուցչուհի Տանյա Հայրապետյանի, դասվարներ Զեյն Ավետիսյանի եւ Մարգարիտա Գալստյանի անունները: Երիտասարդ ուսուցչուհիներից տնօրենն առանձնացրեց դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անի Մախսուդյանին, ով իր մտահղացումներով եւ կազմակերպչական ունակություններով աչքի է ընկնում, սցենարներ է պատրաստում (նաեւ այս հանդիսության համար):

Անուն առ անուն նշվեցին վաստակած հանգստի անցած ուսուցիչները՝ Նատալյա Ոսկանյան, Գրետա Հայրապետյան, Դոնարա Թորոսյան, դասվար Անահիտ Բունիաթյան, ովքեր ցայսօր ներդրում ունեն ուսուցիչների ներկա սերնդի մասնագիտական որակների բարելավման գործում, նաեւ կրթօջախի այն մանկավարժները, ովքեր այժմ այլ վայրերում են աշխատում, բայց մասնակցում էին հանդիսությանը՝ Կամո Հայրապետյան, Գայանե Հարությունյան, Ռուզաննա Օհանյան, Հովհաննես Մելիքսեթյան:

Մեկ րոպե լռությամբ հարգվեց այն մանկավարժների հիշատակը, ովքեր իրենց հարուստ գիտելիքները, հոգու ջերմությունը փոխանցելով սաներին՝ հավերժի գիրկն են անցել. դասվար Հայկազ Ոսկանյան, պատմության ուսուցիչ Գուրգեն Խաչատրյան, մաթեմատիկայի ուսուցիչ Բաբկեն Առաքելյան, հայոց լեզվի ուսուցիչ Պողոս Արզումանյան, ֆիզիկայի եւ մաթեմատիկայի ուսուցիչ Սամվել Առաքելյան, դասվար Էլիզա Խաչատրյան, ուրիշներ:

Առանձնահատուկ շնորհակալություն հայտնվեց դպրոցի հովանավորներին՝ Վահե եւ Մաքսիմ Հակոբյաններին, որոնց ֆինանսական հատկացումներով համալրվել է դպրոցի գույքը: Նաեւ հույս հայտնվեց, որ նրանք առաջիկայում եւս կօժանդակեն լաբորատոր սարքավորումներ եւ նոր սերնդի համակարգիչներ ձեռք բերելու գործում: Կրթօջախում եղած համակարգիչները հին են ու չեն բավականացնում. վեց աշակերտին բաժին է հասնում մեկ համակարգիչ:

Կրթօջախի տնօրենն արժանին մատուցեց դպրոցին եւ աշակերտներին ավելի քան տասը տարի նեցուկ եղած ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի Սանտա Բարբարայի, Սան Դիեգոյի, Ստենֆորդի համալսարանների ամերիկահայ ուսանողությանը եւ համալսարանի արագացուցիչների կենտրոնի դասախոս, գիտնական Անահիտ Երեմյանին, ով կրթությունը ստացել է Ֆիլադելֆիայի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: Նրանց բարերարության շնորհիվ դպրոցականները տարիներ շարունակ անվճար դասագրքեր են ստանում, իսկ դպրոցի գրադարանը համալրվում գեղարվեստական գրականությամբ:

Դպրոցի հիմնադրման 130-ամյակի առթիվ բարեմաղթանքի եւ շնորհավորանքի խոսքեր հնչեցրին կրթօջախի պատմության ուսուցիչ Ալեն Ավետիսյանը, երկարամյա ուսուցչուհի Գրետա Հայրապետյանը, դպրոցի նախկին ուսմասվար Դոնարա Թորոսյանը:

Շրջանավարտ Ավետիք Արիստակեսյանը հարկ համարեց հիշել Շվանիձորի երեւելի մարդկանց, ովքեր, բնականաբար, կրթություն են ստացել գյուղի դպրոցում. Աշոտ Թովմասյան, բուսաբույծ, դոկտոր-պրոֆեսոր, հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոսներ Ազատ Մարտիրոսյան, Արշավիր Մարտիրոսյան, նախարարի տեղակալ Նապոլեոն Ոսկանյան, Աժ պատգամավոր Գրիգոր Հարությունյան, կուսակցական եւ պետական մարմինների ղեկավարներ: Շվանիձորի դպրոցի շրջանավարտներն աչքի էին ընկնում բնագիտական առարկաներից, Մեղրու տարածաշրջանի դպրոցների մաթեմատիկայի ուսուցիչների մեծամասնությունն այդ դպրոցի սան էր:

Բարերար Անահիտ Երեմյանն իր խոսքում ասաց. «Շրջելով այս դպրոցում, տեսնելով մաքուր ու ճաշակով կահավորված դասասենյակներն ու հարկաբաժինները, ակամա մտածում ես, որ այստեղ միայն գիտելիքներ չեն ավանդում իրենց սաներին, այլեւ սովորեցնում են ինչպես պիտի իրենց պահեն կյանքում, մարդկություն անեն, ինչպես պիտի սիրեն հայրենիքը: Տասը տարի է, ինչ միշտ այցելում եմ այս գյուղը եւ տեսնում եմ, թե ինչպիսի սրտացավությամբ են կազմակերպում ուսման եւ դաստիարակության գործը դպրոցի տնօրեն Անահիտ Զաքարյանը եւ մանկավարժական կոլեկտիվը, որոնց հայտնում եմ երախտագիտություն»:

Այնուհետեւ դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համադրույթով: Երգերի շնորհալի կատարումով առանձնացավ Հեղնար Արիստակեսյանը, ով բարերար Անահիտ Երեմյանի հովանավորությամբ ուսանում է Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում:

Միջոցառման ավարտին բարեմաղթանքի խոսք ասաց Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը՝ մասնավորապես այն միտքը հայտնելով, որ հիմնավորց Շվանիձոր համայնքում ըստ ամենայնի մանուկների կրթության եւ դաստիարակության գործը շատ ավելի վաղ է կազմակերպվել: Բայց այսօր պատմական փաստը հուշում է, որ հիմնավորապես այդ գործը սկզբնավորվել է 130 տարի առաջ: Մարզպետի տեղակալը կրթության բնագավառում ներդրած ավանդի, մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած վաստակի եւ դպրոցի հիմնադրման 130-ամյակի առթիվ տնօրեն Անահիտ Զաքարյանին, մանկավարժներ Մարգար Ավետիսյանին, Մարինե Առաքելյանին, Կարո Ոսկանյանին, Ալեն Ավետիսյանին հանձնեց Սյունիքի մարզպետի շնորհակալագիր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Արժանի գրոյ յիշատակի

Խդրանց, Չորեքդռնի խաչի նավ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Սկիզբը՝ էջ 10

խիստ մարդ էր, վախ չկար. արդար էր քննում գործը: Մի օր մեր գյուղացիներից մեկի եղբայրը, որ Բաքվում էր ապրում, եկավ մեր գյուղ: Լուր հասավ սպարապետին, թե գյուղը բոլշեւիկ է եկել: Եկան, կալանավորեցին, բայց գործը քննեցին ու բաց թողեցին: Վաշտապետ Հարությունն էլ երաշխավորեց նրա համար: Իսկ Ստալինի ժամանակ մեկին որ կասկածեին, էլ փրկություն չկար:

Բայց դե երկիրը սովետական կարգերի ժամանակ կառուցվեց: Հավասարություն կար, աշխատանք կար, ապրուստը հեշտ էր: Հիմա շատ դժվար ա… Հալբաթ մի լույս կբացվի», – հայացքը հինավուրց սրբավայրին հառելով՝ ասում է զրուցակիցս: Իսկ սրբավայրը՝ Չորեքդռնին, գյուղացիների գոյության խարիսխն է, անցյալի վկան, ապագայի երաշխիքը: Դժվար պահերին ապավինել են խաչի զորությանը, օգնություն խնդրել նրանից, հաջողության պահերին չեն մոռացել իրենց գոհությունը մատուցել, մատաղ անել եւ փառք տալ երիցս զորավոր խաչին: Այդպես են ապրել մեր նախնիները, պապերը, հայրերը:

Արտագաղթը չի շրջանցել Խդրանցը: Գյուղի 28 ընտանիքից չկա մեկը, որի զավակները Հայաստանից դուրս չգտնվեն: Ծնողներն ասում են՝ գնացել են աշխատանք գտնելու, բայց էնտեղ էլ հեշտ չէ: Օտար հողում մարդ չի կարող խոր արմատ գցել. շատերն առողջությունն են կորցնում, շատերը՝ ազատությունը, շատերն օտարվում են մեր սովորույթներից:

Մի ուրիշ տարեց գյուղացի ասում է. **«Ես որ Ռուսաստանից եկած իմ թոռանն ասում եմ «մատաղ նիմ քեզ, ջանեդ մատաղ», զարմացած ինձ է նայում, ինչքան էլ տանը հայերեն սովորեցնեն, միեւնույն է, օտարվում են: Պատերազմի ժամանակ մնացին, գյուղը պահեցին, պատերազմից հետո տեսան, որ չեն կարողանում աշխատանք գտնել, թողեցին, գնացին: Վախենամ, թե շատերը հետ չգան. գյուղը կամայանա. շատ մեծ ցավա»:**

Իսկապես, ի՜նչ դժվարությամբ պահեցին գյուղն Արցախյան պատերազմի ժամանակ: Հիշում եմ, հայրս այդ տարիներին գյուղի համայնքի ղեկավարն էր. ոչ մի ընտանիք, ոչ մի երիտասարդ չլքեց գյուղը, մեր տունն ավերվեց հրետակոծության հետեւանքով, բայց չհուսահատվեցինք, հայրս կարճ ժամանակում վերակառուցեց: Շուրջ երեսուն կամավորական էր մնում ու կերակրվում մեր տանը: Տանը եղած բենզինն ու դիզվառելիքը, տեխնիկան, ամեն ինչ հայրս տրամադրել էր դիրքը պաշտպանող զինվորներին, նույն կերպով էին վարվել բոլոր գյուղացիները:

Ինչ-որ ընդհանուր կապ եմ տեսնում այդ օրերի եւ «Ի՜նչ ուրախ գիշեր էր» պատմվածքի միջեւ: Այսօր շա՜տ ենք հեռացել այդ օրերից, թվում է՝ ոչ թե գյուղացիներն են լքել գյուղը, այլ ինչ-որ ավելի վեհ բան՝ գեղջական հավա՞տը , մաքրությունը կամ պարզությո՞ւնը, թե՞ մարդկային ոգին:

Ավելի լավ է մտածել՝ հալբաթ մի լույս կբացվի: ■

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)



Գյուղական դպրոցի նվիրյալը

ԱԿՆԱՐԿ

Հայաստանի հեռավոր շրջաններից մեկը՝ Արեւիք-Մեղրին, որին պատմականորեն տրված է կարեւոր առաքելություն, այն է՝ պահել ու պաշտպանել մեր երկրի հարավային սահմանը, պատահական չէ, որ ծնունդ է տվել մարդկանց, ովքեր իրենց ողջ կյանքը նվիրաբերել եւ նվիրաբերում են հայրենի հող ու ջրի պահպանմանը:

Այդպիսի նվիրյալներից է բազմավաստակ ուսուցիչ ու դպրոցի երկարամյա տնօրեն Մելինե Հայկի Գեւորգյանը, ով ծնվել է Կարճեւանում, սակայն նախնիներն արդեն գոյություն չունեցող Ագարակ (Հիգերակ) գյուղից էին, որը շատ գողտրիկ եւ հյուրասեր գյուղ էր, եւ որտեղ 1840-50-ական թթ. ֆրանսիացիները պեղումներ էին կատարել եւ պղինձ հայտնաբերել՝ նախապես տնայնագործական եղանակով պղինձ ստանալով: Դրանից մոտ 100 տարի անց այդ գյուղի տարածքն ընդգրկող հանքավայրի հիման վրա ստեղծվեց Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը եւ ձեւավորվեց քաղաք՝ ստանալով Ագարակ գյուղի անունը, որից միայն Սբ Ամենափրկիչ եկեղեցին է մնացել… Մելինե Գեւորգյանը հպարտությամբ է նշում, որ սերում է այդ գյուղի արժանավոր ընտանիքից, քանզի ե՛ւ կրթվածությամբ, ե՛ւ աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքով իր նախնիները մշտապես առանձնացել են շրջապատում:

Կես դար կյանքը դպրոցին նվիրաբերելն արդեն իսկ վկայությունն է այն ճշմարտության, որ իսկական նվիրյալներ ծնվում են, այլ ոչ թե դառնում: Երեւանի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում ուսանելու տարիներին եւ նույնիսկ դրանից հետո, երբ հնարավորություն է ունեցել ավելի նշանավորվել գիտության բնագավառում, հասարակական կյանքում, նա նախընտրել է հայրենի Կարճեւանը, հարազատ աշխատանքն ու, որ կնոջ ամենամեծ առաքելությունն է, ընտանիքը: Մեծագույն բերկրանքով է խոսում ընտանիքի, ամուսնու, զավակների մասին՝ ամեն օր շրջապատված լինելով նրանց ջերմությամբ, ուրախանալով նրանց հաջողություններով. **«Ընտանիքն ամենակարեւորը պիտի լինի պետության համար, բայց այսօր նրա հիմքերը կարծես խարխլված են, թեկուզ շատ բաներ կարող են պայմանավորված լինել նաեւ սոցիալական վիճակով, պետությունն այս հարցում, թերեւս, առաջնային դերակատարություն պիտի ունենա՝ նախեւառաջ զարգացնելով տնտեսությունը, իսկ հայ կինը՝ որպես տան ներքին պատ, պիտի Աստղիկի նման գեղեցիկ լինի, բայց միեւնույն ժամանակ ամոթխած»:**

Մելինե Գեւորգյան

Աշխատանքային գործունեության ընթացքում մշտապես օրինակ է ծառայել ուսուցիչների եւ աշակերտների համար թե՛ իր արտաքինով, թե՛ իր խոսքով, թե՛ արարքներով: Եվ հիմա դժվար թե գյուղում գտնվի մեկը, ով ցավով չնշի, որ նա դեռ բավականաչափ եռանդ ուներ աշխատելու համար, բայց... Մոտ երեք տասնամյակ ղեկավարելով Կարճեւանի հիմնական դպրոցը՝ գալիս է այն համոզման, որ ժամանակակից դպրոցը միտում ունի կործանելու խորհրդային տարիների դպրոցը, որ լավագույններից մեկն էր, եթե ոչ լավագույնը, եւ դա միգուցե պայմանավորված է տարբեր գործոններով՝ եվրոպամետ քաղաքականությամբ, մասնագետների զարգացվածության մակարդակի թուլացմամբ, աշխատանքի հանդեպ չունեցած անհրաժեշտ վերաբերմունքով, ինչպես նաեւ տեխնիկայի արագընթաց մուտքով: Մշտապես հետաքրքրված լինել աշխարհի անցուդարձով, զբաղվել ինքնակրթությամբ, զերծ մնալ արատներից ու թերություններից. սա պիտի լինի ուսուցչի առջեւ ծառայած կարեւորագույն խնդիրը:

Բացի դպրոցին սպառնացող վտանգից՝ բազմավաստակ ուսուցիչն ունի նաեւ մտահոգիչ այլ հարցեր՝ կապված Մեղրու եւ Ագարակի տարածաշրջաններում հանքերի շահագործմամբ պայմանավորված բնապահպանական խնդիրներով, ինչպես նաեւ արտագաղթով, որ սպիտակ եղեռն կարելի է որակել, մեծագույն չարիք հատկապես սահմանամերձ գյուղերի համար:

Հոգու խորքում բացված վերքը, սակայն, ոչ մի կերպ չի սպիանում, քանզի 53 տարվա ուսուցչին կենսաթոշակի ուղարկելով՝ շնորհակալական ոչ մի խոսք անգամ չասացին, կարելի է ասել՝ չգնահատեցին այդքան տարիների նվիրական գործունեությունը: Միայն բավարարվեցին Կարճեւան համայնքի պատվավոր քաղաքացու հավաստագիր տալով, մինչդեռ ամենուրեք շռայլում են մեդալներ ու այլ պարգեւատրումներ: Ինչեւէ, իր ապրած եւ ոչ մի օրվա համար նա չի ափսոսում, քանզի այն, ինչ արել է, արել է սրտանց, առանց մեծարման ակնկալիքի, իր կյանքի նշանաբան ընտրելով սերն ու անմնացորդ նվիրումը դպրոցին ու ընտանիքին:

Ամեն օր արթնանալով եւ հայացքը հառելով այն կետին, որ տարիներ ի վեր իր ոգեշնչման աղբյուրն է եղել՝ նա մի թաքուն սպասումով ակնկալում է վերադարձ հարազատ ակունքներին…

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թափթփվածության հանդես

Ինչո՞ւ է պաշտոնանկ արվել «Մանկական գեղագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գորիսի մասնաճյուղի տնօրենը

ԻՐԱՎԻՃԱԿ

Ինչպես արդեն հաղորդել ենք «Սյունյաց երկրի» 2013թ. սեպտեմբերի 3-ի համարում՝ Մարտուն Զաքարյանն ազատվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Մանկական գեղագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գորիսի մասնաճյուղի տնօրենի պարտականություններից: Այդ առիթով օգոստոսի 22-ին Գորիս էր ժամանել ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Իգիթյանը, ով Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի հետ քննարկել է Գորիսի մասնաճյուղում ստեղծված անմխիթար վիճակը: Մասնաճյուղի նոր տնօրեն է նշանակվել Արամ Մաշուրյանը, սակայն, այդ հրամանի կիրարկումը ժամանակավորապես (մեզ համար անհասկանալի պատճառներով) դադարեցվել է: Մարտուն Զաքարյանի պաշտոնանակությունը տարաբնույթ արձագանքների տեղիք է տվել Գորիսում: Ինքը՝ Մարտուն Զաքարյանը, դա համարում է մասնաճյուղի շենքն օտարելուն միտված քայլ, անհիմն որոշում եւ այլն: Գեղագիտական կենտրոնի ղեկավարությունը, մինչդեռ, հայտարարում է, որ Մարտուն Զաքարյանն ինքնամեկուսացվել է իր պարտականություններից, եղած հաստիքներում նշանակել է իր հարազատներին եւ, ընդհանուր առմամբ, կազմալուծել է մասնաճյուղի գործունեությունը: Տարակարծությունները հասել էին այնպիսի հանգրվան, որ Մարտուն Զաքարյանի կողմնակիցները փորձում էին հանրահավաքի միջոցով բողոքել տնօրենի որոշման ու պահվածքի դեմ, ով, ըստ Մարտուն Զաքարյանի, սոցիալական ցանցերից մեկով անձնական վիրավորանք է հասցրել մասնաճյուղի տնօրենին:

Մանկական գեղագիտական կենտրոնի մասնաճյուղի շուրջ տեղի ունեցող զարգացումներին ծանոթանալու համար «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը սեպտեմբերի 6-ին այցելեց Գորիս: Օրը պատահական չէր ընտրված. «Մանկական գեղագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներն այցելել էին մասնաճյուղ՝ գույքի եւ փաստաթղթերի հանձնում-ընդունում կատարելու համար: Եվ մենք, օգտվելով առիթից, լսեցինք կողմերի կարծիքը ստեղծված իրավիճակի շուրջ:

Էմմա Ասատրյան, կենտրոնի ուսումնամեթոդական բաժնի վարիչ. *«Վերջին չորս տարում Մարտուն Զաքարյանը ոչինչ չի արել մասնաճյուղի գործերը վարելու, մասնաճյուղը զարգացնելու ուղղությամբ: Քանիցս այստեղ են եկել կրթության եւ գիտության նախարարությունից ու տեսել, որ մասնաճյուղի դուռը փակ է, մուտքից սկսած՝ շենքը կեղտի մեջ է: Եկել ենք որոշելու՝ թե ինչպես կարող ենք մասնաճյուղը հանել ամոթալի վիճակից: Հավատացեք, տարրական հարցերն անգամ այս մասնաճյուղում չեն լուծվում, վեց հաստիքից մեկը հավաքարար է, իսկ շենքն ամբողջապես խարխափում է կեղտի մեջ: Մարտուն Զաքարյանը ժամանակին վատ չի աշխատել: Երբ 1980-ականներին աշխատանքի անցավ՝ շատ լավ գործեր արեց, եւ ոչ ոք չի կարող դա հերքել: Վերջին չորս տարում մասնաճյուղը բարձիթողի վիճակում է: Ինքն ընդամենը դպրոցներ է հաճախում ու այնտեղ աշխատում: Եվ այն, ինչ կապված է մասնաճյուղի ուսումնական գործունեության հետ, ծախող-*

Մարտուն Զաքարյան

«ՍԵ» լրագրող Ն.Դավթյանը զրուցում է Էմմա Ասատրյանի հետ

ված է: Վերջին տարիներին մասնաճյուղը չի մասնակցել որեւէ ցուցահանդեսի: Մարտունն այս մասնաճյուղում մանկավարժ կարող է աշխատել այլեւս, ինչը եւ նրան առաջարկել ենք: Թո՛ղ աշխատի, խումբ պահի, բայց հրաժարվում է մեր առաջարկից՝ չցանկանալով պատասխանատվություն վերցնել: Հարցին, թե ի՞նչ է արվել կենտրոնի կողմից, որ մասնաճյուղի տապալումը չկայանա, այսպես կարող եմ պատասխանել՝ Մարտունը տարիներ շարունակ եկել ու ներկայացրել է, որ ամեն ինչ հրաշալի է, աշխատանքներ են տարվում, երեխաները կանոնավոր հաճախում են, ցուցահանդեսներ են կազմակերպում եւ այլն: Նա մեր վաղեմի աշխատողն է, եւ չէինք կարող չհավատալ, չվստահել: Ինչ է, անընդհատ պիտի գայինք Գորի՞ս, իսկ վստահությո՞ւնը: Դուք հարցնում եք, թե ի՞նչ ենք մենք արել. տարածք ենք տվել, նյութեր ենք տվել, վեց հաստիք ենք տվել, որից մեկը նրա կինն է զբաղեցրել, մյուսը՝ քենին, մյուսը՝ բաջանաղը… իսկ կատարված աշխատանքը չի երեւում: Ինչ վերաբերում է շենքը վաճառելու մասին խոսակցություններին, ապա դա զրպարտություն է»:

Մարտուն Զաքարյան, մասնաճյուղի նախկին տնօրեն. *«Վերջին շրջանում, ընդհակառակը, իմ աշխատանքներն ավելի էին ակտիվացել: Ես երեսին ասող մարդ եմ, ճիշտն ասող. գուցե դա չէ իրենց դուր գալիս: Ամբողջ քաղաքը ծանր է տանում իմ պաշտոնաթողությունը: Ինձ համար էլ դժվար է՝ 30 տարի երեխաների հետ աշխատելուց հետո չեմ կարող ուրիշ գործով զբաղվել: Իսկ ինձ անձնական վիրավորանք հասցնելու համար (պարոն Իգիթյանն է ինձ վիրավորել) մի խումբ ակտիվիստներ պատրաստվում են բողոքի ակցիայի»:*

Կառլեն Կարապետյան, ՊՈԱԿ-ի փոխտնօրեն. *«Շենքը կենտրոնի սեփականությունն է, շենքի օտարման մասին խոսք լինել չի կարող: Ինքներդ տեսեք, թե ինչ կեղտի մեջ է խրված մասնաճյուղի ամբողջ տարածքը: Պատկերացնո՞ւմ եք, շենքում նույնիսկ զուգարան չկա, Դուք Ձեր երեխան կբերե՞ք նման հաստատություն: Գորիսում, հատկապես ամռանը, հազարավոր զբոսաշրջիկներ են լինում, ինչո՞ւ նրանք չպետք է այցելեն նաեւ մեր մասնաճյուղի պատկերասրահ: Մենք ընդամենն ուզում ենք մասնաճյուղը կարգի բերել, ժամանակակից արվեստի գործերի մի մասը Կապանից տեղափոխել այստեղ: Հանրապետության նմանատիպ մասնաճյուղ ամեն մի ուսումնական տարում ունենում է 150-300 աշակերտ: Հարցրեք Մարտուն Զաքարյանին՝ այստեղ քանի՞ աշակերտ է հաճախում: Կարճ ժամանակ անց ինքներդ կտեսնեք, թե ինչպես է վերականգնվել եւ ինչպիսի տեսք է ստացել Գորիսի մասնաճյուղը»:*

….Կենտրոնի եւ մասնաճյուղի ներկայացուցիչների հետ մեր զրույցը շարունակվեց մոտ երկու ժամ: Հնչեցին, ինչպես տեսնում եք, իրարամերժ փաստարկներ ու հիմնավորումներ, որոնցից յուրաքանչյուրը լրացրեց եւ ամբողջացրեց գեղագիտական կենտրոնի Գորիսի մասնաճյուղում ստեղծված վիճակի մասին մեր պատկերացումը: Եվ, առանց վերապահումի, կարող ենք արձանագրել, որ մասնաճյուղի գործունեությունը, հիրավի, տապալված է լիովին: Մասնաճյուղի ե՛ւ պատկերասրահը, ե՛ւ կից սենյակները կորած են կեղտի ու փոշու մեջ: Գեղագիտական կոչված այդ հաստատությունում գեղեցիկի ոչ մի նշույլ: Այդպես էլ չկարողացանք ճշտել, թե ովքեր են մասնաճյուղի վեց աշխատողը: Մարտուն Զաքարյանի՝ նախորդ տարիների ակտիվ գործունեության մասին խոսակցությունները, անշուշտ, չենք կարող հերքել, բայց փաստը, որ նա այլեւս չի կարող մասնաճյուղի՝ շատ թե քիչ նորմալ տնօրեն լինել, հաստատվեց մասնաճյուղի գործունեության ամեն մի ոլորտի առնչվելիս:

Որքան զարմանալի է Մարտուն Զաքարյանի գործունեությունը, այնքան էլ (գուցե եւ ավելի) տարօրինակ է կենտրոնի անտարբերությունը: Ասում են՝ չորս տարի է, ինչ Մարտուն Զաքարյանը չի աշխատում, բայց չորս տարի շարունակ նրա անգործությունը հանդուրժվել է: Չորս տարի շարունակ նրանք մասնաճյուղի մասին պատկերացում են կազմել Մարտուն Զաքարյանի հավաստիացումներով:

Կենտրոնի պատասխանատուներն անգամ ստույգ պատասխան չունեն կարեւոր հարցին, թե քանի աշակերտ է ունեցել մասնաճյուղը՝ ըստ ուսումնական տարիների, աշակերտներից քանի՞սն են պետպատվերով սովորել, քանիսը՝ վարձավճարով, որքա՞ն վարձավճար է հավաքվել, ի՞նչ է արվել հավաքված վարձավճարը: Մի խոսքով՝ «Մանկական գեղագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գորիսի մասնաճյուղում մենք բախվեցինք թափթփվածության, տնավարության, կամայականության հաստատուն շքահանդեսի: Եվ, այդուամենայնիվ, ուզում ենք հավատալ կենտրոնի ներկայացուցիչների հավաստիացումներին, որ կարճ ժամանակ անց մասնաճյուղը նոր տեսքով, նոր գործերով ու աշխատանքային նոր ռիթմով կներկայանա Գորիսի հանրությանը: Տեսնենք:

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցը

ՄԱՐԶԱԿԱՆ

Օգոստոսի 21-ին «Սյունյաց երկրի» խմբագրությունը հյուրընկալեց Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանին: Մի մարդ, ով մեծ նվիրում ու հոգատարություն է դրսեւորում ե՛ւ իր սաներին, ե՛ւ իր աշխատանքին: Մարդ, ով անհանգստանում է աճող սերնդի զարգացման ու առողջ ապրելակերպի համար:

Մերուժան Աթայան

Պարոն Աթայանի այցը նպատակային էր: Ոգեւորված, ինչ-որ չափով նաեւ մտահոգված մարզիչն անկեղծ զրուցեց:

Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցը հիմնադրվել է 2005թ. մարտին: Նպատակը հետեւյալն է՝ զարգացնել մարզածեւերի տարածումը, կատարել ուսումնադաստիարակչական աշխատանքներ եւ մեծացնել առողջ սերունդ: Այսօր էլ մարզադպրոց է հաճախում 357 աշակերտ, 30- ը՝ Կապանում, իսկ 70-ն՝ Ագարակ քաղաքում: Պարապմունքները կատարվում են անվճար հիմունքով՝ ըստ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության: Մարզադպրոցը գործում է ութ տարի: Այն միակն է համայնքում, որ ենթարկվում

է նախարարությանը: Սկզբում գործել է հինգ սպորտաձեւ, բայց այսօր արդեն գործում է ինը սպորտաձեւ, ինչը ողջունելի է:

Մարզաձեւերը հետեւյալ են՝ գեղարվեստական մարմնամարզություն՝ 4-5 տարիքային խմբի համար, շախմատ՝ 6-8, ծանրամարտ՝ 14-15, բռնցքամարտ՝ 13-14, ըմբշամարտ՝ 12-13, ձեռքի գնդակ (հանդբոլ)՝ 8-9, բասկետբոլ՝ 8-9, ձյուդո եւ հունահռոմեական՝ 12-13:

Այս մարզաձեւերն ունեն համապատասխան մանկավարժական որակավորում ստացած մարզիչներ, ովքեր պարբերաբար վերապատրաստվում են:

Մարզադպրոցի աշխատակազմում ընդգրկված է 23 հոգի, այդ թվում նաեւ բժիշկ եւ բուժքույր, ովքեր պարտադիր ներկա են լինում օրվա պարապմունքներին:

Ի շնորհիվ բարեխիղճ մարզիչների աշխատանքի՝ մարզադպրոցի սաները յուրաքանչյուր տարի փայլուն արդյունքներ են ցուցաբերել ինչպես հանրապետությունում, այնպես էլ՝ հանրապետությունից դուրս:

Այսպես՝ 2000-01թթ. ծնված աղջիկները՝ 2012-13թթ. Հայաստանի ձեռնագնդակի ֆեդերացիայի մրցումներում գրավեցին առաջին տեղը: Մարզիչն Անահիտ Հայրապետյանն է:

2012թ. օգոստոսին 27-րդ միջազգային մրցաշարը կայացավ Սոչի քաղաքում՝ նվիրված Խորհրդային Միության հերոս Մարտիրոս Կարապետի Նագուլյանի հիշատակին: Այս մրցաշարում բռնցքամարտիկ Ռուբեն Հակոբյանը գրավեց 2-րդ պատվավոր տեղը (մարզիչ՝ Աշոտ Սադխյան):

2013թ. քաղաք Սիսիանում, փետրվարի 25-27-ը, ՀՀ վոլեյբոլի պատանիների եւ աղջիկների (1996-97թթ.) փնջային առաջնությանը մարզիկները գրավեցին 2-րդ տեղը:

2013թ. քաղաք Երեւանում, փետրվարի 27-ից մարտի 3-ը, ՀՀ ծանրամարտի պատանիների առաջնությանը մասնակցած Արամ Առաքելյանը, Արթուր Գրիգորյանը, Էրիկ Ներսիսյանը, Ռոմա Համբարձումյանը եւ Նորայր Ծատրյանն արժանացան խրախուսանքի:

Քաղաք Երեւանում մարտի 28-ից ապրիլի 2-ը տեղի ունեցավ ՀՀ ըմբշամարտի պատանիների առաջնությունը: Մարզիկ Արարատ Մանուչարյանը գրավեց 3-րդ տեղը:

Ապրիլի 13- 22-ը ՀՀ շախմատի պատանիների եւ աղջիկների եզրափակիչ առաջնությունը կայացավ: Շախմատիստ Մարիետա Սեւաչյանը զբաղեցրեց 5-րդ տեղը:

Քաջարանում՝ մայիսի 6-7-ը, տեղի ունեցավ Քաջարանի համալիր ՄՊՄԴ-ի գեղարվեստական մարմնամարզության նախադպրոցական առաջնությունը: Մասնակցեց 15 մարզուհի:

Երեւանում՝ մայիսի 16-19-ը Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ձյուդոյի դեռահասների բաց առաջնությունում մարզիկներ Ալեքս Մարտիրոսյանը եւ Հրայր Մարգարյանը գրավեցին 3-րդ տեղը:

Մայիսի 25-28-ը Վանաձորի պատանիների ծանրամարտի բաց առաջնությունում մարզադպրոցի սաներ Արթուր Գրիգորյանը եւ Արթուր Հովաննիսյանը գրավեցին առաջին տեղը: Գեղարվեստական մարմնամարզության սանուհիները նույնպես մեծ նվաճումներ ունեցան. Մարիամ Անդրեասյան՝ առաջին տեղ, Սառա Առաքելյան՝ երկրորդ տեղ, Եվա Հարությունյան՝ երրորդ տեղ: Մարզիչներն են՝ Ինգա Փարսադանյանը եւ Լիլիթ Աբգարյանը:

Հաջողություններն առկա են հատկապես շախմատի բնագավառում:

– Եթե տարիներ առաջ մեկ մարզիկի հաջողությունը մեզ համար հայտնություն էր, ապա այսօր մեկի փոխարեն հաջողություններ են գրանցել յոթ եւ ավելի մարզիկ: Այդ հաղթանակները պայմանավորված են մարզչի՝ Արտաշես Գրիգորյանի մարդկային որակներով, աշխատանքի նկատմամբ անսպառ եռանդով, սրտացավ մոտեցումով, – իր խոսքում նշեց մարզադպրոցի թիվ մեկ պատասխանատուն:

Մարզադպրոցի հաջողություններից մեկն այն է, որ նրա սաները մայրաքաղաքում այսօր ստանում են համապատասխան կրթություն: Արարատ Մանուչարյանը՝ ըմբշամարտիկ, ավարտելով սպորտդպրոցը, այժմ սովորում է Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում: Երկրորդ կուրսի ուսանող է: Մարզիկը մեծ ոգեւորությամբ է խոսում իր դպրոցի մասին եւ շնորհակալական խոսք հղում դպրոցի կոլեկտիվին՝ հատկապես իր առաջին մարզչին՝ դպրոցի տնօրեն Մերուժան Աթայանին: Արարատի համար 2013թ. բեղուն եղավ: Հարեւան Վրաստանում 45կգ քաշային կարգում գրավեց առաջին տեղը: Այնուհետեւ Հայաստանի հավաքականի անդամը մասնակցեց Դաղստանում միջազգային մրցաշարին՝ դարձյալ գրավելով առաջին տեղը:

Պարոն Աթայանը նշեց եւս մեկ ըմբշամարտիկի՝ Հայկ Թումանյանի հաջողությունների մասին: Մարզիկն ունենալով լեզվական եւ լսողական խնդիր՝ մասնակցեց Եվրոպայի ըմբշամարտի առաջնությանը եւ դարձավ Հայաստանի չեմպիոն:

Վերոնշյալ հաջողություններով հանդերձ՝ մարզադպրոցում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումով կբազմապատկվեն սաների հաջողությունները:

Սուղ են մարզադպրոցի պայմանները: 2005թ. մինչեւ 2007թ. մարզումներն անցկացվում էին Քաջարանի կոմբինատի մարզադահլիճում, որը չուներ անհրաժեշտ պայմաններ: Այն ենթակա էր վերանորոգման: Հետագայում սպորտի եւ երիտասարդության հարցերի ու կրթության եւ գիտության նախարարությունների համաձայնությամբ մարզումները մինչ այսօր կատարվում են նախկին ռուսական դպրոցի մարզադահլիճում: Այստեղ եւս պայմանները լիարժեք չէին: Սակայն տնօրենը, հայթայթելով որոշակի գումար՝ մոտ 500 հազար դրամ, կարողացավ բարեփոխումներ կատարել…

– Որքան էլ որ բարեփոխումներ կատարվեն, այնուամենայնիվ մարզադպրոցը պետք է ունենա իր առանձին մասնաշենքը, – մտահոգված ասաց տնօրենը, – **քանզի այլ դահլիճները, նրանցում տեղակայված մարզագույքը՝ չհամապատասխանելով մարզադպրոցի չափանիշներին, մարզումների ընթացքում դառնում են ոչ պիտանի, իսկ, օրինակ, ըմբշամարտի համար մեր ունեցած գորգն այլ պայմաններում լիարժեք չենք կարողանում օգտագործել:**

Տնօրենը ցավ է ապրում, երբ մասնավոր խմբակները վճարովի են եւ ունեն ավելի լավ պայմաններ, իսկ մարզադպրոցը, երբ երեխաների ուսուցումն ու մարզումն անվճար է իրականացնում եւ ապահովված է որակյալ կադրերով, գտնվում է անմխիթար վիճակում:

Քաջարան քաղաքը, որ աշխարհին հայտնի է իր հարստություններով, այսօր կարող է իր իսկ քաղաքում կառուցել առողջ ապրելակերպի ամրապնդմանը նպաստող մի մարզօջախ, մինչդեռ…

Ինչեւէ, ուրախալի է, որ յուրաքանչյուր լավ աշխատանք խրախուսվում է: Այդ են փաստում այն բոլոր պատվոգրերն ու շնորհակալագրերը, որոնց արժանացել է մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանը: Հուսով ենք, որ առաջիկայում կլուծվեն մարզադպրոցի առջեւ ծառացած խնդիրները:

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԻՆԳՇԱԲԹԻ • 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 27 (300)

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ. «Երազանքս է գրել Մեղրու պատմությունը»

Հարցազրույց ԵՊՀ հայ եկեղեցու պատմության եւ եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու եւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Աշոտ Մանուչարյանի հետ

Սկիզբը՝ էջ 2

պատրաստ են արդեն:

– Անպայման կհասցնենք, քանի որ նոր չէ, որ զբաղվում ենք այդ գործով: Հիսուն տարի է, որ, հնարավոր բոլոր եղանակներով, հավաքվում են Մեղրու տարածքի վիմագրական նյութերը:

– Դուք նույնպե՞ս զբաղվել եք այդ գործով:

– Քսան տարի առաջ եմ սկսել դրանով զբաղվել: Եվ արդեն երկու հոդված ունեմ՝ Մեղրու վիմական արձանագրություններին նվիրված: Ավելի շատ զբաղված եմ եղել Շիրակի ու Արագածոտնի վիմագրերի հավաքմամբ եւ չեմ կարողացել Մեղրու հետ կապված ծրագրերս ավարտին հասցնել: Այս ամռանն էլ եկել եւ աշխատել եմ Մեղրիում: Եվ մոտ հարյուր նոր արձանագրություն եմ հավաքել: Այսօր արդեն հօդս է ցնդել հնագիտության մեջ շրջանառվող այն կարծիքը, թե իբր Մեղրիում չկան վիմական արձանագրություններ: Նման թյուր կարծիքի համար հիմք է ծառայել նաեւ Մեղրու քարատեսակների առավել կարծր բնույթը, որը, ի տարբերություն Արարատյան հարթավայրի տուֆի, փորագրման համար այնքան էլ բարեհարմար չէ: Բայց մեր նախնիները, կարեւորելով արձանագրությունների նշանակությունը գալիք սերունդների համար, ջանք չեն խնայել դրանք թողնելու դժվար մշակվող քարերի վրա:

– Կարո՞ղ ենք ասել, որ սյունիքյան թեման միշտ էլ Ձեր ուշադրության կենտրոնում է եղել: «Սյունյաց երկրի»՝ Վահանավանքին նվիրված կոթողային համարում տեղ էր գտել նաեւ Ձեր մի ուսումնասիրությունը՝ «Վահանավանքի վիմագրերը հայ եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ» վերտառությամբ: Բայց կուզենայինք այսօր առավել շատ զրուցել Մեղրուն առնչվող հարցերով: Արդեն ասացիք՝ երկու հոդված եք հեղինակել Մեղրու վիմագրերի վերաբերյալ:

– Մեկը շատ հետաքրքիր արձանագրության մասին է՝ Ախպերջանյանների տան բակի սալքարի վրա հայտնաբերված (Ագարակում): Առհասարակ 19-րդ դարի արձանագրությունները կարեւորվում են նրանով, որ եզակի տեղեկատվություն են իրենց մեջ պարունակում: Մեր վկայակոչած արձանագրությունը հացի թանկության մասին է: Այդ արձանագրությունն եմ հրապարակել: Մյուս հրապարակումս Մեղրու շրջանի արեւմտյան հատվածի վիմագրերի մասին է: Հիմա արդեն Մեղրու տարածքի ուսումնասիրությունն ինձ համար առաջնային է, քանի որ Շիրակում եւ Արագածոտնում ավարտել եմ պլանային աշխատանքները:

– Իսկ ի՞նչ փուլում է Մեղրու վիմական արձանագրությունների հավաքման ընթացքը:

– Դրանք մշակման փուլում են, որից հետո կտրամադրեմ պրոֆեսոր Գրիգորյանին: Ես դրանք կարող եմ տրամադրել նաեւ Նաիրա Հայրապետյանին, ով, կարծեք, ուզում է Մեղրու վիմագրերի հարցը դարձնել դիսերտացիայի թեմա: Ես չէի պատկերացնում, որ Մեղրիում կգտնվի մեկը, ով այդքան հանգամանալից ծանոթ է շրջանի հուշարձաններին: Հիրավի, Նաիրա Հայրապետյանը հրաշալի գիտի Մեղրու հուշարձանները, լավագույնս է ընթերցում վիմական արձանագրությունները:

– Ուրիշ ի՞նչ ուշագրավ վիմագրեր կարող եք հիշատակել՝ Մեղրուն առնչվող:

– Վանքի եկեղեցու պատին ագուցված 851թ. արձանագրությունը, Ափկեզի տարածքում գտնված խաչքարը՝ թվագրված 752 թվականով, որը հավակնում է լինել Հայաստանի տարածքի թվակիր հնագույն խաչքարը: Կան նաեւ հետաքրքիր տապանագրեր, շինարարական բնույթի գրեր (օրինակ՝ Թոսի եկեղեցու հարավային մուտքի բարավորին պահպանված շինարարական արձանագրությունը 1693 թվականից):

– Ինչպե՞ս եք վերաբերում Հիգերակ-Ագարակի եկեղեցու քանդման ու տեղափոխման գաղափարին: Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ եկեղեցին վիմական արձանագրությունների առումով:

– Ցավոք, նման օրինակներ ունենք հենց Սյունիքից: Նկատի ունեմ Կավարտի եկեղեցին, որ հանքավայրի շահագործման նպատակով քանդվեց ժամանակին: Զրի տակ մնաց Տոլորսի եկեղեցին…

Ագարակի եկեղեցին, ի դեպ, շատ հետաքրքիր կառույց է, եւ պետք է որեւէ կերպ փրկել այն: Հիշում եմ ոմն փակագիր Սարգիսի գրվածքը, որ տեղ է գտել Սուրեն Սառուսյանի հոդվածում՝ փակագրությանը նվիրված: Այնտեղ կան ուշագրավ այլ վիմագրություններ եւս:

– Հետաքրքիր է, նորահայտ ի՞նչ հուշարձաններ կան Մեղրու տարածքում:

– Հիմնականում շիրմաքարեր են, եկեղեցիների պատերին ագուցված տապանաքարեր: Կառավարության կողմից հաստատված համապատասխան ցուցակներում տեղ չգտած մի կամուրջ տեսանք Լիճք-Տաշտուն գյուղերի խաչմերուկի մերձակայքում՝ միաթռիչք, մեծ բարձրությամբ, որ կառուցել են Քարամյանները կամ Չարամյանները՝ պարսից հպատակության տարիներին: Ալվանքում էլ կամարակապ մի շինություն տեսանք՝ կիսավեր, հարավային եւ արեւելյան պատերն ավերված: Գյուղացիներից ոմանց կարծիքով այն ժամանակին մզկիթ է եղել, մյուսների կարծիքով՝ թոնրատուն, գինետուն, քարավանատուն՝ ինչ-որ չափով համարժեք Ագարակի քարավանատանը, որի նախնական տեսքը նույնպես չի պահպանվել (արեւմտյան կողմում քարավանատան պատերն են պահպանվել միայն):

– Եվ վերջին հարցը. Մեղրու պատմությանն առնչվող նոր հրապարակումներ, գրքեր ունե՞նք, թե՞ Մեղրու մասին պատմաբանների, հնագետների լռությունը շարունակվում է:

– Ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր Սամվել Մկրտչյանն է հրատարակության պատրաստում գիրք, որում կա անդրադարձ Մեղրուն: Դրա հիմքում հեղինակի՝ վերջին տարիներին շրջանի վերաբերյալ հավաքած նյութերն են:

Բավականին շատ նյութեր ենք տեսնում ինտերնետային ամենատարբեր կայքերում: Եվ, ցավալիորեն, այդ նյութերի մեծագույն մասն աչքի է ընկնում ակնհայտ աղավաղումներով, անգրագիտությամբ: Շատ հեշտությամբ դրանց հեղինակները, օրինակ, կարող են 12-րդ դարի հուշարձանը ներկայացնել 17-րդ դարի հուշարձան:

Եվ, օգտվելով առիթից, շնորհակալությունս եմ հայտնում Նաիրա Հայրապետյանին, Պողոս Մաթեւոսյանին, Գրիգոր Պողոսյանին, Սոսին (ազգանունը չեմ հիշում), ովքեր 2013թ. հուլիս ամսին աջակցեցին մեզ՝ դժվարամատչելի ճանապարհներով Մեղրու հնավայրեր այցելելու համար:

Հարցազրույցը՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Վերջերս Երեւանի պետական բժշկական համալսարանի N1 հիվանդանոցի ընդհանուր եւ ինվազիվ սրտաբանության կլինիկայում ենթարկվեցի սրտի վիրահատության, ինչը հնարավոր եղավ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի եւ Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի աջակցության եւ հովանավորության շնորհիվ, որի համար խորին երախտագիտություն եմ հայտնում նրանց:

Սամվել Հայրապետյան
Կապան քաղաքի բնակիչ

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Ø ì °Ë ²È°øê²ÜÚ²Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 16.10.2013թ.:

Ալվարո Անտոնյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց տեխնիկական գիտությունների թեկնածու Ալվարո Անտոնյանը: Ծնվել է 1950 թվականին՝ Կապանում: 1972թ. գերազանցությամբ ավարտել է Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը (ներկայումս՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան)՝ «Հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ: Այնուհետեւ «Հաշվողական տեխնիկա» ամբիոնում աշխատել է որպես լաբորանտ, դասախոս: 1974թ. ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտել է 1978թ.: Նույն տարում «Ֆլոտացիոն ֆաբրիկաների ավտոմատացված կառավարում» թեմայով պաշտպանել է գիտական թեզ եւ ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Այնուհետեւ շարունակել է աշխատանքն ամբիոնում, որպես դոցենտ: 1982թ. գործուղվել է Դանիա եւ մեկ տարի աշխատել Դանիայի թագավորական համալսարանում: 1984թ. իր նախաձեռնությամբ եւ ջանքով ստեղծել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կապանի մասնաճյուղը, որը եւ ղեկավարել է մինչեւ 1997թ.: Ակտիվ աշխատանք է տարել Սյունիքի մարզի լեռնային արդյունաբերության մեջ գիտության նվաճումների ներդրման գործում, կոորդինացրել գիտական աշխատանքները լեռնարդյունաբերական ձեռնարկություններում: 1997թ. Սյունիքում իր նախաձեռնությամբ ստեղծել է ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) հարավային բաժանմունքը, որը ղեկավարել է մինչեւ 2002թ.: 2002թ. նշանակվել է ՀՀ ՍՊԱԾ-ի պետ եւ միաժամանակ դասավանդել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում:

Ալվարո Անտոնյանը մասնակցել է բազմաթիվ գիտական կոնֆերանսների, սեմինարների եւ գիտաժողովների, որտեղ հանդես է եկել զեկուցումներով: Հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատանքի, այդ թվում նաեւ գյուտերի, գրքերի:

ՀՀԿ Կապանի կառույցի հիմնադիրներից է: Ալվարո Անտոնյանն ամուսնացած էր, ուներ երեք զավակ եւ երեք թոռ:

Ալվարո Անտոնյանի հիշատակն անմար կմնա ճանաչողների սրտերում:

Մի խումբ ընկերներ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկրի» խմբագրությունը ցավակցում է Արմեն Գրիգորյանին՝ սիրելի մոր՝ Անահիտի անժամանակ մահվան առիթով:

Մեծահասակների կրթական կենտրոն Սիսիանում

Սկիզբը՝ էջ 4

Ըստ Լուսինե Խառատյանի՝ Սիսիանում հիմնված կենտրոնի նպատակն է աջակցել, որ մարդիկ կատարելագործեն իրենց մասնագիտական կարողությունները: Սա քայլ է, որը միտված է կրճատել գործազրկությունը եւ մարդկանց շարունակաբար վերապատրաստվելու հնարավորություն ընձեռել:

Մեծահասակների կրթական կենտրոնի առկայությունը սիսիանցիների համար կարեւոր է համարում նաեւ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: Ըստ համայնքի ղեկավարի՝ մեծահասակների կրթության կենտրոնը կօգնի ձեռք բերել աշխատաշուկայի առաջարկին համապատասխան հմտություններ եւ ավելի հեշտ աշխատանք գտնել: **«Կարեւոր է նոր աշխատատեղերի առկայությունը: Աշխատակիցները միջինը 80,000 դրամ աշխատավարձ կստանան: Պակաս կարեւոր չէ նաեւ այն փաստը, որ, ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Սիսիանում մասնագետների խնդիր ունենք՝ ատաղձագործի, զոդողի, մեխանիզատորի եւ այլն: Կենտրոնի առկայությունը Սիսիանում կլրացնի այդ բացը»,** – նշեց Աղասի Հակոբջանյանը:

Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը՝ առաջիկա մեկ տարում կվերապատրաստվեն ուսուցանող մասնագետներ, ովքեր ստացած գիտելիքները կփոխանցեն ցանկացողներին:

«Կախված պահանջարկից՝ կենտրոնն ինքն արդեն կառաջարկի կրթական կուրսեր: Առաջիկայում

կլինեն ֆրանսերենի, անգլերենի, համակարգչային գրագիտության, հաշվապահական դասընթացներ: Դասընթացներ կազմակերպելիս հաշվի է առնվելու քաղաքի աշխատաշուկայի պահանջարկը», – ասաց Լուսինե Խառատյանը: Նա չի բացառում, որ հետագայում գործեն նաեւ արհեստագործական խմբեր, օրինակ՝ կահույքագործների, եռակցողների: Այստեղ պակաս կարեւոր չէ նաեւ բնակչության շահագրգռվածությունը:

«Ես կարծում եմ՝ այս կենտրոնը շատ կարեւոր է Սիսիանի համար: Կենտրոնը հնարավորություն կտա մեծահասակներին, ովքեր ստացել են հիմնական կրթությունը, սովորել կյանքի համար: Մենք Սիսիանի մեր գործընկերների հետ քննարկել ենք, թե բնակչության շրջանում ինչ դասընթացների կարիք կա: Կարիքներից ելնելով՝ նոր վերապատրաստումներ կլինեն, ուստի ապագայի համար մենք կարող ենք ունենալ շատ-շատ տարբեր վերապատրաստումներ», – նշեց «DVV international» կազմակերպության տարածաշրջանային տնօրեն Մաթիաս Կլինգենբերգը:

Կենտրոնի տարածքի բարեկարգման, գույքի եւ տեխնիկայի ձեռք բերման համար ծախսվել է 17 մլն դրամ:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ